

«ՈՒԽՏ ԱՐԱՐԱՏԻ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

Թիվ 3, հունիս, 2005



ՈՒԽՏ ԱՐԱՐԱՏԻ

General ANDRANIK
1865 - 1927
A LA MEMOIRE DES VICTIMES DU
GENOCIDE ARMENIEN 1915
ՀԱՅ ԿԱՅՐԱՍՏԻ ԿԱՐԵՎՈՒՄԻ
ՄԵՆ ԵՂԵՌԻ 90-ԱՄՅԱԿՆ,
ԵՐԵՎԱՆԻ ԱՐԱՐԿԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՉԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՆ ԲԱՐԵՎՈՒ
ԿԱՐ ՖԻՐԱՍԻԱԿԻ ՓՐԵՍԻՆԻ
ՈՒՐԵՆԳՈՒ ՔԱՂԱՔՆ




Ջորավար Անդրանիկի նոր հուշարձանի բացման մասին կարդացեք էջ 10-ում

Ամենամեծ ցանկությունս է, որ հայրենի հողում նոր դրված այս հիմնաքարը շրջապատված լինի մեր զինակից ընկերներով, լինեն նրանք Հայաստանից, թե Սփյուռքից: Մեր միասնությունն է լինելու մեր տան ամուր հիմքը, և այնքան ժամանակ, քանի դեռ այսպես ցրված ենք, մեր գործերի ընթացքը դժվար է լինելու: Չնայած՝ մենք այստեղ ենք՝ կողք-կողքի, սակայն Սփյուռքում հզոր ներուժ ունենք, ուզում ենք, որ այդ ուժը համախմբվի, գա Հայաստան և «Ուխտ Արարատի» հիմքի վրա՝ Արարատ լեռան աչքի առաջ, սկսենք մեր տունը կառուցել:

Մարտիրոս Ժամկոչյան

Հարցազրույցը՝ էջ 8-9



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինչո՞ւ «ՈՒՒՏ ԱՐԱՐԱՏԻ»	էջ 1	
Արցախյան ընտրություններ	էջ 2	Սուրեն Մանուկյան
Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր	էջ 3	Հայկ Ռեմոյան
Հնարավոր իրականություն	էջ 4	Արիս Ղազինյան
Մարմնավաճառները պատճառաւետականքային կապերի հանգույցներում	էջ 6	Լիանա Եղիազարյան
Ճանապարհի դեպի ժողովրդավարություն	էջ 7	Լիանա Եղիազարյան
Եթե պետք լինի, նորից կանեն...	էջ 8	Ջեմմա Բաղդադյան
Ձսաված ցասունը գտավ քարե նոր մարմնավորում	էջ 10	
Պսակ՝ հաղթանակի հետ	էջ 11	
Գրիգոր Աղաբալոյուն թուրքական «Flash TV» հեռուստաալիքի եթերում	էջ 12	Ռուզաննա Ադոյան
Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևը ԱՄՆ կոնգրեսում	էջ 13	
Խաղն արժե՞ր մոմերի լույսին	էջ 14	Նանե Սևան
Հայոց բանակ	էջ 16	Լիլիթ Հարությունյան
Երիտասարդությունը սիրում և սովորում է կրակել	էջ 17	Լիլիթ Հարությունյան
Գեղագիտական կրթությունն ու դաստիարակությունը մայրենի լեզվի ուսուցման գործընթացում	էջ 18	Ա. Ս. Հարությունյան
Դատարանը սառեցնում է Մելգոնյան վարժարանի փակման որոշումը	էջ 19	
Մեր կյանքի «Եղիցի լույս»-ը	էջ 20	Մարինե Մամյան
Առաջին ծիրանենին	էջ 21	Ոստանիկ Ադոյան
Հայ ժողովրդական բանահյուսության մարգարիտները	էջ 22	Կարմեն Ահարոնյան
Անանիա Շիրակացի	էջ 24	Աշխեն Գրիգորյան
Սուրբ Աստվածածին եկեղեցի	էջ 25	Գայանե Հովսեփյան
Կինոկատակերգությունը որպես ժանր	էջ 26	Հրաչյա Ջանիկյան
Հայ մասոն վաճառականներ	էջ 28	Խաչատուր Դադայան
Կարգուկանոն-կազմակերպվածություն	էջ 30	Արամ Ալեքսանյան
Հանգրվանից հեռու	էջ 31	Արմեն Թարյան
Հայ ոգին Կոստան Ջարյանի որոնումներում	էջ 32	Արթուր Անդրանիկյան
Հայոց բերդերը... Կաքավաբերդ	էջ 35	Սմբատ Հովհաննիսյան
Միջազգային պարերի դպրոց Lnu Անջելեսում	էջ 36	

ՈՒՒՏ ԱՐԱՐԱՏԻ
«Ուխտ Արարատի»
կազմակերպության
պարբերական

Տպաքանակը՝ 1000
Ծավալը՝ 4.5 տպ. մասնով

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Համարի թողարկման
պատասխանատու՝
Տիգրան Փաշաբեզյան

Ստորագրվել է
տպագրության
07. 07. 2005

Խմբագրության հասցեն՝
375023, Երևան,
Մաշտոցի 8
Հեռ. 56-71-50

OUKHT ARARATI
Official periodical of
“Oukht Ararati”
organisation

EDITORIAL BOARD

Responsible of the issue:
Tigran Pashabezyan

Address: 375023,
Yerevan,
Mashtots 8
Tel. 56-71-50

«Ուխտ Արարատի»
ամսագրից նյութեր
արտատպելիս
խնդրում ենք հղում
կատարել:



ԻՆՉՈ՞ՒՒՄ «ՈՒԽՏ ԱՐԱՐԱՏԻ»

Ավելի քան 30 տարի առաջ՝ 1970-ականների կեսերից, մենք զինվորագրվեցինք հայկական նորագույն զինյալ ազատագրական պայքարին: Գուրգեն Յանիկյանը 1973-ին հեռավոր մայրցամաքում պայքարի փող հնչեցրեց, ԱՍԱԼԱ-ն ստեղծվեց 1975-ին: Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի շարքերում մենք մասնակցեցինք Հայկական հարցի արդարացի լուծման համար մղվող պայքարին: Մեկ ու միասնական էին մեր նպատակներն ու պայքարի ուղին, սակայն տարբեր՝ մեր ճակատագրերը: Այդ պայքարում մենք ունեցանք նահատակներ, քաղբանտարկյալներ, այլևայլ բարդ ու դժվարին իրավիճակներում հայտնված մարտական ընկերներ, բայց կարողացանք անել հիմնականը. արթնացնել սփյուռքահայությանը, միջազգային դիվանագիտության մեջ վերարժարժել Հայկական հարցը, հայկական բռնագրաված հողերի խնդիրը, թշնամուն հասցնել շոշափելի հարվածներ, արձանագրել հաղթանակներ: Այդ անձնագրի պայքարի արդյունքն էր, ի վերջո, 1987-ին Եվրոխորհրդարանի ընդունած հայտնի որոշումը՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Դրա արձագանքներն են մինչև այսօր շարունակվող այն գործընթացները, երբ տարբեր երկրներ ճանաչում են հայոց արդար իրավունքները և անդրադառնում այդ խնդիրներին:

Եկան նոր ժամանակներ և, երբ սկսվեց Արցախյան ազատամարտը, սփյուռքում ծավալված նորագույն զինյալ ազատագրական պայքարը նախևառաջ ոգեշնչող դեր կատարեց հայրենական մեր ժողովրդի հայրենասեր հատվածների համար: Ապա մեր մարտական ընկերներից շատերը եկան Հայաստան, մասնակցեցին ազատագրական պայքարին, իրենց նպաստը բերեցին Արցախի ազատագրության սրբազան գործում: Ունեցանք նոր հաղթանակ՝ հանձնա Հայաստանի Հանրապետության անկախության և Լեռնային Ղարաբաղի ազատության: Թվում է՝ կարելի է և հանդարտվել, հանգստանալ, «վետերանի» կարգավիճակ ձեռք բերել, սակայն մենք այլ կարծիքի ենք:



Արդ, գալիս են նոր ժամանակներ: Տարածաշրջանը կրկին անհանգիստ վիճակում է: Հայկական երկու հանրապետություններն ապրում են կայացման դժվարին փուլ: Խնդիրները բազմաթիվ են. և՛ պետական, և՛ ներազգային, և՛ միջազգային: Շարունակվում է Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ-ի շրջափակումը: Շարունակվում են տնտեսական, իրավական, հասարակական - քաղաքական, բարոյախոգբանական դժվարությունները երկրի ներսում, արտագաղթը, ամենաթողությունը, հովանավորչությունը, օտարին ծառայելու գործընթացը: Տարածաշրջանում նոր դժվարություններ է ապրում վիրահայությունը, խանգարվում է ջախքահայության անդորրը: Այս ամենը պարտադրում է խորհել ամենակարևորի մասին, և մեզ թվում է, թե այսօր Հայաստանի Հանրապետության պետականության կայացումն է այնպես, ինչպես նշված է ՀՀ անկախության հռչակագրում, այսինքն՝ «որպես ինքնիշխան, ազատ, իրավական և սոցիալական պետություն»:

«Ուխտ Արարատի» կազմակերպության նախածեռնող խմբի անդամները հենց այդ հարցը կարևորեցին և զետեղեցին կազմակերպության առաջին հայտարարության մեջ, որը հետագայում հիմք կծառայի կազմակերպության ծրագրային դրույթները ձևակերպելու գործում: Մենք հասկանում ենք, որ առանց ամուր հայկական պետության հնարավոր չէ լուծել հայության առջև ծառայած որևէ ազգային ռազմավարական խնդիր: Ազգային պետական մտածողության ձևավորումից է սկսվում ամեն ինչ: Եվ մենք պատրաստ ենք զինվորագրվել այդ խնդրի իրագործմանը:

Սիս թե ինչո՞ւ՝ «Ուխտ Արարատի»՝ ԱՍԱԼԱ-ի նախկին քաղբանտարկյալների ու ազատամարտիկների կազմակերպություն: Սիս թե ինչո՞ւ՝ մենք համախմբվում ենք կրկին, մենք՝ տարբեր ճակատագրերի տեր, սակայն նույնը գաղափարներով, համոզմունքներով ու նվիրվածությամբ, մինչև վերջ ծառայելու մեր ժողովրդին ու հայրենիքին:



ԱՐՅԱԽՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամռան առաջին ամսին հայաստանյան ներքաղաքական դաշտի համեմատաբար հանգիստ պայմաններն առաջին պլան մղեցին ԼՂՀ-ում հունիսի 19-ին կայացած խորհրդարանական ընտրությունները, դրանց նախապատրաստական փուլի, ընթացքի և արդյունքների մեկնաբանություններով:

ԼՂՀ Ազգային ժողովի 33 պատգամավորական տեղերից 22-ն ընտրվում էին մեծամասնական ընտրակարգով, 11-ը՝ համամասնական: Ընտրություններին մասնակցում էին 6 կուսակցություն և մեկ դաշինք, իսկ մեծամասնական ընտրակարգով 22 տեղերի համար պայքարում էին 106 թեկնածու:

Ընդ որում՝ համամասնական ընտրակարգով պատգամավոր ունենալու համար դաշինքին հարկավոր էր ստանալ քվեների 15, կուսակցությանը՝ 10 տոկոսը: Հունիսի 24-ին ԼՂՀ ԿԸՀ-ի հրապարակած վերջնական արդյունքների համաձայն ընտրություններում հաղթանակ տարավ ներկայումս իշխանության ղեկը ստանձնած Արցախի ժողովրդավարական կուսակցությունը, որի առաջնորդ Արմեն Ղուկասը հունիսի 30-ին կայացած ԼՂՀ ԱԺ առաջին նիստի ժամանակ փակ՝ գաղտնի քվեարկությամբ ընտրվեց խորհրդարանի նախագահ:

Սակայն ընտրություններին նշանակալի հաջողության հասավ նաև նորաստեղծ «պետականամետ» «Ազատ Հայրենիք» կուսակցությունը:

Ձարմանալիորեն քիչ տեղ բաժին հասավ «Դաշնակցություն – Շարժում-88» ընդդիմադիր դաշինքին, որը, զրկվեց նույնիսկ խորհրդարանում խմբակցություն ստեղծելու իրավունքից:

Որոշ վերլուծաբանների կարծիքով, պատճառն իշխանամետ ուժերի ավելի մեծ ֆինանսական միջոցներն են և վարչական ռեսուրսները: Վերջինս, սակայն, չի կարող վճռորոշ համարվել, քանի որ համաձայն բազմաթիվ դիտորդական առաքելությունների ներկայացուցիչների, ընտրություններում էական խախտումներ չեն գրանցվել: Օրինակ՝ չեն եղել քվեաթերթիկների ապօրինի լրացումներ, ընտրողների ահաբեկում և դրա հետ կապված ընդհարումներ, արձանագրություններ կեղծելու դեպքեր, որոնցով ուղեկցվում է հետխորհրդային ցանկացած ընտրություն: Ավելին՝ որոշ դիտորդների կարծիքով այս ընտրությունները, միգուցե, լավագույններից են ԱՊՀ տարածաշրջանում:

Սա չափազանց կարևոր դիտարկում է: Չի կարելի ասել, որ ընտրությունները կատարյալ էին: Իդեալական ընտրություններ չեն լինում: Ղարաբաղյան ընտրությունների ամենատհաճ միջադեպն ընտրություններից հետո էր, երբ հունիսի 21-ին ծեծի են-

թարկվեց «Դաշնակցություն-Շարժում-88» դաշինքի համամասնական ցուցակում ընդգրկված Պավել Մանուկյանը: Շատ բացասական գնահատելով այս միջադեպը՝ զարմանք է հարուցում ՀՀ-ն: Այս կուսակցության ներկայացուցիչները, իրենց իրավունք վերապահեցին ընտրություններից հետո մի քանի կոշտ հայտարարություններ անելով, կասկածի տակ դնել ընտրությունների ազատ, արդար և թափանցիկ լինելը, նրանք նույնիսկ մինչև ընտրությունների մեկնարկը բացասական բնորոշում տվեցին: Անսպասելի էր այս կեցվածքը, քանի որ ՀՀ-ն, լինելով Ղարաբաղյան հարցում ամենածայրահեղ դիրքորոշման կողմնակից, բազմիցս ապացուցել է ազգային շահերը՝ սեփական կուսակցական հետաքրքրություններից բարձր դասելու կարողությունը:

Մի կողմ թողնելով այն հանգամանքը, որ Արցախի հետ կապված ցանկացած իրադարձություն մեր երկրի բոլոր էլիտաների ուշադրության կենտրոնում է և մեծապես իր արձագանքներն է գտնում մեր հասարակության մեջ, այս ընտրություններն ունեին ևս մեկ կարևոր նպատակ. դրանք լինելու էին «ցուցադրական»:

Աշնանը Ադրբեջանում կայանալիք նույնանման ընտրությունների սպասվելիք լարվածության ֆոնին, նրանք կոչված էին ցուցադրել ԼՂՀ-ի կայացած լինելը, հավատարմությունը ժողովրդավարական արժեքների նկատմամբ և եվրոպական չափանիշներին համապատասխան հասարակություն կառուցելու ընդունակությունը: Եվ որքան էլ միջազգային բազմաթիվ կառույցների ղեկավարներ և ներկայացուցիչներ հայտարարեն, որ չեն ճանաչում այս ընտրությունների լեգիտիմությունը, այնուամենայնիվ, նրանք ուշի ուշով հետևում էին ընտրությունների անցկացման որակին, դրանց համապատասխանությանը միջազգային, ժողովրդավարական չափանիշներին: Իսկ դրանք շատ հարցերում այսօր վճռորոշ են: Արցախի անկախության ձեռքբերման գործում անհրաժեշտ է կիրառել բոլոր միջոցները: Եթե ռազմական և իրավական հարթությունում հայկական կողմի փաստարկներն անթերի են, ապա այսօր պետք է դրանք ամրապնդել ևս մի խաղաքարտով՝ հաղթելով ադրբեջանական հավակնությունները նաև «դեմոկրատացման մրցապայքարում»: Այս ընտրությունները պետք է դառնան ԼՂՀ-ի և Ադրբեջանի միջև եղած էական տարբերության հիմնական ցուցանիշ:

Դա, երևի հաջողվեց:

ՍՈՒՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱԿԱՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Տեղեկատվական անվտանգության ապահովումը ժամանակակից աշխարհում պետությունների ու ազգերի գոյապահպանման և արդյունավետ կենսագործունեության ապահովման կարևորագույն երաշխիքներից մեկն է: Դրա բաղկացուցիչ և հիմնական տարրերից է հանդիսանում գրագետ կազմակերպված և լայնածավալ կիրառում ունեցող պետական քարոզչությունը՝ ուղղված տվյալ երկրի համար կենսական հարցերի շուրջ ձեռնտու միջազգային, ինչպես նաև ներհասարակական կարծիք ձևավորելուն:

Աշխարհում քարոզչության իրականացման ժամանակ կարևոր դեր և նշանակություն ունի տեղեկատվական պատերազմների (ՏՊ) գրագետ կազմակերպումն ու իրականացումը: Ընթացող զարգացումները գալիս են վկայելու տեղեկատվական պատերազմի խաղացած դերի կարևոր նշանակության մասին՝ այն դարձնելով արտաքին և ներքին քաղաքականության իրականացման կարևորագույն բաղադրիչներից մեկը:

ՏՊ-ի կարևորագույն բաղադրիչը, եթե չասենք հիմքը, հոգեբանական պատերազմն է, որն ունի իր կիրառությունը և իր առանձնահատկությունները՝ թե՛ խաղաղ և թե՛ պատերազմական գործողությունների ժամանակ: Հոգեբանական պատերազմների հիմնական նպատակը հակառակորդ կողմի վրա զանգվածային հոգեբանական ներգործություն ունենալն է:

1988-ից սկսած Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ թե՛ ադրբեջանական և թե՛ հայկական կողմերից իրականացվում է տարատեսակ քարոզչություն և հակաքարոզչություն: Անցած տարիների ընթացքում երկուստեք տարվող «քարոզչական պատերազմների» և դրանց արդյունքների նախնական ուսումնասիրությունը բերում է այն եզրակացության, որ ադրբեջանական կողմը, թեև ունի քիչ թե շատ մշակված մոտեցում այս ոլորտում, այդուհանդերձ, չի կարողանում համոզիչ և լիակատար կերպով ձևակերպել իր տեսակետները՝ չնայած քարոզչական աշխատանքի ինտենսիվությանն ու պետական հովանավորությանը: Սակայն, ասվածը չի վկայում այն մասին, որ ադրբեջանական քարոզչությունը որոշակի արդյունքներ չի արձանագրել՝ առաջին հերթին Ղարաբաղյան հակամարտությունում սեփական տեսակետների ամրագրման առումով:



Այսօր ադրբեջանական կողմի քարոզչական ակտիվությունը ստեղծել է հետևյալ բացատրությունները՝ հիմնադրելով հիմնական կոնկրետ բաղադրիչների շուրջ հետևողականորեն ներկայացնելով ելակետերը.

1. Հայաստանի՝ որպես ագրեսիվ երկրի ներկայացում, որը զավթել է Ադրբեջանի տարածքների 20 տոկոսը, իսկ 1 մլն ադրբեջանցի դարձել է փախստական:

2. Հայկական երկրորդ պետության ստեղծման բացառում՝ հղումներ կատարելով առաջնային ինքնորոշման ձևակերպմանը:

3. Հայկական ահաբեկչության ակտիվ լուսաբանում և դրա արդյունքում՝ Ադրբեջանի՝ որպես միջազգային ահաբեկչական ցանցի հանգրվանի քողարկում:

4. Հայաստանի՝ որպես շրջափակման արդյունքում փլուզված տնտեսություն և կիսասովորած բնակչություն ունեցող երկրի կերպարի մատուցում՝ հիմնականում ներքին քարոզչության նպատակով:

5. Հայկական բանակի հանդեպ ադրբեջանական բանակի ռազմական գերիշխանության թեզի ամրագրմանն ուղղված ջանքեր:

6. Հայոց ցեղասպանության պատմական իրողության հերքում և այս ոլորտում թուրքական քարոզչության հետ համատեղ տեսակետների մշակում:

7. Հայերի կողմից ադրբեջանցիների «ցեղասպանություն» իրականացնելու մտացածին թեզի զարգացում, երկրի առաջին դեմքերի կողմից ընդունված օրենսդրական ակտերի միջոցով:

8. Ղարաբաղյան հակամարտության՝ որպես կասպյան նավթի և գազի պաշարների արտահանմանը խոչընդոտող և տարածաշրջանի կայունությունը վտանգող գործոնի քարոզում:

Հայկական կողմի համար խիստ կարևոր է ուրվագծել քարոզչական և տեղեկատվական պատերազմներում իր ելակետերը, որոնք նվազ խոցելի և հիմնավորված պետք է դարձնեն հիմնախնդիրը միջազգային հանրությանը ներկայացնելու ընթացքում: Այդպիսի համակարգված աշխատանք կազմակերպելու համար խիստ անհրաժեշտ է լրջագույն ուշադրություն դարձնել պետական ռազմավարական հետազոտությունների կենտրոնների ստեղծմանը, քանզի ներկայումս դրանց քանակը խիստ սահմանափակ է:

ՀԱՅԿ ԴԵՄՈՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու,
«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ



ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



Հայ - վրացական հարաբերությունների ոլորտը եղել և մնում է երկու երկրների շահերն արտահայտող և լուսաբանող լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում: Բազմաթիվ հրապարակումները տակավին անկարող են մեղմել երկկողմ լարվածությունը, որն առկա է հակառակ պաշտոնական հավաստիացումների: Ավելին՝ այդ լարվածությունը տարեց տարի «հարստանում է» նորանոր դրսևորումներով, ինչն իր մեջ պարունակում է հեռանկարային լուրջ վտանգ: Ավաղ, շատ թղթակիցներ, որոնք ի տարբերություն պետական այրերի, այնուամենայնիվ փորձում են բարձրաձայնել առկա հակասությունները, համարժեք կերպով չեն ընկալում խնդրո առարկան, ինչով և պայմանավորված է աղճատ հողվածների ի հայտ գալը: Ոմանք, իհարկե, հեղինակում են բացահայտ սադրանքներ, և սա արդեն այլ ուսումնասիրության նյութ է: Խոսքը ՁԼՍ-ների գործունեության արգասիք՝ «վիրտուալ իրականության» մասին է, որն այսօր կարծես կոչված է կամ փոխարինել, կամ քողարկել հայ - վրացական հարաբերությունների հորձանուտում պտտվող իրական խնդիրների հանրագումարը:

«Հնարավոր իրականություն». այսպես կարելի է անվանել հրապարակային հարցադրումների այն ներկայացված, որը հատուկ երանգ է հաղորդում մաս Վրաստանի հանրապետության Սամցխե - Ջավախեթի մահանգի կացության հանրային նկարագրին: Վրաց թղթակիցներն ու պատմաբանները հեղինակում են «ազգային» ոգով բացահայտ թյուրիմացություններ, ինչը լիովին համահունչ է պաշտոնական Թբիլիսիի կողմից որդեգրված և հովանավորվող պատմագրության դրույթներին:

Միանգամայն այլ է ռուսաստանյան ՁԼՍ-ների մոտեցումը. նրանցում գերիշխող է կայսերական հայացքը, իսկ հայության գործոնը նահանգում դիտարկվում է «ռումբի դանդաղ գործողության» կարգավիճակում: Հայ լրագրողները վերջապես պետք է սկսեն այցելել երկու տարբեր երկրամասերից բաղկացած այս մահանգ՝ զոնե այն ճանաչելու նպատակով: Հատկապես՝ «հայկական հայացքի» գրագետ ձևավորումը կենսական անհրաժեշտության ազգային խնդիր է: Հակառակ դեպքում, մենք ուղղակիորեն կորցնում ենք խիստ կարևոր «հայկական տեսակետ» ունենալու իրավունքը՝ բավարարվելով օտար հիմնավորումներն ու վարկածները՝ ազգային իրականությանը ընտելացնելու գործում: Ավելին՝ մենք անկարող ենք դառնում ճշգրիտ և լուրջ տեղեկատվության հիման վրա նախանշել հնարավոր վտանգները, արձանագրել առկա գործընթացների տրամաբանությունը, և ի վերջո՝ համապատասխան ու հստակ հարցադրումներ ներկայացնել ՀՀ իշխանություններին:

Յուրաքանչյուր ոք, ով հնարավորություն և ցանկություն ունի պարբերաբար լինել Վրաստանում, ճանաչել ոչ միայն Թբիլիսին, Սամցխեն ու Ջավախքը, անկարող է չգիտակցել հետևյալ իրողությունը. հարևան հանրապետության իշխանությունները իրականացնում են հայկական ազդեցիկ ազգամշակութային ներկայության հետքերի իսպառ ոչնչացման պետական ծրագիր: Սա չափազանց լուրջ և վտանգավոր նախագիծ է, որն ի թիվս այլևայլ նպատակների, միտված է մաս հաղթահարել վրացական ենթագիտակցության մեջ հանգրվանած հայտնի բարդույթը սեփական ուժերի և կարողությունների հանդեպ: Հայկական քաղաքակիրթ շերտը, որը միշտ գերակայող դիրքեր է զբաղեցրել տվյալ տարածքի սոցիալական, տնտեսական, քաղաքաշինական և կառավարման կյանքում, ունակ է ժամանակի ընթացքում ձևավորել «վրացական բարդույթ», որն ըստ ծրագիրը իրականացնողների, տակավին խոչընդոտում է ազգային պետության կառուցման ընթացքը: Երկկողմ հարաբերություններում առկա գրեթե բոլոր հակասությունները հնարավոր է և պետք է ընկալել տվյալ ծրագրի համատեքստում, և մոտեցման հենց այս հարթությունն է «հիմնավորում» անպատասխան թվացող շատ հարցեր: Խոջիվանքի գերեզմանային բլուրի՝ թիֆլիսահայության սերունդների ոսկորների ու շիրմաքարերի վրա վեր խոյացած Վրաց ուղղափառ եկեղեցու նոր մայր տաճարը, իրականացվող նախագծի, թերևս ամենախոսուն օրինակն է:

Ուստի, հայրենական լրատվամիջոցների հատուկ ուշադրության կենտրոնում պետք է լինեն ոչ այնքան դրսից ներմուծված և ղեկավարվող հարցադրումները, այլ՝ առաջին հերթին կրթական և պատմամշակութային ոլորտներում առկա գործընթացները: Բացի այդ, սա հենց այն հարթությունն է, որի վրա պաշտոնական Երևանը կարող է և պետք է ունենա ծանրակշիռ ու ազդեցիկ խոսքի իրավունք:

Սակայն, ներկայիս մեր իրականությունը փոքր-ինչ այլ է. 2005-ի առաջին կիսամյակում պաշտոնական



Երևանը՝ ի դեմս երկրի նախագահի, գործադիր և օրենսդիր իշխանությունների ղեկավարների, առիթ է ունեցել հյուրընկալվել Թբիլիսիում, և հայտնել իր տեսակետը մի հարցի շուրջ, որ կապ չունի և չի էլ կարող ունենալ ՀՀ արտաքին քաղաքական գործառնությունների հետ: Ախալքալաքում տեղակայված ՌԴ ռազմակայանի ճակատագիրը կանխորոշված է դեռևս 1999-ի Ստամբուլի գագաթաժողովից և հանդիսանում է բացառապես ռուս-վրացական հարաբերությունների առարկան: Պաշտոնական հայտարարությունները, ըստ որոնց, «Երևանը տվյալ հարցում գրավում է չեզոք դիրք և չի պատրաստվում մեկնաբանել ռազմակայանի դուրսբերման գործընթացը», ըստ էության, անհիմաստ խոստովանություններ էին: Մինչդեռ, ՀՀ ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանի այն միտքը, որ «Հայաստանը, նախ և առաջ, մտահոգված է նահանգային բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման հարցերով», գալիս է վկայելու վերջինիս բացարձակ անտեղյակության փաստը:

Վրաստանի իշխանությունների կողմից իրականացվող ծրագիրը, իր առավել պարզ և ցայտուն դրսևորումներով, այսօր հանդես է գալիս Սամցխե - Ջավախեթի շրջանի կենտրոնում՝ Ախալքալաքում: Ներկայիս Վրաստանում, այդ թվում նաև՝ Ջավախքում (Նինոծմինդա և Ախալքալաք) չկա որևէ այլ բնակավայր, որտեղ հայկական ազգամշակութային հետքի ոչնչացման գաղափարը ներկայանա մանածորինակ բացահայտ կերպով: Վրաստանում հայկական եկեղեցիներն ու հայկական դպրոցները չեն «վրացականացվում» ամենաթողու-

թյան և բռնության այնպիսի միջավայրում, ինչպիսին այսօր առկա է Ախալքալաքում:

Խոսքը միայն քաղաքի ամբողջական պատկերը ձևավորող հայ առաքելական և կաթոլիկ բազմաթիվ եկեղեցիների (Սուրբ Նշան, Սուրբ Հովհաննես, Սուրբ Փրկիչ, Սուրբ Աստվածածին, Սուրբ Ստեփանոս Մայր Եկեղեցի, Սուրբ Լուսավորիչ, Երեմյան և այլն) կորստի մասին չէ. նրանց մի մասն, ի դեպ, արդեն կորսված է: Ախալքալաքի բացառիկ հոգևոր շունչը՝ ահա մեր մտահոգության հիմնական առարկան: Այսօր իրականացվում է ծրագիր հենց այդ շունչը վերացնելու ուղղությամբ:

Սա հասկանալու համար բավական է հիշել, որ Ախալքալաքում են ծնվել և իրենց գեղագիտական և ուսումնական առաջին դաստիարակությունն են ստացել վարպետներ Վ. Սուրենյանցը, Հ. Կոչոյանը, ակադեմիկոսներ Հ. Մանանդյանը և Ստ. Մալխասյանցը, երգչուհի Լ. Ջաքարյանը և շատ ու շատ ուրիշներ: Ազգային մեծ երախտավորների այս բացառիկ դարբնոցը (ի դեպ՝ տակավին «չբացահայտված Ախալքալաք») անուններ է տվել նաև այլոց. կաթոլիկ եկեղեցու հայտնի գործիչ, կարդինալ Գ. Պ. Աղաջանյանն ու աշխարհահռչակ երգիչ Շառլ Ազնավուրը նույնպես Ախալքալաքից են: Օրինակներն, իրավ շատ են, ինչի մասին ավելի լավ տեղեկացված են վրաց գործիչները: Ըստ էության սա է այն պատճառներից մեկը, որը և ստիպեց նրանց ազգային բարդության հաղթահարման նպատակով Թբիլիսիից հեռու երկրորդ թիրախը դարձնել Ախալքալաք:

ԱՐԻՍ ԱԶԻՆՅԱՆ

ՊՐԱՅԱՅՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑ ԲՈՂՈՔԻ ՑՈՒՅՑ՝ ԸՆԴԴԵՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎՐՈՍԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ

ԿԱՐՉԱՊԵՏ ԷՐԴՈՂԱՆԻՆ ՀՂԱԾ ԴԻՄՈՒՄԸ ՀԱՆՁՆՎԵՑ ԱՅՂ ԵՐԿՐԻ ԴԵՄՊԱՆՈՒԹՅԱՆԸ



Ինչպես արդեն տեղեկացրել ենք, «Ձայն հանուն Եվրոպայի» հասարակական կազմակերպության կոչով հունիսի 20-ին՝ ժամը 16-ին, մոտ 70 համակիրներ և հայ համայնքի ներկայացուցիչներ խաղաղ ցույց կազմակերպեցին Պրահայում Թուրքիայի դեսպանատան առջև: Ցուցապաստառների վրա գրված կոչերն ուղղված էին Թուրքիայի վարչապետ Էրդողանին, որին ուղղված նամակը ընթերցեց «Ձայն հանուն Եվրոպայի» ՀԿ Չեխիայի մասնաճյուղի ներկայացուցիչ Դավիթ Գրեշակը:

Նամակում ոչ միայն ասվում էր, թե Թուրքիան իր քաղաքական ու մշակութային անցյալով պատրաստ չէ Եվրոմիության անդամակցությանը, այլև բերվում էր Գերմանիայի օրինակը, ուր թուրք միգրանտների համար շատ դժվար է ինտեգրացումը: Թուրքիայի վարչապետի ուշադրությունը հրավիրելով երկրում մարդու իրավունքների խախտման դեպքերի վրա՝ կազմակերպիչներն անընդունելի են համարում նաև թուրքական կառավարության կողմից 1,5 միլիոն հայերի ցեղասպանության շարունակական մերժումը: Նույնը վերաբերվում է նաև Կիպ-

րոսի ճանաչման խնդրին:

Նամակում նշվում էր նաև, որ Թուրքիայի ընդունումը ԵՄ ոչ մի կողմին էլ օգուտ չի բերի և կվտանգի ինչպես ԵՄ-ի, այնպես էլ Թուրքիայի անվտանգությունը:

Նամակի վերջում կոչ է արվում, որ Թուրքիայի կառավարությունը վերանայի իր մոտեցումը այդ հարցերին և ավելի կենտրոնանա ԵՄ-ի հետ հատուկ կարգավիճակով համագործակցության վրա: Դեղին վերնաշապիկներով ցուցարարները ստորագրեցին նամակը և զցեցին դեսպանության փոստարկղը, քանի որ այդպես էլ ոչ մի թուրք պաշտոնյա չբարեհաճեց անձամբ ընդունել նրանց:

Ինչպես մեզ հետ զրույցում հայտնեց Դավիթ Գրեշակը. «Այս ակցիայով Թուրքիայի անդամակցության դեմ լրատվական շարժառի սկիզբն է դրվում, որը կանցկացվի ոչ միայն Պրահայում, այլև Բռնոյում, Չեխի Բուդյովիցե, Պլզեն Օլոմոուց, Լիբերեց, Տաբոր քաղաքներում: Նմանատիպ ցույցեր արդեն եղել են Լեհաստանում և Հունգարիայում: Չեխիայում Թուրքիայի անդամակցությանը արդեն դեմ ստորագրած 4.000 քաղաքացիների թիվն առաջիկա մեկ շաբաթում, անշուշտ, կավելանա»:

Հակոբ Ասատրյան
Պրահա



ՄԱՐՄՆԱՎԱՃԱՌՆԵՐԸ ՊԱՏՃԱՌԱՅԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԶԱՆԳՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Թրաֆիկինգը՝ ասել է, թե մարդկանց վաճառքը կամ «սպիտակ ստրկությունը» առանձնակի մեծ չափերի հասավ հատկապես 21-րդ դարում: Մի ժամանակաշրջան, երբ ամենաշատն է խոսվում ժողովրդավարության և իրավահավասարության մասին: Դաժան ու անոթալի մի երևույթ, որի զոհն են դառնում մեծամասամբ աշխատանք փնտրելու միտումով, զբոսաշրջիկության պայմանագրերով, աշխատանքի տեղավորման ծառայությունների, մոդելային գործակալությունների և այլնի միջոցով արտերկիր մեկնողները: Հայտնի է, որ դեռևս օդանավակայանում են կավատները նրանցից վերցնում փաստաթղթերը, որոնց վերադարձման համար պահանջում են մեծ գումարներ, որոնք էլ պետք է վաստակել ոչ այլ կերպ, քան մարմնավաճառությամբ:

Թրաֆիկինգի զոհ դարձածներից շատերն ունեն ընտանիք և երեխաներ, սակայն չեն կարող բողոքել կամ վկայություն տալ ոստիկանությանը, քանզի որոշ դեպքերում խախտում կամ խախտել են միգրացիայի օրենքները, ինչն էլ ազատագրված պատճառ կարող է դառնալ, ուստի, և կավատների սպառնալիքի ներքո շարունակում են մարմնավաճառությամբ զբաղվել:

Գործակալությունը և կավատները ներքին կապ են պահպանում իրար հետ՝ մինչև մարդ-«ապրանք» մատակարարելով: Սեռավարակների աճի մեծացմանը զուգընթաց, ինչպես փաստում է վիճակագրությունը, աճում է կույսերի պահանջարկը: Վարակիչ հիվանդություններից խուսափելու նպատակով թրաֆիկինգի զոհ են դառնում շատ դեպքերում նաև անչափահասները:

Քիչ չեն դեպքերը, երբ թրաֆիկինգի զոհերն ամեն կերպ ջանում են ազատվել այդ կապանքներից, այն դեպքում, երբ նրանց որոշ մասը պարզապես հարմարվում է տվյալ իրավիճակին: Բացի խաբեության զոհ դառնալուց և հարկադրվածությունից, ի՞նչն է դրդում մարմնավաճառության: Այս պարագայում առանձնացվում են սոցիալական անապահով պայմանները: Եթե անդրադառնանք վատ կենսապայմաններին և երևույթը դիտենք մեկ այլ տեսանկյունից, ապա կնկատենք ցավալի մի փաստ՝ բնորոշ արդի հայ իրականությանը. այսօր վատ ապրելակերպի և գործազրկության պատճառաբանությամբ մարմնավաճառությամբ զբաղվողների ճնշող մեծամասնությունը դեմ է աշխատել որևէ այլ տեղ, ասենք՝ մատուցողուհի, հավաքարար կամ աման լվացող: Տվյալ դեպքում այդ աշխատանքները նրանց կողմից այլընտրանքային չեն համարվում, այնինչ հակառակը պետք է լիներ: Ուստի, կարելի է համարել, որ այդ «գործն» արդեն իսկ մտել է նրանց հոգեբանության մեջ, դարձել առօրյան կազմող տարրերից մեկը:

Քիչ չեն դեպքերը, երբ մարմնավաճառներն ունեցել են կամ ունեն ընտանիք և երեխաներ: Ու եթե որոշ օրինակներում նրանք «աշխատում են» երեխաներին «պահելու» համար, ապա այլ դեպքերում երեխաները հանդես են գալիս խանգարողի դերում: Վերջին դեպքում էլ երեխաները հայտնվում են եթե ոչ փողոցում, ապա՝ մանկատանը, հատկապես, եթե նրանք ապօրինի ծնունդ են: Կյանքի սխալ ուղի ընտրելն էլ առավելապես նրանց է հատուկ, ովքեր չունեն ընտանիք, չեն ստացել ճիշտ դաստիարակություն և կրթություն: Նմանօրինակ մարդկանց թվին հասարակությունը մեծամասամբ դասում է մուրացկաններին և մանկատան նախկին սաներին, որոնք չափահաս դառ-

նալով, դուրս են գալիս մանկատանից և ինքնուրույն կյանք վարում՝ հաճախ իրենց ընձեռված ազատությունը ճիշտ տնօրինել չկարողանալով: Մյուս կողմից էլ հասարակությանն ինտեգրվելու դժվարությունները և սոցիալական խնդիրները կաթիլ-կաթիլ անում են իրենց՝ շատերին ստիպելով սխալ ուղի ընտրել:



Այսօր Հայաստանը դասվում է այնպիսի երկրների շարքին, որոնցում մարմնավաճառների թվի աճ է նկատվում, ընդ որում խոսքը գնում է նաև հայագի մարմնավաճառների այլ երկրներում գործունեության մասին, հիմնականում՝ Թուրքիայում և Արաբական Եմիրություններում: Իսկ երևանում մարմնավաճառության երևույթն ակնհայտ է այնքան, որ կամա թե ակամա ինքը էլ տեղյակ ու ակամատես են դառնում, թե հատկապես երևանի ո՞ր մասերում են նրանք «որսի դուրս գալիս»: Եվ երբ պատահմամբ կամ անտեղյակ լինելով հայտնվում են նրանց «տարածքում», առնվազն անթաքույց անպարկեշտ հայացքներ են վաստակում: Այնքան վստահ ու հստակ են նրանք ամրագրել իրենց դիրքերն այդ տարածքներում, որ նույնիսկ որոշ հեռավորության վրա հեթապահող ոստիկաններից էլ չեն զգուշանում: Սա վառ ապացույցն է նրա, որ պետական կարգավորման մարմինները, ինչպես և շատ այլ դեպքերում, անտարբերության են մատնում հաճախ բարձրաձայնվող այդ հարցը, կամ նույնիսկ՝ օժանդակում:

Դե ինչ, իսկ թե միջոցներ չեն ձեռնարկվում երևույթի դեմ, թերևս մնում է միայն պետականորեն ճանաչել, ինչու չէ նաև արտոնագիր ընծայել մարմնավաճառներին զարգացնելու բիզնեսի յուրօրինակ այս ճյուղը, որից օգտվողները միայն մարմնավաճառները չեն: Եթե անկողմնապահորեն դիտենք փաստը, օգտվում են թե՛ մարմնավաճառների այսպես կոչված «շեֆերը», որոնք շատ դեպքերում սպառնալիքի և բռնության դիմելուց չեն խորշում, և ինչու չէ՞ իրավապահները՝ մերթընդմերթ տրվող կաշառքների, երբեմն էլ անձնական կարիքների բավարարման առումով:

Ներկայումս գործում են կազմակերպություններ, որոնց նպատակն է աջակցել բռնության ենթարկված կամ սխալ ուղի բռնած կանանց: Չարիքը կանխելն ավելի հեշտ է, քան դրա հետևանքները վերացնելը, ուստի, նախևառաջ, չպետք է թույլ տալ, որ մարդկանց հոգեբանության մեջ արմատավորվի այդ երևույթը, և հարկ է մտածել սոցիալական հարցերի շուրջ, պետք է փորձել գտնել պատճառահետևանքային կապերը, որոնք որոշ դեպքերում հանգույցների են վերածվում, իսկ հանգույցներում հայտնվում են մարդկային նոր կյանքեր ու ճակատագրեր:

**ԼԻԱՆԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
ԵՊԼՅ-ի ուսանողուհի**



ՃԱՆԱՊԱՐՅ ԴԵՊՈՒ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը 2001-ի հունվարի 25-ին դարձել է Եվրոպական խորհրդի անդամ: Եվրոպական խորհրդի առջև Հայաստանի ստանձնած պարտավորությունները հետևյալն են.

Ստորագրել և վավերացնել՝

- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիան,
- «Արտոնությունների և անձեռնմխելիության մասին» գլխավոր համաձայնագիրը,
- Խոշտանգումները դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կանխելու մասին եվրոպական կոնվենցիան,
- Տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ եվրոպական խարտիան,
- Միջսահմանային համագործակցության մասին եվրոպական կոնվենցիան,
- Եվրոպայի խորհրդի հանձնման (էքստրադիցիայի) մասին,
- Հանցագործության արդյունքների ազդարաման և բռնագրավման մասին,
- Դատապարտված անձանց փոխանակման մասին կոնվենցիաները,
- Եվրոպական խորհրդի սոցիալական խարտիան:

Ընդունել՝

Քրեական օրենսգրքի երկրորդ (հատուկ) մասը՝ այդպիսով de jure վերացնելով մահապատիժը և ապաքրեականացնելով չափահասների միջև փոխադարձ համաձայնությամբ հոմոսեքսուալ հարա-

բերությունները,

- ՁԼՄ-ների մասին,
- Քաղաքական կուսակցությունների մասին, Հասարակական կազմակերպությունների մասին նոր օրենքները,
- Պետական (քաղաքացիական) ծառայողների մասին օրենքը,
- Կալանավորների համակարգը (ներառյալ քննչական մեկուսարանները), աշխատանքային գաղութները Ներքին գործերի նախարարության և Ազգային անվտանգության նախարարության ենթակայությանը փոխանցելու վերաբերյալ օրենք,
- Փոփոխություններ կատարել Տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) մասին օրենքում,
- Մինչև հաջորդ ընտրություններ վերացնել նոր ընտրական օրենքի թերությունները,
- Ապահովել բոլոր եկեղեցիների և, մասնավորապես, այսպես կոչված «ոչ ավանդականների» գործունեությունը,
- Լիարժեք իրականացնել դատական համակարգի բարեփոխումները,
- Լիարժեք կերպով համագործակցել ՀԿ-ների հետ՝ կալանավորների, ինչպես նաև զինակոչիկների իրավունքների հարգումը երաշխավորելու նպատակով,
- Այլընտրանքային ծառայության մասին եվրոպական նորմերին համապատասխան օրենք ընդունել,
- Ազգային հեռուստատեսության ալիքը փոխարինել հանրային հեռուստատեսային ալիքով:

ԼԻԱՆԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
ԵՊԼՀ-ի ուսանողուհի

ՄԵԾ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ ԿՐԵՄԼՈՒՄ

Ռուսաստանի և Չինաստանի առաջնորդները միասին պատրաստվում են Մեծ ութնյակի համաժողովին:

Կրեմլում կայացավ ռուս - չինական բարձր մակարդակի հանդիպում, որտեղ Վլադիմիր Պուտինը և Հու Ցզինտաոն ստորագրեցին համատեղ հռչակագիր XXI դարում միջազգային կարգի մասին : Այնտեղ մասնավորապես նշված է՝

1. Աշխարհն ապրում է պատմական նշանակության վերափոխումների ժամանակաշրջան:
2. Եվ այդ աշխարհում յուրաքանչյուրն ինքնուրույն պետք է որոշի իր զարգացման ուղին՝ իր ազգային ինքնությանը և առանձնահատկությանը համապատասխան:

3. Բոլորը պարտավոր են հարգել ինքնիշխանությանը և չհարձակվելու սկզբունքները՝ զերծ մնալով սպառնալիքի և թելադրանքի քաղաքականությունից:

4. Պետությունները չպետք է դասակարգվեն առաջնորդների և առաջնորդվողների, իսկ դրսից որևէ մեկի կենսածեղի թելադրանքը անթույլատրելի է:

Վլադիմիր Պուտինը նշեց, որ այս հռչակագրում Ռուսաստանի և Չինաստանի մոտեցումները աշխարհաքաղաքական հիմնահարցերին համահունչ են:

Չինաստանի ղեկավարը նշեց, որ համատեղ հռչակագիրը շատ կարևոր նշանակություն ունի երկու երկրների ռազմավարական համագործակցության համար միջազգային ասպարեզում և կծառայի միջազգային իրավիճակի առողջ զարգացմանը:



ԵՔԵ ՊԵ՛ՏՔ ԼԻՆԻ, ՆՈՐԻ՛Ց ԿԱՆԵՄ...



Այսօրվա մեր Ազգային բանակի գաղափարական հիմքը դրվել է դեռևս երեք տասնամյակ առաջ, երբ 1975-ին Լիբանանում ստեղծվեց Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակը (ՀԱՀԳԲ-ASALA): Սփյուռքյան բանակի շարքերը համալրեցին աշխարհի տարբեր ծագերից ինքնակամ ներկայացած երիտասարդ և ինքնամոռաց հայորդիները: Նրանք համախառնեցին փրկելու այն, ինչ մնացել էր Մեծ եղեռնից. հայի արժանապատվությունը և իշխո դարձող հավատը: Ստորև ներկայացնում ենք մեր հարցազրույցը ԱՍԱԼԱ-ի անձնուրաց մարտիկի՝ Մարտիրոս Ժամկոչյանի հետ.

- Ասում են՝ մանկության ու պատանեկության հուշերը խաղաղեցնում են մարդու հոգին, որտե՞ղ և ի՞նչ ջերմությամբ են դրսևորվել դրանք:

- Մանկությունս ու պատանեկությունս խաղաղ մթնոլորտի մեջ չեմ անցկացրել. պատանեկությունս խաչածևվեց լիբանանյան պատերազմի տարիներին: Չնայած դրան՝ ունեցել եմ լավ ու վատ օրեր: Լավն այն էր, որ այդ տարիներին ընտանիքիս հետ էի. դա ինձ համար ամենակարևորն էր, նաև շրջապատված էի լավ ընկերներով: Պատանեկությունս պատերազմի բովով է անցել:

- Եթե տարիները հետ դառնային, Ձեր անցած ճանապարհի ո՞ր հատվածը կընտրեիք և ինչո՞ւ:

- Միանշանակ՝ 1975 թվականը, որովհետև 70-ականների կեսերին սկսվեցին և հիմնավորվեցին իմ առաջին քայլերը դեպի մեծ կյանք: Ձիմյալ ազատագրական պայքարը, զինակից ընկերներս ու հայրենասեր շրջապատս հոգուս արիական ներշնչանքն են եղել և են առ այսօր:

- Ինչպե՞ս որոշեցիք մտնել ԱՍԱԼԱ:

- Իմ մուտքը Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ (անգլերեն հապավումով՝ ASALA) մի քիչ տարբեր էր ընկերներիս համեմատ: 1970-ականներին Լիբանանում գործում էր «Երիտասարդ հայեր» միությունը, ես նրա շարքերում էի մինչև հայ գաղտնի բանակի ստեղծումը: Այդ միության «Երիտասարդ հայ» թերթում էի աշխատում, այնտեղ իմ գործը թերթն ընթերցողին հասցնելն էր, ամենադժվար գործն իմն էր, որ կատարում էի սիրահոժար՝ լինելով շատ ճարպիկ: Երբ Լիբանանի պատերազմը սկսվեց, այնտեղ հիմնվեց ԱՍԱԼԱ-ն, այդ ժամանակ որոշեցի անդամագրվել, միանալ նրան: Ընկերներիս շարքերում ես ամենակրտսերն էի: Իմ պաշտոնական անդամագրումը եղել է 1980-ականներին, իսկ մինչ այդ՝ գործողություններս բանակում գաղտնի էին:

- Ձիմյալ բանակի գործողությունները կարելի է որակել որպես «մենամարտ»: Ձեզ վրա (ԱՍԱԼԱ-ի) ողջ հայության հույսն էր, դժվար չէ՞ր կրել այդ պատասխանատվությունը:

- Ո՛չ, դժվար չէր, որովհետև այն, ինչ մենք ենք արել, արել ենք մեր իսկ հոժար կամքով՝ ո՛չ ստիպողաբար: Մեր պայքարն արդար էր և ինչ արել ենք, ճիշտ ենք արել, մենք չենք զղջում մեր արածի համար:

Որակումը ճիշտ է՝ «մենամարտ», ես մենակ եմ արել իմ գործը՝ գիտակցելով դրա խիստ կարևորությունը և հնարավոր հետևանքը: Չեմ զղջում, եթե պետք լինի, նորից կանեմ: Իմ գործողությունը «մենամարտ» էր, քանի որ պայքարն էր այդպիսին. խիստ գաղտնիությունից ելնելով՝ շատերը չափտի իմանային դրա մասին: Գործողությունը հաջող իրագործելու համար դա առաջնահերթ պայմաններից մեկն էր: Իմ ընտանիքն էլ տեղյակ չէր, որ ես նման բան պիտի անեի: Մեզանից յուրաքանչյուրն ընտրել էր մի գործողություն, մի ակցիա, որի գրագետ ավարտը աշխարհը թնդացնելն էր: Իմը՝ Շվեյցարիան էր, քանի որ այնտեղ՝ Ժնևում էր գտնվում ՄԱԿ-ը, այն իր կանոնադրության մեջ ընդգրկում էր 31-րդ հոդվածը, որն



անդրադառնում էր Հայոց ցեղասպանությանը: Մինչև 1981 թվականը այդ մասին ոչ ոք չէր խոսում: Հայկական հարցը Ժնևում փոշիների տակ էր թաղված, դրա համար գնացի այնտեղ և հասա նպատակիս. թուրքական դեսպանատունը Ժնևում փակվեց, իսկ ՄԱԿ-ի գրասենյակը տեղափոխվեց: Դրանից հետո Ժնևում մեծ աղմուկ բարձրացավ. 1981-84թթ. այնտեղ անընդհատ իմ մասին էին խոսում, իսկ 31-րդ հոդվածին շատերը սկսեցին անդրադառնալ:

- Գուրգեն Յանիկյանը, որ դարձավ Նորագույն զինյալ պայքարի ռահվիրան, խախտեց հայությանը պարուրած թմբիրային լռությունը, փոխեց պատմությանը ընթացքը: Ո՞րն էր այն կարևոր քայլը, որ չկատարվեց բանակի կողմից:

- Գուրգեն Յանիկյանը մեզ ցույց տվեց պայքարի ուղին, մեր բանակի գաղափարական հիմքը դրվեց՝ ելնելով նրա գործողությունից, բայց տղաներ կային, ովքեր մինչ Բալթիմորի դեպքը, մտածում էին պայքարի այդ ճանապարհի մասին: Ես շատ կուզեմայի, որ Գ. Յանիկյանը ԱՍԱԼԱ-ի օգնությամբ ազատվեր Կալիֆոռնիայի Չիկո բանտից և իր կյանքի վերջին տարիները անցկացներ



ազատության մեջ և ոչ թե՛ տնային կալանքում:

- Ազատագրական պայքարի տարեգրության մեջ Դուք գրեցիք մի օր՝ «9-ը հունիսի 1981թ., ժնև»: Ի՞նչ դեր խաղաց այն Ձեր կյանքում:

- Ժնևի գործողությունից հետո ես դատապարտվեցի 15 տարվա ազատազրկման: Բանտում անցկացրեցի ավելի քան տասը տարի. այդ տարիները իմ կյանքի սպասումի տարիներն էին: Այո՛, սպասումի, չնայած որ գիտեի, թե երբ էի այնտեղից դուրս գալու, բայց իմ մեջ տպավորված էր (և ոչ թե՛ ասված), եթե չկարողանայի դուրս գալ, ապա համբերելով պիտի գտնեի այլ միջոցներ: 1981-84 թվականներին դատավճիռս քանիցս բողոքարկեցի, խնդրեցի ինձ ազատ արձակել, ճիշտ է չստացվեց, բայց խոստացան, որ շուտով կազատեն: Իմ լավ պահվածքի համար մնացած հինգ տարիները ինձ ներում շնորհվեց:

Գործողության արդյունքը եղավ այն, որ ես սովորեցի նաև սպասել...

- Արցախյան ազատամարտը «մենամարտ» չէր, ազգովի էինք ծակատում, Դուք որտե՞ղ պարպեցիք հաղթանակի Ձեր փամփուշտները:

-1991-ի հունիսի 26-ին բանտից ազատվելուց հետո եկա Չայաստան: Վազգեն Սարգսյանի հրամանով Ջվարթնոց օդանավակայանում ինձ դիմավորեցին Սոնթեն և Ջիվանը («Տիգրան Մեծ» ջոկատ) և ինձ տարան նրա մոտ: Նշեմ, որ մինչ բանտից ազատվելը, Վ. Սարգսյանի հետ գաղտնի հանդիպում եմ ունեցել ժնևում, նա անձամբ էր եկել ինձ այցելության և խոստացել էր, որ ամեն ինչ կանի ինձ Չայաստան տեղափոխելու համար: Դա 1990-ի վերջերին էր: Լինելով Լիբանանի քաղաքացի՝ Շվեյցարիայից դուրս գալու ոչ մի փաստաթուղթ չունեի: Շատ չանցած՝ ես այդ երկիրը թողնելու և Չայաստան վերադառնալու իրավունք ստացա: Չայրենիք վերադարձիս համար Վազգեն Սարգսյանը ամեն ինչ արեց: Բանակից ազատվելու նույն օրն ևեթ ես Չայաստանում էի՝ Վ. Սարգսյանի մոտ, շատ լավ ընդունելության արժանացա: Նա ինձ ասաց. «Էլ խնդիր չունես, դու քո տանն ես՝ հայրենիքում, հիմա ազատ ես, զնա քեֆիդ նայիր, այդ իրավունքն ունես»: Ես ասացի, որ քեֆ անելու չեմ եկել, եկել եմ պայքարելու: Ասաց. «Դու խենթ ես, տասը տարի նստելուց հետո քեֆ-ուրախություն եմ անում»: Ես ավելացրեցի, որ մինչև քեզ մոտ հասնելը քանի՞ նկար և սև պաստառ տեսա ճանապարհին, որոնք գուժում էին տղաների մահը, այդքանից հետո ինչպե՞ս կարող եմ բարեկեցիկ կյանքի մասին մտածել: Անհնար բան ես ասում: «Ես արգելում եմ քեզ Ղարաբաղ գնալ», - նա կտրուկ ընդհատեց ինձ: Ասացի՝ արգելիր, եթե կկարողանաս: Այդպես էլ եղավ. զենք հայթայթեցի և Սոնթեի հետ զնացի Շահումյան: 1992-ին՝ 17 հոգանոց խմբով մտանք Մարտունի: Ժողովուրդը, մեր նվազ քանակը տեսնելով, շատ զարմացավ և իր անվատախությունը չթաքցրեց՝ ասելով, որ այսքան մեծ տարածքը ինչպե՞ս կարող եք 17 հոգով պաշտպանել: Մեր փոքրիկ ջոկատը կամաց-կամաց դարձավ բյուրավոր և թշնամու գրաված գյուղերը մեկ-մեկ ազատագրեցինք, և այսպես՝ ողջ Մարտունու շրջանը: Ժողովուրդը մեզ հավատաց և վայելեց մեր փոքրաթիվ ջոկատի մեծ հաղթանակը, որովհետև մեր մարտունակությունը շատ մեծ էր, իսկ մենք՝ կազմակերպված: Չայաստանը մեզ վառելիքով էր օգնում, իսկ զինամթերքն ու տեխնիկան թշնամուց էինք վերցնում, նրանց կոտորում էինք իրենց զենքով:

Արցախի հոգևոր առաջնորդ Պարզև Սրբազանի հետ



մասնակցեցի Լաչինի միջանցքի բացմանը և Քելբաջարի մարտերին: Շուշիի ազատագրման օրը ես Մարտունիում էի:

- Չայրենասիրությունը հոգևոր սնունդ է, այսօր մեզանում, մասամբ, քաղց է, ի՞նչ է պետք այդ քաղցը հագեցնելու համար:

- Ոչինչ չի հագեցնի այդ քաղցը, քանի դեռ շրջապատված ենք լավ և վատ հարևաններով: Հոգևոր այդ քաղցը կզգանք այնքան ժամանակ, քանի դեռ մասնատված է Չայաստանը: Դրա համար՝ նախ պիտի փորձենք մեր հարևանների հետ լեզու գտնել, երկրորդ՝ մենք դեռ պահանջներ ունենք մեր թշնամուց և ուխտել ենք այդ պահանջին:

- Նորագույն զինյալ ազատագրական պայքարի 30-ամյակին, Չայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցին և Չայոց գրերի 1600-ամյակին՝ հայրենիքում՝ Արարատի աչքի առաջ, հիմնվում է ԱՍԱԼԱ-ի նախկին քաղբանտարկյալների և ազատամարտիկների միությունը՝ «Ուխտ Արարատի»: Ի՞նչ կասեք այս մասին:

-Մեր պայքարը երկարաժամկետ էր և ոչ դյուրին: Տունը, որի հիմնաքարը արդեն դրել ենք, պիտի վեր հաննի, պիտի՛ շենանա: Եթե մենք էլ չտեսնենք, հուսանք, որ գոնե մեր զավակները մեր անձնուրաց պայքարի բերկրանքը կապրեն:

- Ո՞վքեր են լինելու ուխտավորները, ո՞ր է տանելու «Ուխտի ծամփան»:

- Ուխտավորները մենք ու մեր զավակներն են լինելու, իսկ «Ուխտի ծամփան» մինչև պատմական Չայաստան է տանելու համայն հայությանը:

- Ո՞րն է Ձեր ցանկությունը, որ կուզենայիք հնարավորինս շուտ իրականանալ:

- Ամենամեծ ցանկությունս է, որ հայրենի հողում նոր դրված այս հիմնաքարը շրջապատված լինի մեր զինակից ընկերներով, լինեն նրանք Չայաստանից, թե Սփյուռքից: Մեր միասնությունն է լինելու մեր տան ամուր հիմքը, և այնքան ժամանակ, քանի դեռ այսպես ցրված ենք, մեր գործերի ընթացքը դժվար է լինելու: Չնայած՝ մենք այստեղ ենք՝ կողք-կողքի, սակայն Սփյուռքում հզոր ներուժ ունենք, ուզում եմ, որ այդ ուժը համախմբվի, գա Չայաստան և «Ուխտ Արարատի» հիմքի վրա՝ Արարատ լեռան աչքի առաջ, սկսենք մեր տունը կառուցել:

ՋԵՄՍԱ ԲԱԴԿԱՅԱՆ



ԶՍՊՎԱԾ ՑԱՍՈՒՄԸ ԳՏԱՎ ՔԱՐԵ ՆՈՐ ՄԱՐՄՆԱՎՈՐՈՒՄ



Զորավարի նորաբաց հուշարձանի մոտ՝ ձախից աջ, Արաբկիրի թաղապետ Լևոն Հարությունյանը և Փլեսիս Ռոբինզոնի քաղաքապետ Ֆիլիպ Պենզեբը:

«Ամեն գիշեր առավոտի արևով է վերջ ունենում, ամեն մեղք՝ քավությամբ ու ամեն ոճիր՝ արդար հատուցմամբ»:

Հովհ. Մելքոնյան

90 տարի... Տխրահռչակ 1915թ-ից սկսած՝ ամեն գիշեր առավոտի արևով է վերջ ունենում, բայց ոճիրը դեռ իր վերջը չի գտնում: Արդար հատուցումը, հորիզոնի նման, որքան մոտենում ես, այնքան հեռանում է: Ու վաղուց ասված դարձվածքներն են լրացումներ ստանում, դառնում ազգային, դառնում համազգային. «Յուրաքանչյուր տղամարդ իր կյանքում պետք է տուն կառուցի, ծառ տնկի և որդի ունենա», իսկ յուրաքանչյուր հայ պիտի իր կառուցած տան, տնկած ծառի ու իր որդու մեջ ներարկի արյան հիշողությամբ ազգի հիշողությունն ու վրեժը պահելու պատգամը:

Հայոց մեծ եղեռնի 90-ամյա տարելիցին՝ հիշատակի մեծ ու փոքր միջոցառումներ եղան. հնչում էին բառեր, արձանագրված փաստեր, դատապարտող նախադասություններ ու ... օդում կախված էր մնում հայի հավաքական ուժի բռունցքն ու հատուցման պահանջը...

Այս զսպված ցասումը քարե մարմնավորում գտավ ցան...

2005 թվականի հունվարին Ֆրանսիայի Plessis-Robinson քաղաքի պատվիրակությունը հյուրընկալվեց Երևանի Արաբկիր թաղապետարանում՝ եղբայրության ու համագործակցության առաջարկով: Ֆրանսիական այս փոքրիկ քաղաքը, ի դեմս քաղաքապետ Ֆիլիպ Պենզեբի, բարեկամության մի մեծ կամուրջ գցելու առաջարկ է անում. քաղաքի կենտրոնական զբոսայգուն տեղադրել Անդրանիկ Օզանյանի կիսանդրին: Պատրաստակամությունը կամուրջի առաջին քարն էր: Արաբկիրի թաղապետ Լևոն Հարությունյանը նույն պահին համագործակցության սկիզբը դրված համարեց և խոստացավ պատվիրել հայոց հավաքական ուժը մարմնավորող գեներալ Անդրանիկ կիսանդրին և Ֆրանսիական կողմի նշած օրը այն հասցնել Plessis - Robinson:

Հունիսի 4-ին Ձ. Անդրանիկի կիսանդրու (քանդակի հեղինակ՝ քանդակագործ Ռուբեն Նալբանդյան) պաշտոնական բացման օրն էր: Օդում կախված բռունցքը՝ հայոց հավաքական ուժի իր քարե մարմնավորումն էր գտել: Արաբկիրի համայնքի թաղապետն իր հայրենակիցների երախտիքի խոսքերն ընդունում ու վերադարձնում էր հատուկ հպարտությամբ: Արյան հիշողությամբ ազգի հիշողությունը պահելու երկար ճանապարհին իր շնորհիվ ևս մի քայլ՝ մի մեծ քայլ էր արված: Զորավար Անդրանիկ կիսանդրին Փարիզի արվարձանային այս գեղեցիկ քաղաքում տեղադրվեց, հնչեցին Հայաստանի ու Ֆրանսիայի պետական օրհներգերը, Հայաստանի ու Ֆրանսիայի պետական դրոշմերը բարձրացան, ու դեպի Արարատ՝ աշխարհի բոլոր հայերին, իր խորիստ ու պարտադրող հայացքը դարձրեց Զորավար Անդրանիկը:

Պաշտոնական արարողությունը Plessis - Robinson քաղաքապետ, սենատոր Ֆիլիպ Պենզեբը կազմակերպել էր բարձր մակարդակով՝ սենատորների, պաշտոնյաների ու Ֆրանսիայում Հայաստանի դեսպանի մասնակցությամբ: Ստորագրվեց համագործակցության համաձայնագիր Ֆրանսիայի Plessis - Robinson քաղաքի և Երևանի Արաբկիրի համայնքի միջև:

Զորավար Անդրանիկի կիսանդրու բացման պաշտոնական արարողությունն ավարտվեց, ու Մեծ Հայի ներկայությունը հավերժ մնաց ֆրանսիական այս քաղաքում ևս:

Ասվածից հետո էլի օդում մնաց հայի պահանջը, հատուցման պահանջը և էլի մի լրացում. այս անգամ՝ Սահմանադրությունը (որին հրում են դեպի բարեփոխում). «Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին»:

«Հայը իշխանությունը կվստահի միայն նրան, ով իր կյանքում մեծ քայլ է արել»:

Սա չգրված հողվածն է հայի սահմանադրության:

3.4. - Հունիսի 5-ին հուշարձանի առաջին այցելուներն էին քաղաքի հայազգի նորապսակ զույգը: Հիրավի, հրաշալի ճվեր՝ Զորավար Անդրանիկի հիշատակին, հայ ժողովրդի, հատկապես, հուշարձանի տեղադրման նախաձեռնողների ու կազմակերպիչների կողմից:





ՊՍԱԿ՝ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀԵՏ



«Մեր սիրելի Մասիսի գագաթից պոկեցի դարերով ծածկուած ծիւներից մի գանգուած ու զլօրեցի դէպ սարի փէշերը: Նա պիտի մեծանայ եւ չկա՛յ աշխարհում մի ուժ, որ կարողանայ կանգնեցնել նրա ընթացքը:

Ալ փլատակների վերայ արցունքոտ աչքերով նստած «Մայր Հայաստան»-ին տուէք մոռացութեան, այլեւս նա չկայ: Այլ

կա՛յ հայրենի երկնքում սաւառնող ոգին Հայաստանի, դղեակներ շինող, աշխարհը զարմացնող, զինուած մեր նախնիների անյախթ կամբով ապրիլ, կերտել ու դառնալ օրինակ մարդկութեան ցեղին:

Հասել է արդ ժամը, որ խուլերը լսեն, կոյրերը տեսնեն, թէ ինչպէս աշխարհում ցրուած նահատակների հարազատ զաւակները, զարկել են կծեայ ու փշրել քնարները ու վերցրել են մարդկութեան միակ հասկնալի գէնքերն ու ռումբերը՝ վառելով ու հրդեհելով, որ լուսաւորեն խաւարը մեր ներկայ կյանքի, որ իշխի արդարութիւնը իրաւունքների, որ կառուցուի երազը հայի, մեր հողերի: Ոչ միայն ազգս, այլ արդարութիւն ու ազատութիւն որոնող բոլոր ազգերը, պիտի հպարտութեամբ համբուրեն նրանց ճակատները, որոնք դարձել են ուղեցոյց հային եւ բոլորին համար», - 1977թ. հունիսի 17-ին Կալիֆոռնիայի Չինո բանտում այս տողերը գրեց Գուրգեն Յանիկյանը, որոնք մշտավառ կանթղի պէս պիտի ուղեկցեին զինյալ պայքարի մեր մարտիկներին: Այս խոսքերից հինգ տարի անց՝ 1983-ի հունիսի 16-ին, ԼԼոն Էքմեքճյանի հիշատակն անմահացնելով, Պոլսի «Փակ շուկա»-ի գործողութիւնը իրագործեց Հայաստանի ազատագրութեան հայ գաղտնի բանակի քաջարի մարտիկ Սկրտիչ Մատարյանը:

«Լեւոն Էքմեքճեան» խմբակի առաջնորդը պայթեցուց իր ձեռքերուն մէջ պահած ռումբը, երբ տասնեակ մը թիւով պատանդներ բռնած կը բանակցէր թուրք բանագնացներու հետ: Թուրքական բանակի զինուորները առատ կրակ բացին Մատարեանի ու պատանդներու ուղղութեամբ, խմբակի պատասխանատուն պայթեցուց իր ձեռքի ռումբը, որուն հետևանքով սպանուեցան երեք թուրք բանագնացներ եւ շատ թիւով զբօսաշրջիկներ: Մեր մարտիկները երբեք կը վախճան թուրքական զնդակներէն, որովհետեւ անոնք իմացեալ զոհողութեամբ կը դիմագրավեն ազատագրական պայքարի առաքելութիւնը: Պիտի շարունակենք մեր պայքարը», - ահա այս հաղորդագրութիւնն արեց ՀԱՀԳԲ-ը (ԱՍԱԼԱ) «Փակ շուկա»-ի դէպքից անմիջապէս հետո:

Նահատակ հերոսի՝ Սկրտիչ Մատարյանի գրչին են պատկանում այն տողերը, որ քիչ հետո կ'ներկայացնենք: Սակայն դրանք միաժամանակ ՀԱՀԳԲ-ի բոլոր հերոս նահատակներին են ուղղված հարազատ ժողովրդին: Հայ ժողովրդի նորագույն պատմությունը կերտող հերոս այն նահատակների սրտի խոսքը՝ ովքեր առիթ չունեցան նման տողեր արձանագրելու: Թո՛ղ այս տողերը հավերժական պատգամ լինեն բոլոր պայքարողներին և դրդանք՝ զգաստության:

«Մայր իմ. գիտեմ մայրիկ, որ սիրտդ պիտի վառվի, երբ որ լսես, թէ ես մահու դատապարտուած եմ, եւ դուն պիտի ըսես, թէ երբ որ մէկը ծառ մը մեծցնէ, պիտի պտուղը ուտէ. «Ինչպէ՞ս ես, այրի մայր մը ըլլալով, քեզ մեծցնեմ եւ դուն ինքզինքդ մահու տաս», պիտի ըսես՝ «թէ դուն քեզ չես մեղքնար, գոնէ ինձ մեղքացիր»:

Խնդրեմ մայրիկ այս խօսքերը մի՛ ասեր, քանզի ինձ անէծք են, գիտեմ, որ մօր մը, երբ լեզուն անէծք չի տար, սիրտը կու տայ: Վերջին խօսքս մայրիկ, պիտի պայքարիմ, որպէսզի իմ պատիւս եւ հայ ազգս պաշտպանեմ»:

«Եարիս. Սիրելի իմ եար..., առաջին սեր:

Ես քեզ կը սիրեմ, բայց իմ ազգս աւելի կը սիրեմ. արդէն երբ ազգս սիրած ըլլամ, քեզ ալ սիրած կ'ըլլամ. երբ իմ ազգիս համար մեռնիմ, քեզ համար ալ մեռած կ'ըլլամ»:

«Ընկերներուս. երբ մեր թշնամին «ձայնը զսպիչ» գէնքերով կը հարուածէ մեր ընկերներուն... մեր յեղափոխական կուրծքը բաց է բոլոր թշնամիներուն եւ այդ փամփուշտը, որ կ'ուղղուի մեզ՝ ետ կը վերադառնայ մեր թշնամիներուն ըսելով ու գործադրելով «արիւնը գետին չի մնար». այս շատ յստակ է մեր բոլորին:

Յարգելի՛ ընկերներ, շատ լաւ գիտեմ, որ երբ ղեկավարութեան աշխատանքը եւ յեղափոխական քրտինքը չըլլայ գործին մէջ, գործը յաջողութեամբ չի պսակուիր:

Չինեալ պայքարն ու քաղաքական ճիշտ գիծը ուղին են Հայաստանին:

Յաղթանակը մերն է:

Սիրելի՛ հայ երիտասարդներ եւ երիտասարդուհիներ, երբեք չի կարծէք, որ մեր երազները պիտի իրականանան, երբ տուններուն մէջ նստելով ըսենք, թէ մեր Հայաստանը կորսուած է... Մեծ սխալ մըն է: Պէտք է, որ մեր ձայնը արծագանք տայ ամբողջ աշխարհի մէջ: Այդ ձայնն է, որ պիտի ելլէ մեզմէ՝ մեր գէնքերէն, քանի որ մեր միակ ճամբան այդ է, որ պիտի իրականացնէ մեր երազները եւ պիտի դարձնէ Հայաստանը իր տերերուն՝ բոլոր հայերուն»:





ԳՐԻԳՈՐ ԱՂԱԲԱԼՈՂԼՈՒՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ «Flash TV» ՀԵՌՈՒՍՏԱԿԱԼԻՔԻ ԵԹԵՐՈՒՄ



Ֆրանսիական «France-Armenie» երկշաբաթաթերթը հունիսի 1-15-ի թիվ 255 համարում գետնից էր իր հարցազրույցը թուրքիայի քաղաքացի՝ ազգությամբ հայ, հոգևոր հովիվ Գրիգոր Աղաբալողլուի հետ: Զրույցը նրա՝ թուրքական «Flash TV» հեռուստաալիքին տված ավելի քան հինգ ժամ տևած հարցազրույցի մասին է:

Թուրքական հեռուստաալիքը Եվրոպայի աչքին «խիստ դեմոկրատական» երևալու համար վերջերս հարցազրույցի էր հրավիրել Գրիգոր Աղաբալողլուին: Եվ ինչի՞ մասին կարող էր լինել հարցազրույցը, եթե ոչ ցեղասպանության: Երկխոսություն հայի և թուրքի միջև: Այս անգամ հայը ինքնավստահ էր և նախահարձակ պահանջատեր: Ի վերջո՝ մեր հայրենակիցը կարողացավ իր ցատունն ու զայրույթն արտահայտել պատմության կեղծարարների հանդեպ:

Գրիգոր Աղաբալողլուին թուրքական «Flash TV» հեռուստաալիքը հրավիրելու համար կային լուրջ նախադրյալներ: Նախ այն, որ թուրքիան, վաղ, թե ուշ, ստիպված է պատասխան տալ Եվրոպական այն երկրներին, որոնք մեկը մյուսի հետևից ճանաչում են Հայոց ցեղասպանությունը: Եվ հետո՝ հատկապես վերջին երեք տարիներին, կարծես թե ցեղասպանության մասին բանավեճերը, քննարկումներն ու միջազգային գիտաժողովները ավելի ակտիվ բնույթ են ստացել:

Հոգևոր հայրը հրավերն ընդունելուց առաջ զգուշացրել է, որ, ելնելով քաղաքական և սեփական անվտանգության նկատառումներից, չնայած որ ասելիք շատ ունի, չի կարող ազատ և անկաշկանդ խոսել ողջ ճշմարտության մասին, սակայն նրան վստահեցրել են, որ նա կարող է ասել այն, ինչ կամենում է՝ «ցույց տալու համար Եվրոպային, որ թուրքիան դեմոկրատական երկիր է»: Եվ իրոք, դեռևս ոչ մի սպառնալիք: Կրկին մի խորամանկ մարտավարություն. երբեք միանգամից չարձագանքել: Սովորաբար արձագանքը լինում է տարիներ անց, երբ բոլորն արդեն մոռացած են լինում դեպքը, և մեղադրվում են թուրքական կառավարության դեմ դավեր նյութելու մեջ: Այդպես է եղել Գրիգոր Աղաբալողլուի հետ, երբ նա տարիներ առաջ քննադատել է ցեղասպանության երևույթը, որի համար էլ երեք տարի անց՝ դատախազի որոշմամբ, վեց տարի ազատազրկման է դատապարտվել, սակայն հետագայում՝ քաղաքանտարկյալների մասին նոր օրենքի ընդունումից հետո, նրան ներում է շնորհվել:

Լշենք, որ հարցազրույցը հեռարձակվում էր ուղիղ եթերով, հրավիրվածների մեջ կային նաև պատմաբաններ, գեներալներ և լրագրողներ:

Պատմաբաններից մեկը համարձակություն ունեցավ ասել, որ իբր՝ հայերը ժամանակին չարաշահել են թուրքական իշխանությունների բարյացակամ վերաբերմունքը և ամոթահար թողել-փախել են այդ տարածքներից, իսկ հայերը սփյուռքում հետևողականորեն ստեր են տարածում այդ իրողությունների վերաբերյալ: Գ. Աղաբալողլուն ի պատասխան ասել է, որ Հայոց ցեղասպանությունը իրականացվել է թուրքերի կողմից, և այն անժխտելի իրողություն է, որի վառ ապացույցն է նաև Անատոլիան... ո՞ւր է անհետացել տեղի ողջ հայ բնակչությունը: Նա հիշատակել է իր տատի վկայություններն այն մասին, թե ինչպես են թուրքերն այրել հայերի տները՝ զոչելով. «Հայերին տուն պետք չէ»:

Մի գեներալ պահանջել է ներողություն խնդրել ԱՍԱԼԼԱ-ի կատարած ահաբեկչությունների համար: Գ. Աղաբալողլուն պատասխանել է, որ ինքը ոչ մի կապ չունի ԱՍԱԼԼԱ-ի հետ, յուրաքանչյուրը պատասխանատու է իր կատարած գործերի համար: Գեներալը պնդել է, որ բոլոր հայերը պետք է հատուցեն ԱՍԱԼԼԱ-ի կողմից թուրքերի հեղված արյան դիմաց: Պատվելին պատասխանել է, որ ինքը ոչինչ չունի տալու, և եթե գեներալը շատ է ուզում, ապա կարող է վերցնել իր մարմինը և, ի վերջո, իրեն հանգիստ թողնի:

Մի հանդուգն պահանջ էլ եղել է մյուս գեներալի կողմից. «Ասացեք, որ Դուք հպա՞րտ եք թուրք լինելու համար և Ձեզ հաճելի՞ է ապրել թուրքիայում»: Գ. Աղաբալողլուն պատասխանել է. «Ես ձեզ հետ համաձայն չեմ: Նախևառաջ, ես թուրքիայում ապրող հայ եմ: Եվ երկրորդ՝ թուրքիայում ապրելը բոլորովին էլ ցանկալի չէ»: Ի՞նչ հպարտության մասին կարող է խոսք լինել, եթե թուրքիան շարունակ փորձում է թուրքացնել իր երկրում ապրող հայերին: Եվ ինչո՞ւ են թուրքերը կարծում, որ այդքան հաճելի է ապրել մի երկրում, որտեղ ամենավատ վիրավորանքը «ermeni tchojoukh» (հայի զավակ) բառն է և որտեղ դպրոցներում սովորեցնում են, թե ինչպես են հայերը կոտորել թուրքերին:

Մասնակիցներից մեկը խոսել է նորահայտ «եղբայրական գերեզմանների» մասին, որտեղ, իր պնդմամբ, հայերի կողմից սպանված թուրքեր են թաղված: Պատվելին հակառակվել է՝ ասելով. «Որտեղի՞ց գիտեք, որ դրանք հայեր չեն, ավելին, եթե մեր ֆիդայիներն են սպանել այդ թուրքերին, ինչո՞ւ էին նրանց թաղում»:

Ցեղասպանությունը ծանր հարված էր ոչ միայն մարդկային զոհերի առունով, այլև՝ մշակութային, հոգևոր և կրոնական: Ցավով պետք է նշել, որ թուրքիայում օրեցօր աճող դավանափոխ հայերի թիվը հասնում է մեկ միլիոնի: 1915-ի դեպքերը շատերին ստիպեցին, գոնե առերես, մոռանալ հայկական արմատները: Թուրքիայում կա մի փոքրիկ գյուղ, որտեղ բոլորը խոսում են հայերեն և նույնիսկ իրենք են կարծում, որ դա թուրքական հին բարբառ է:

Լշենք, որ հեռուստադիտողների համար անսովոր է եղել Գ. Աղաբալողլուի նման կեցվածքը, ինչպես ինքն է ասում. «Նրանք, հատկապես, չէին կարծում, որ ես



նրանց կհակառակվեն: Ընդհակառակը, հույս ունեին, որ ես կերգեի «հին երգը», կասեի, որ եղածը եղած է, այն պետք է մոռանալ և պետք է մտածել ապագայի մասին, այդ փաստը նրանց խիստ շփոթեցրեց»:

Տեղի հայերի արձագանքները տարբեր էին. մեծամասնությունը նախընտրել է լռել, ոմանք շնորհակալություն են հայտնել Գ. Աղաբալողլուին ցուցաբերած «քաջության» համար, ոմանք էլ նրան մեղադրել են՝ վախեցնելով հետևանքներից: Ինչ վերաբերում է Հայ առաքելական եկեղեցուն, ապա նա խուսափել է ամեն տեսակ մեկնաբանություններից:

Գրիգոր Աղաբալողլուն «France Armenie» ամսագրին տված իր հարցազրույցի վերջում անդրադարձել է Թուրքիայի՝ Եվրոմիություն մտնելու հարցին. «Իսլամ արմատականները գտնում են, որ Թուրքիայի մուտքը Եվրոմիություն, կոմի իսլամի վերջը: Եվրոմիություն մուտքը շատ ձեռնտու է արևմտահայերին, քանզի նրանք կկարողանան գոնե մի քիչ ազատություն վայելել: Սակայն, ինչպիսին էլ լինեն Եվրոպայի պահանջները, Թուրքիան վախենում է ճանաչել Հայոց ցեղասպանությունը, որովհետև չգիտի ինչո՞վ է փոխհատուցելու՝ գումարով, թե՞ տարածքով»:

Գրիգոր Աղաբալողլուն ծնվել է 1957-ին Արաբկիրում (Մալաթիա) թուրքախոս հայկական ընտանիքում: Նրա տատի հայրը սպանվել է ցեղասպանության ժամանակ: Տասնհինգ տարեկանում Գրիգորին հեռացրել են դպրոցից՝ նրան մեղադրելով քննության ժամանակ արտագրություն անելու համար: Բանն այն է, որ նա դասարանի լավագույն աշակերտն էր, սակայն, ինչպես ուսուցիչն էր ասում «giavour» էր, իսկ հայր չի կարող ավելի խելացի լինել, քան թուրքը: Այնուամենայնիվ նա վերականգնվում է դպրոցում շնորհիվ թուրք ընկերոջ և Ստամբուլի համալսարանն ավարտելով ստանում պատմաբան-աշխարհագրագետի որակավորում:

Գ. Աղաբալողլուի երկու մանկահասակ որդիները մահանում են գազի թունավորումից: Այդ սարսափելի իրադարձությունը սփոփելու համար նա սկսում է հաճախել ուղղափառ եկեղեցի և 2002-ին դառնում է հոգևոր հովիվ: Այժմ նա ունի որդի և դուստր:

Եվ արդեն հինգ տարի է, ինչ նա սովորում է հայերեն քարոզները մայրենի լեզվով հնչեցնելու համար:

**Ֆրանսերենից թարգմանեց
Ռուզաննա Ադոյանը**

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՆԱԶՄԱՆ ԲԱՆԱԶԵՎԸ ԱՄՆ ԿՈՆԳՐԵՍՈՒՄ

Կոնգրեսականներ Ջորջ Ռադանովիչը, Ադամ Շիֆերն ու Ֆրենկ Ֆալոնեն ԱՄՆ Կոնգրեսին են ներկայացրել Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ բանաձևը: Ինչպես հաղորդեցին Ամերիկայի հայկական համագումարից, բանաձևը հավաստում է ԱՄՆ դիրքորոշումը՝ ընդդեմ մարդկության, իրագործված ոճրագործության նկատմամբ:

Աղբյուրը նշում է, որ բանաձևի նախագծի համահեղինակներին միացել է ԱՄՆ ավելի քան 50 կոնգրեսական: Փաստաթղթում նախագահ Ջորջ Բուշին կոչ է արվում «երաշխավորել ԱՄՆ արտաքին քաղաքականության համարժեք ընկալումն ու վերաբերմունքը» Հայոց ցեղասպանության հարցի նկատմամբ, ինչպես նաև ընդգծվում է Ջ. Բուշի ապրիլի 24-ի ամենամյա ելույթում «1,5 միլիոն հայերի համակարգված և կանխամտածված բնաջնջման հստակ բնորոշման» անհրաժեշտությունը:

Կոնգրեսական Ռադանովիչը հպարտ է վերստին ներկայացնել բանաձևը, որը թույլ կտա պահպանել 20-րդ դարի առաջին ցեղասպանության մասին հիշողությունը:

«Օ ս մ ա ն յ ա ն կայսրությունում կատարվածի նկատմամբ երրորդ կողմերի անտարբեր արձագանքն է ընկած այն դասերի հիմքում, որոնցով մենք կարող էիք կանխարգելել ցեղասպանության կրկնումն ընդդեմ հրեա ժողովրդի, ցեղասպանությունները Կամբոջայում և Ռուանդայում», - նշել է կոնգրեսականը:



ՆՅՈՒ ՋԵՐՍԻԻ ՆԱՅԱՆԳԸ ԾԱՆԱԶԵԼ Է ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ամերիկայի հայկական համագումարի հաղորդմամբ, ԱՄՆ Նյու Ջերսի նահանգի գլխավոր ասամբլեան միաձայն ընդունել է 1915 թվականի Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձև: Միաժամանակ, նահանգի կրթության հանձնաժողովը հաստատել է Հայոց ցեղասպանության համակողմանի ուսումնասիրման ծրագրերը:

«Այս բանաձևը ճանաչում է Հայոց ցեղասպանությունը և հայերի նկատմամբ օսմանյան կայսրության հան-

ցավոր վարքագիծը համարում է միջազգային և պատմական նշանակության հարց», - ասվում է փաստաթղթում:

Ցեղասպանության ուսումնասիրման ծրագրով Նյու Ջերսի նահանգի միջնակարգ դպրոցներին և քոլեջներին կբաժանվի «Հանցագործություններ ընդդեմ մարդկության և քաղաքակրթության. Հայոց ցեղասպանություն» գիրք:



ԽԱՂՆ ԱՐԺԵ՛Ր ՄՈՄԵՐԻ ԼՈՒՅՍԻՆ

Հարցազրույցի ենթ հրավիրել երգահան, կիթառահար, Արցախի ազատամարտի մասնակից՝ Վարուժ Աղաջանյանին:

- Երաժշտության առաջ սրերը խոնարհվում են (բացառությամբ Արամ Խաչատրյանի «Սրերով պար»-ից). ինչպիսի՞ն է Ձեր երաժշտությունը:

- Իմ երաժշտության առաջ ավելի շուտ հավվում են սրտերը... Եթե վերցնենք երաժշտությունը՝ որպես սրի դեմ սուր, խոսքի դեմ խոսք, ապա իմ երաժշտությունը ավելի շատ խոհափիլիսոփայական մտքեր արտահայտող ոգեկոչում է: Իմ ստեղծագործությունները տարբեր ժանրերի են՝ լիրիկա, հայրենասիրություն, իսկ վերջին տարիներին՝ ռազմահայրենասիրություն: Իրականում երաժշտության առաջ սրերը չպետք է խոնարհվեն, ընդհակառակը՝ պիտի ոգևորեն, հատկապես՝ ազգայինը:

- Կիթառի լարերը սրտի լարերի պես նուրբ են, և արդյո՞ք դրանք Ձեր հոգու խոսքն են արտաբերում:

- Ցանկացած ազգային գործիք (մասնավաճ՝ կիթառը) մոտեցողին տալիս է այն, ինչ ուզում է լինում են և՛ սխալ, և՛ ճիշտ մոտեցումներ: Կիթառի լարերը էությանբ թախծոտ են, մեղամաղձոտ, երբեմն էլ նաև՝ ռիթմիկ և ոգևորող: Դրանք այնքան ուժ ունեն, որ կարող են հզոր զենք դառնալ:

- Տխրություն, թախծ և ընդվզում կա կիթառի ծայրի և Ձեր երգերի մեջ, ինչո՞վ եք դա բացատրում:

- Կատարողով կամ լսողով, ամեն մարդ յուրովի է այն ընկալում, հատկապես՝ կիթառի ծայրը: Ես գտնում եմ, որ հարկավոր է գործիքը սիրել և հետո նրանից վերցնել այն ամենը, ինչ ինքը ընդունակ է տալու: Այ, ես իմ գործիքը սիրում եմ այնպես, ինչպես կնոջս եմ սիրում...

- Դուք գտնու՞մ եք, որ երաժշտությունն ու զենքը նմանություն ունեն:

- Ինչպես նշեցինք, երաժշտությունը լինում է հանդարտ և կրքեր բորբոքող, նայած թե տվյալ պահին ինչ է

լսում: Եթե հոգեպես մարման փուլում ես (որին կամովի ես հանձնվել), ապա ոչ մի երաժշտություն քեզ չի արթնացնի: Իսկ հոգուդ խնդրության պահին, հայկական դուդուկի ամենանուրբ և ամենաքնքուշ, կամ կիթառի ամենանուրբ լարը կարող է քեզ դարձնել ռազմի աստված, խոսքերդ՝ ռազմատենչ երգ:

- Մենք գիտենք, որ Դուք մասնակցել եք Արցախի ազատամարտին, սակայն, գաղտնիք չէ, որ մարտիկները չեն սիրում խոսել այդ մասին, այնուամենայնիվ, ի՞նչ կպատմեք այդ տարիներից:

- Մարտադաշտից ոչինչ չեմ պատմի: Անկեղծ ասած խաղն արժեր մոմերի լույսին: Ես ավելի շատ մտածում էի զոհված հայորդիների մասին, որ տալիս էինք ռազմի դաշտում, կամ այն թաղումների, որոնց ներկա էինք լինում, կամ քաղցած այն երեխաների, որոնք քաշում էին մոր փեշից, հաց էին ուզում, որը չկար: Այդ հարցերն էին ինձ տանջում: Իսկ թուրքի հարցը լուծելը հեշտ էր, «ներքին թուրքին» էր դժվար:

- Ազատամարտն ի՞նչ տվեց Ձեզ և ի՞նչ վերցրեց իր մարտիկից:

- Ես պարզապես ազգիս փոքրիկ մասնիկն եմ, մեզանից վերցրեց մեր՝ մեղավոր փնտրելու մղումն ու ձգտումը: Չգիտեմ, մեր ազգի մեջ մի հիվանդություն է մտել. միշտ մեղավորներ ենք փնտրում: Արցախի ազատամարտը հայ ազգին ասաց, որ ապրելու իրավունքը զենքով են նվաճում: Երբեք՝ խնդրելով, մուրալով: Այ, ես իմ մի բանաստեղծության մեջ ասում եմ.

Չեն մուրում ազատություն,

Չեն խնդրում հայրենիք,

Հայրենիքի համար պայքարում են,

Հայրենիքը վերագրավում են:

- Ըստ Ձեզ՝ մշակույթը (հատկապես՝ երաժշտությունը) ինչպիսի՞ դեր կարող է խաղալ անձի ձևավորման գործընթացում:

- Տարբեր, նայած՝ ինչ է լսում, եթե հայ երիտասարդը լսի ազգային արմատներ ունեցող երաժշտություն, նույն ոգով էլ կդաստիարակվի: Այսօր նրան հրամցում ենք ոչ ազգայինը, հետո էլ մեղադրում ենք, թե ինչո՞ւ ազգային գաղափարներով չի առաջնորդվում: Նախ՝ հարկավոր է մոր կաթի հետ տալ ազգայինը, հետո երբ կհասունանա, աշխարհայացք կձևավորի, պետք չէ հրել նրան դեպի ազգայինը, նա արդեն դաստիարակված է, կճանաչի և՛ ազգայինը, և՛ արտասահմանյանը: Մեր երիտասարդությունը նախևառաջ պիտի ճանաչի դո-ից դո-ն, հետո նոր ընկնի արտասահմանյան երաժշտության հետևից:

- Ասում են՝ կիթառահարները շատ ընկերասեր են, մի քիչ պատմեցե՞ք Ձեր սրտակից ունկնդիր-ընկերներից:

- Ամեն կատարող ունի իր բիրդաշտը՝ թե՛ դրական, թե՛ բացասական, որը կարողանում է գրավել մարդկանց, ուր նրանք ինքնական են գալիս: Ես շատ կուզեմայի, որ ընկերներ չունենայի, թող տարօրինակ չինչի. ես կուզեմայի ինքս ընկեր լինել: Ես իմ բոլոր մտերիմների ընկերն եմ, ընկերությունը խորը իմաստ ունի, այն պահանջում է զո-





հաբերություն, ես չեմ ուզում, որ իմ ընկերներից որևէ մեկը ինչ-որ բան զոհաբերի ինձ համար, իսկ ինքս միշտ պատրաստ եմ դրան: Եթե զոհում ես ու հասկանում եմ, արդեն հասկանալով, իրենք էլ են զոհում: Չէ՞ որ կարող էին չհասկանալ:

- Ի՞նչ կարծիք ունեք այսօրվա երիտասարդների մասին, արդյո՞ք այսօրվա երաժշտությունը նրանց տալիս է այն, ինչ անհրաժեշտ է:

- Մենք ունենք շատ լավ երիտասարդներ՝ աչքաբաց, նպատակասլաց, մեծ-մեծ քայլերով առաջ ընթացող, ազգային ուղին բռնած: Ապագային և անորակ երաժշտությունը այն ազդեցիկ ուժն է, որ տանում է կործանման և ապագայինացման, ազգային ավանդույթների մահվան: Այսօրվա 18-20 տարեկան այդպիսի երիտասարդը երաժշտության նրբությունն ու նրա կարևորությունը կհասկանա միայն 30-35 տարեկանում, պարզապես ժամանակ է անհրաժեշտ: Մեր ազգային «դեմքը» երբեք թույլ չի տալիս շեղվել, ինչքան էլ շեղվում են, հետո ինքը բերում և նորից տեղն է դնում: Կան նաև այնպիսիները, որոնք անդարձ կորած են համարվում, պետք է աշխատել, դրա հնարն էլ կա: Անպետք ոչինչ չկա:

- Ձեր ստեղծագործական աշխատանքների մասին ի՞նչ կատեք:

- Իմ առաջին ձայներիզը՝ « Խոսիր Հայաստան»-ը, թողարկվել է 2000-ին, որը աղերսում էր տուն դառնալ. տունդարձի կանչ էր: Եթե անգամ գնում եք ուժացման, ապա, վաղ թե ուշ, տուն եք դառնալու, որովհետև արյան կանչը ամենագորեղ կանչն է, Մասիսն էլ ամենագիլ կանչողը:

Նոր ձայներիզս, որի աշխատանքները ընթացքի մեջ



են, Եղեռնի 90-ամյա տարելիցին է նվիրված, կոչվում է «Կիսատ քոչարի», այսինքն՝ Արարատը որք կմնա այնքան ժամանակ, քանի դեռ նրա շուրջ մեր ավանդական քոչարին չենք պարել: Այն համալրված է ռազմատենչ երգերով. «Ձեռքն է ճամփան փրկության՝ ի գեմ հայ եղբայր, հանուն հայոց հողի կռվենք՝ չլացի հայ մայր»: Որոշ խնդիրներ հաղթահարելով՝ թեկուզ մի քանի տարի անց, բայց կթողարկեմ այն:

Ինչո՞ւ պիտի մուրանք, երբ եղածը պետք է պահենք և վերագրավենք:

ՆԱՆԵ ՍԵՎԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍԱՐԱՎՇՈՎԱԾ Է ՀԱՄԱՐՈՒՄ ԲՈՒՆԴԵՍՔԱԳԻ ԸՆԴՈՒՆԱԾ ԲԱՆԱԶԵՎԸ



Գերմանիայի կառավարության խոսնակ Թոմաս Շտեգը, անդրադարձնալով Հայոց ցեղասպանության վերաբերյալ

Բունդեսթագի ընդունած բանաձևի կապակցությամբ Թուրքիայի իշխանությունների հակազդեցությանը, նշել է, որ այդ երկրի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի կողմից բանաձևին տրված «սխալ և տգեղ» բնորոշումը լրջագույն բացթողում է, քանի որ որոշումը

հավասարակշռված բնույթ է կրում:

Ինչ վերաբերում է Էրդողանի այն արտահայտությանը, թե Գերմանիայի կանցլեր Գերհարդ Շրյոդերը դեմ էր այդ որոշմանը և անձամբ Էրդողանին հավաստել էր այն մասին, թե կիսում է Թուրքիայում 20-րդ դարասկզբին հայերի նկատմամբ տեղի ունեցածի վերաբերյալ Էրդողանի դիրքորոշումը ճիշտ է:

«Գերմանիան շատ լավ է հասկանում, թե որքան կարևոր է պատմական պատասխանատվությունը ստանձնելու և պատմության մուկ էջերին առերեսվելու կարևորությունը խաղաղ ապագա կառուցելու համար», - հայտարարել է Թ. Շտեգը:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՎԵՐՋԻՆ ՀՈՒՅՍԸ ԹՈՆԻ ԲԼԵԵՐՆ Է

Գերմանական «Շպիգել» հանդեսի ինտերնետային կայքը Թուրքիայի Եվրոմիությանն անդամակցության հետ կապված մեկնաբանության մեջ հայտնել է, որ «Անգլիայի վարչապետ Թոնի Բլեերը Թուրքիայի վերջին հույսն է»:

Ըստ թուրքական «Ձամանի», նշելով, որ Բրյուսելում տեղի ունեցած Եվրոմիության վերջին գագաթնաժողովի

անհաջող ավարտից հետո, Թուրքիայի Եվրոմիության անդամակցության հարցը պետք է նոր քննարկումների թեմա դառնա, գերմանական հանդեսը գրել է, որ «Թուրքիայի հուսախաբված վարչապետ Թայիփ Էրդողանը հայացքը շրջել է Ֆրանսիա-Գերմանիա ուղղությունից», և որ «Թուրքիայի վերջին հույսն այժմ Թոնի Բլեերն է»:



ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿ



Հայոց բանակ... Այս բառը լսելով՝ ակամս գգում ենք վեհություն, հայրենասիրություն, ուժ ու կարգապահություն, հայրենիքին ծառայելու պատրաստակամություն: Բանակը կյանքի մեծ

դպրոց է, որն իր սաներին տալիս է ֆիզիկահոգեբանական կրթություն և աշխարհայացքի որոշակի հստակեցում:

Ձինվորական ծառայությունը Հայաստանի տարբեր մարզերում այսօր տարբեր կերպ է ընթանում: Ուշագրավ է, որ ծառայությունը Արցախի գործառնաբերում վախճանում ու անհանգստացնում է տղաներին և նրանց ծնողներին: Սակայն պետք է հաշվի առնել, որ ամեն տեղ էլ կան և՛ դժվարություններ, և՛ հետաքրքրություններ:

Ձրույցը, վերջերս զորացրված երկու տղաների՝ Յուրի Հարությունյանի և Էդուարդ Վարդանյանի հետ, որոշ չափով լույս կսփռի վերը նշված հարցերի վրա:

Յուրին ծառայել է Բերդում (Տավուշի մարզում), Էդուարդը՝ Արցախում: Նրանք պատմեցին, թե ինչպես էր անցնում ծառայությունը: Իսկ համեմատություններ ու եզրակացություններ անելուց հետո կարող ենք կարծիք կազմել՝ ուշադրություն չդարձնելով կողմնակի բանաբաններին:

-Երբ պատրաստվում էի բանակ գնալ, պատմում է Յուրին, - հասկանում էի՝ եկել է ժամանակը, որ երկու տարով հեռանամ առօրյա կյանքից և ապրեմ զորամասում ամբողջովին այլ միջավայրում, չփվեմ նոր մարդկանց հետ՝ ինձ համար բացահայտելով նոր մարդկային հարաբերություններ, կյանքի նոր կողմեր:

Եկավ օրը, և հարազատներիս հրաժեշտ տալով՝ տեղափոխվեցի մի նոր միջավայր: Ի դեպ, երբ հարցնում էինք, թե մեզ ո՞ւր են տանում, պատասխանում էին՝ Ղարաբաղ: Սակայն ինձ տարան Արմավիր՝ «Մարշալ Բաղդամյանի» անվան զորամաս, որտեղ էլ ես սկսեցի իմ ծառայությունը: Տասն օր անց զինվորական երգում սովեցի, այնտեղ մնացի չորս ամիս և ստացա կրտսեր հրամանատարի կոչում: Իսկ հիմնական ծառայությունս անցել է Բերդում և տեղ է մոտ մեկ ու կես տարի: Նորակոչիկներից շատերը գալիս էին ընկճված, և շատ քչերն էին, որ իրենց ակտիվ էին պահում, բայց որոշ ժամանակ անց բոլորն էլ համակերպվում են ու հարմարվում: Նրանք հին ծառայողների կողմից բավականին լավ էին ընդունվում. մեզ մոտ, գրեթե, անհամաձայնություններ չէին լինում: Չէ՞ որ յուրաքանչյուր նորակոչիկ ինձ ծառայողի համար շուտ տուն վերադառնալու հույսի բանալի է:

Ընդհանրապես, և՛ նորակոչիկների, և՛ հին ծառայողների համար էլ բանակում շատ դժվարություններ կան թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեբանական առումով, բայց ինքը՝ կյանքը լի է դժվարություններով, որոնք պետք է հաղթահարել: Ուղղակի պետք է լինել կարգապահ և ուժեղ, իսկ այս երկուսն այն հատկանիշներն են, որոնց պահանջը խիստ է դրված Հայոց բանակի յուրաքանչյուր զորամասում: Այսօր մեր բանակի նկատմամբ ուշադրությունը պետք է մեծացնել: Պետությունը պետք է տեր կանգնի

բանակին, քանի որ նրանից է կախված մեր երկրի անրությունը: Եթե բանակի նկատմամբ ուշադրությունը մի քիչ շատ լիներ, երկի այսօր ավելի քչերը խուսափեին ծառայությունից: Ոմանք էլ «ծառայում են տանը», սակայն իսկական ծառայությունը կատարում են պահակակետերում կանգնած տղաները, ովքեր զիջեց-ցերեկ գեները ձեռքներին հսկում են մեր երկրի սահմանները:

Մեր զորամասում ծառայությունը սովորականի պես էր անցնում, և ես գոհ եմ իմ ծառայությունից: Այսօր խոսակցություններ կան անվտանգ և վտանգավոր վայրերում ծառայության մասին: Ասում են, թե Արցախում ծառայելը վտանգավոր է, սակայն վտանգն այնտեղ է, ուր բացակայում է քաջությունը: Վտանգի չափը կախված է զինվորի պատրաստվածությունից, կողմնորոշվելու ունակությունից և կարգապահությունից:

Ձինծառայության մեջ գտնվող տղաներին մաղթում են անրություն, կամքի ուժ, քաջություն ու համբերություն: Ցանկանում են, որ շատ նամակներ ստանան հարազատներից, և, ամենակարևորը, իրենց միակ սիրելիից, քանի որ այդպես երկու տարվա միալար ծառայությունը կանցնի ավելի հետաքրքիր և արագ: Պետք է հիշել, որ հայրենի բանակում ծառայությունը յուրաքանչյուրիս պարտքն է մեր հայրենիքի և ընտանիքի հանդեպ, խաղաղության՝ գլխավոր երաշխիքը:

- Երկու օր առաջ եմ վերադարձել ծառայությունից, պատմում է Էդուարդը, - որն անցել է Արցախում: Տարօրինակ թող չթվա, բայց ասեմ, որ ես ուզում էի ծառայել հենց այնտեղ: Շատերը կարծում են, որ Արցախը հեռու և վտանգավոր վայր է, բայց իրականում այնտեղ պայմաններն ավելի բարվոք են, քան Հայաստանի մյուս զորամասերում: Ասում են, թե ծառայությունը կապված է վտանգի ու մեծ ռիսկի հետ: Ցանկացած վայրում էլ վտանգ կա, մի տեղ մի քիչ շատ, մի այլ տեղ՝ ավելի քիչ: Ճիշտն ասած՝ ինձ ձգել են դժվարությունները, վտանգը պահակակետերում, որը կոփում է ոգին, ճկուն է դարձնում միտքը:

Եթե ես Երևանում ծառայեի, վատ կզգայի, որ այդքան մոտիկ գտնվելով՝ չեմ կարողանում դուրս գալ, հաճախ տուն գնալ, սակայն գտնվելով հեռու՝ ես նույնիսկ չէի էլ մտածում այդքան մեծ ճանապարհ կտրել և քաղաք հասնել, հետևաբար հանգիստ մտքով ու սրտով ծառայում էի: Կային նորեկներ, որոնք չկարողանալով տանել ծառայության դժվարությունները, երբեմն դիմում էին փախուստի, սակայն դա ելք չէր, քանի որ դրանով նրանք ավելի էին բարդացնում իրենց ծառայությունը: Քանի որ դասակի հրամանատար էի, երբ ես էի ընդունում նորակոչիկներին, այդպիսի դեպքեր չէին լինում, իսկ պատճառը լավ վերաբերմունքն էր, որն էլ տրամադրում էր պարտաճանաչ ծառայության:

Այսօր մեր բանակի դրությունը համեմատաբար բարվոք է, սակայն որոշ զորամասերում կենցաղային պայմանները, տեխնիկան, գեներն ու զինամթերքը հնացած են ու դրանք մտածելու տեղիք են տալիս:

Ընդհանրապես, իմ ծառայությունը հանգիստ անցավ, ինձ համար մեր զորամասը, որոշ առումներով, կյանքի դպրոց դարձավ: Մինչ ծառայությունը՝ նոթատետրերն օգտագործում էինք հեռախոսահամարներ գրելու համար, սակայն ծառայության ընթացքում տղաների մոտ նկատեցի փոքրիկ նոթատետրեր, որոնք նրանք օգտա-



գործում էին որպես օրագիր, որտեղ գրում էին բանաստեղծություններ, պատմություններ, մասնակներ:

Բանակում երբեմն վկա ու մասնակից ես դառնում տարբեր զվարճալի ու տխուր դեպքերի, ծիծաղում ու տխրում ես ընկերներիդ հետ: Մի խոսքով, մի այլ կյանք ես ապրում, որն, անկասկած, ներսումդ ինչ-որ բան փոխում է: Ուզում եմ մաղթել, որ այդ փոփոխությունները լինեն միայն դեպի լավը, իսկ նորակոչիկները լինեն շատ ուժեղ, ինչպես ֆիզիկապես, այնպես էլ հոգեպես ու բարոյապես, միայն այդպես նրանք կկարողանան հեշտությամբ հաղթահարել կյանքի դժվարությունները:

ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Յ. Գ. - Յուրաքանչյուր պետության, ժողովրդի ամրության ու ապահովության գրավականը բանակն է, որը երբեք չպետք է անուշադրության մատնվի: Այն միշտ պետք



է ավելի ու ավելի կատարելագործվի:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՒՄ Է ԿՐԱԿԵԼ

Այսօր քչերին է հայտնի, որ մեզանից յուրաքանչյուրը կարող է հաճախել հրաձգարան և կրակային պատրաստություն անցնել: Դրա պատճառը երևի այն է, որ չգիտեն այսօր Հայաստանում գործող Պաշտպանա-մարզատեխնիկական, հասարակական կազմակերպության գոյության մասին, որի ճյուղերից մեկն էլ Հանրապետական մարզահրաձգային ակումբն է: Ակումբի պետը Վարդան Մնացականյանն է: Նա մեզ հաճույքով պատմեց հրաձգարանի ստեղծման, առօրյայի և անցկացվող մրցումների մասին:

- Հրաձգությունը առաջ է եկել մեր նախապապերից: Չէ՞ որ մենք նետածիզ Հայկի սերունդն ենք: Մեր օրերում էլ նետ ու աղեղի փոխարեն հրաձիգն է: 1950-ականներին մեզանում պլանավորվեց ու նախկին ԳՕՍԱՖ-ի կազմում ստեղծվեց հրաձգարան: Իր պատմության ընթացքում մեր հրաձգարանն այնպիսի հայրորդիներ է պատրաստել, ինչպիսիք են՝ Յ. Պետիկյանը և Ջ. Սիմոնյանը:

Մեր փառապանծ զենքերալի՝ Արկադի Տեր-Թադևոսյանի ղեկավարությամբ հրաձգարանը նորից զարթոնք ապրեց արդեն 21-րդ դարում, և մենք փորձում ենք լավագույն ավանդույթները պահպանել ու շարունակել:

Այժմ ոչ միայն ակումբի անդամ-երեխաներն են կրակային պատրաստություն անցնում, այլ նաև դասագորակոչային և զորակոչային տարիքի պատանիներն ու աղջիկները: Ճիշտ է, աղջիկները ենթակա չեն զորակոչային պատրաստության, բայց երբ մեր գեղեցիկ սեռը ինքն անձամբ ցանկություն ունի հրաձգությամբ զբաղվել՝ ողջունելի է: Դրա վառ արդյունքն է Շուշիի ազատագրման օրվան նվիրված մրցաշարը, որի ժամանակ ինձնամյա աղջ-



նակ Մերի Սահակյանը մասնակից 26 թիմերի մեջ հաղթանակ տարավ՝ ցույց տալով ամենաբարձր ցուցանիշը: Չնայած որ կասկածում էին՝ ասելով, որ փոքր է, զենք չի կարող բռնել, սակայն նա բոլորին ապացուցեց, որ կարող է հաղթել: Մեր պարապմունքների հիմնական նպատակն այն է, որ սաները ճիշտ տիրապետեն զենքին: Չէ՞ որ միշտ էլ պետք է պատրաստ լինենք կյանքի անկանխատեսելի շրջադարձերին: Մենք մի կարգախոս ունենք. «Յուրաքանչյուր հայի համար եռաբլուրը սրբավայր է, ամեն հրաձիգի բերած 10 միավորը մեկ հերոսի սրբագույն հոգին եռաբլուրից ետ է բերում մեր ակումբ»:

Թիկնապահական ակադեմիայի, ԵՊՀ-ի, ժողտնտեսական համալսարանի, ճարտարագիտական համալսարանի ուսանողները սիրով հաճախում են մեր ակումբ, և մեր մասնագետները նրանց հետ պարապում են մեծ սիրով:

Այժմ փորձում ենք ձեռք բերել նորագույն զինտեխնիկա, որի կարիքը շատ ենք զգում: Մեր ամենահին զենք-զինամթերքն էլ նորոգում ենք մասնագետների օգնությամբ: Այս պայմաններում պարապող երեխան գնում է մրցման և զրավում է 14-րդ տեղը, որն այնքան էլ վատ չէ, երբ մեզ մոտ ամենամոր զենքն ունի 20 տարվա պատմություն, որը պահում ենք աչքի լույսի պես (մեր չենպիսինը՝ Հարություն Ղազարյանը, դրանով էր մարզվում):

Կենտրոնական խորհրդի կողմից կազմակերպված վերջին մրցումներից ամենահետաքրքիրը մեր եզրափակիչ փուլն էր: Այն հանընկավ հայրենական պատերազմի 60-ամյակի և Շուշիի ազատագրման տարեդարձի հետ: Ուշագրավ է, որ այս մրցաշարին մասնակցում էին ոչ միայն պրոֆեսիոնալ հրաձիգներ, այլ նաև հայրենական պատերազմի վետերաններ:

Հրաձգարանը հազեցած առօրյա ունի՝ լեցուն հետաքրքիր պարապմունքներով ու դրանց հաջորդող բազմապիսի մրցույթներով: Կրակային պատրաստությունը թող որ երբեք գործնականում պետք չգա, սակայն, երբ կարիք լինի պաշտպանվել թշնամուց, լավ կլինի, որ հայր երբեք չվախենա, չընկճվի ու կարողանա արժանի հակահարված տալ:

ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Գլածոր» համալսարանի ուսանողուհի



ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ



Մ ա յ Ր Ե Ն Ի
լեզուն կրտսեր դասարաններում կրթական ու դաստիարակչական հսկայական խնդիրներ ունի լուծելու, և այդ ամենը հիմնականում կենսագործվում են ու ս ու ց մ գ գործընթացում դիդակտիկական բազմաբնույթ մեթոդներով, միջոցներով ու հնարներով:

Մայրենի լեզվի առաջին իսկ դասերից սկսվում է գրաճանաչության ուսուցումը:

Գրաճանաչության դասն այսօր ոչ միայն գրերը ճանաչելու, լեզվի հնչույթները տարբերելու, կարդալու ու գրելու կարողությունների ձևավորման, մտածողության զարգացման, այլև բարոյական, գաղափարական ու **գեղագիտական** նպատակներ է հետապնդում:

Գրաճանաչությունը իրականացվում է առաջին դասարանում՝ «Մայրենի լեզվի» դասաժամերին (նախկինում՝ նաև վայելչագրության դասերին):

Ոչ ոք չի կարող ժխտել վերջինիս դաստիարակչական լայն հնարավորությունները, հատկապես՝ գեղագիտական դաստիարակության տեսանկյունից, սակայն, դժբախտաբար, «վայելչագրություն» առարկան այսօր հանրակրթական դպրոցների ուսումնական ծրագրերում տեղ չի գտել: Նույնիսկ որոշ մանկավարժներ այն կարծիքն են հայտնում, որ ոչ մի անհրաժեշտություն չկա դպրոցներում երեխաների մեջ գեղեցիկ գրելու կարողություններ ու հմտություններ ձևավորել: Իբրև թե դա ժամանակի անհիմաստ վատնում է:

Սակայն, երբ այսօր մեր հանրապետությունում լայն հնարավորություններ են ստեղծվել աճող սերնդի կրթության համար, երբ այլ են հասարակության և կյանքի պահանջումները, պետք է նոր բովանդակություն և ձև տալ վայելչագրության ուսուցմանը, քանզի այն ունի բազմադարյան պատմություն, որի ընթացքում կիրառվել են բազմաթիվ առաջավոր ձևեր ու մեթոդներ: Վայելչագրության միջոցով մենք կարող ենք հաղորդակից դառնալ ազգային, մշակութային այնպիսի արժեքների, ինչպիսիք են՝ գրչության արվեստը, մատենական մկրտությունը, մանրանկարչությունը և այլն: Այսինքն՝ վայելչագրության ուսուցումը ունի ոչ միայն գործնական ու գեղագիտական, այլև պատմամշակութային մեծ արժեք:

Այսօրվա հանրակրթական դպրոցի կրտսեր դասա-

րաններում դասավանդող ուսուցիչները կարող են օգտվել և ստեղծագործաբար կիրառել հայ դպրության հարուստ փորձը՝ այդ ասպարեզում էլ ավելի նպաստելով երեխաների գեղագիտական կրթության ու դաստիարակության գործին:

Աշակերտների գեղագիտական կրթությանն ու դաստիարակությանը մեծապես նպաստում են **ընթերցանության** դասերը: Ընթերցանության դասը բազմաբնույթ աշխատանքների մի ամբողջ համակարգ է, որտեղ լեզվական, ճանաչողական, տեխնիկական և դաստիարակչական խնդիրները միաձուլվում են կրթադաստիարակչական այս ամբողջ համակարգի մեջ (մեզ հետաքրքրում է թեմային անմիջական ամնչվող **ընթերցանության դասի գեղագիտական կողմը**):

Գեղագիտական կողմ ասելով՝ առաջին հերթին հասկանում ենք գեղարվեստական երկի **հուզական** ընկալումը, որը հիմք է ծառայում վերջինիս գաղափարական բովանդակության ընկալման ու իմաստավորման համար:

Ընթերցանության դասը կրտսեր դասարաններում իրականացվում է **բացատրական ընթերցանության** մեթոդով, որի հիմնադիրներից ու կիրառողներից մեկը հայ դպրոցում եղել է Խաչատուր Աբովյանը: Այս իմաստով որոշակի պահանջներ է ներկայացվում ուսուցչի բանավոր խոսքին: Այդ խոսքը իր պարզությամբ, մաքրությամբ, հուզականությամբ ու մատչելիությամբ պետք է գրավի աշակերտներին, օրինակ դառնա նրանց համար: Ուսուցիչը պետք է խոսի միջին բարձրությամբ, միջին արագությամբ, հանգիստ, որպեսզի երեխաներին տրամադրի լսելու: Հայ մանկավարժական մտքի երախտավոր Սեդրակ Մանդինյանը գտնում էր, որ այն ուսուցիչը, որը դասի ընթացքում շատ է խոսում, քիչ բան է սովորեցնում, իսկ այն ուսուցիչը, որը քիչ է խոսում, սակայն աշակերտներին շատ է խոսեցնում, շատ բան է սովորեցնում: Սրա մեջ մանկավարժական խորը ճշմարտություն կա և այն պետք է ընդունել ու գործադրել յուրաքանչյուր դասի ընթացքում:

Դպրոցներում ականատես ենք եղել ընթերցանության այնպիսի դասերի, որոնց ընթացքում ուսուցիչները ընթերցանությունից հետո գրվածքի բովանդակությունը պատմել էին տալիս: Սակայն դրանից տուժում են աշակերտների **գեղագիտական ապրումները**: Պետք է հարցերի միջոցով բացահայտել պատմվածքի բնութագրող մասերը: Ընթերցանությունից հետո կարելի է հանձնարարել մկարել պատմվածքի առավել ուշագրավ դրվագները, իսկ հաջողված մկարները՝ անպայման խրախուսել:

Մի քանի խոսք **արտադասարանական** ընթերցանության մասին, որը, դժբախտաբար, մեր դպրոցների կրտսեր դասարաններում գրեթե մոռացության է մատնված, կամ էլ իրականացվում է այլ դասաժամերի հաշվին (կերպարվեստի, աշխատանքի ուսուցման, ֆիզկուլտուրայի և այլն): Վերջինիս կրթադաստիարակչա-



կան հնարավորությունները բազմազան են: Այն աշակերտների մեջ դաստիարակում է պատասխանատվության գագացում, նպաստում է նրանց կամքի, բնավորության ձևավորմանը, սովորեցնում է հաղթահարել դժվարությունները:

Սակայն սխալ կլիներ արտադասարանական ընթերցանությունը դիտել որպես, սոսկ ուսումնական ծրագրերի լրացում: Աշակերտին հանձնարարելով կարդալ այս կամ այն գեղարվեստական գիրքը՝ ուսուցիչը փորձում է նրա մեջ գիտելիքների որոշակի բնագավառի նկատմամբ կայուն հետաքրքրություն առաջացնել, որը հետագայում կարևոր ու վճռական նշանակություն կունենա ապագա մասնագիտություն ընտրելու գործում:

Ցավով պետք է արձանագրել, որ այսօրվա դպրոցականը շատ քիչ է կարդում: Նոր տեխնոլոգիաների ու բարեփոխումների շրջանում, երբ համակարգչային ուսուցումը դարձել է մանկավարժական գործընթացի անբաժանելի մասը, գիրքն ու ընթերցանությունը կարծես մոռացության են մատնվել:

Կարդալ, նշանակում է զգայուն լինել բառի իմաստի և գեղեցկության, նրա ամենանուրբ երանգների նկատմամբ ընթերցողի գիտակցության մեջ բառը խաղում է, թրթռում և երփներանգվում շրջապատող աշխարհի գույներով ու մեղեդիներով: Այդ ամենը նրա առաջ բացվում է միայն այն ժամանակ, երբ կարդալուն զուգընթաց սկսվում է բառի, նախադասության, կարդացածի իմաստն ընկալելու դժվար աշխատանքը, որը պետք է ընդգրկի ընթերցողի ակտիվ գործունեության, հոգևոր

կյանքի բոլոր ոլորտները՝ աշխատանք, խաղ, երաժշտություն, շփում բնության հետ և այլն:

Այսօր, երբ բարեփոխվում ու վերակենդանանում են բազում հոգևոր արժեքներ, անհրաժեշտություն է առաջանում դիմելու անցյալի հայ մանկավարժական մտքի ու դպրոցի պատմությանը, քանզի **Հայոց**



լեզուն ու Գրականությունը (հատկապես 19-րդ դարի դպրոցներում) միշտ էլ եղել են ուշադրության կենտրոնում և դասավանդվել հիմնականում հայ անվանի գրողների, գրականագետների կողմից, որոնք միաժամանակ հմուտ մանկավարժներ էին (Խ. Աբովյան, Յ. Ալանդարյան, Ռ. Պատկանյան, Ղ. Աղայան, Պ. Պռոշյան, Ս. Աբեղյան և այլոք): Նրանցից յուրաքանչյուրը, դասավանդելով տարիքային տարբեր խմբերում, ստեղծել էին դասավանդման յուրահատուկ մեթոդներ, հնարներ և միջոցներ, որոնք այսօր էլ ստեղծագործաբար կարելի է կիրառել մեր հանրակրթական դպրոցներում:

Ա. Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մանկավարժական գիտությունների թեկնածու

ԴԱՏԱՐԱՆԸ ՍԱՌԵՑՆՈՒՄ Է ՄԵԼԳՈՆՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՓԱԿՄԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ



Ինչպես գրել էր «Ազգ» օրաթերթը, նախապես լուրն առնելով Պոլսի «Ժամանակ» օրաթերթից, որ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Մեսրոպ արք. Մութաֆյանը Կիպրոսի դատարանում դատական հայց է ներկայացրել ՀԲԸ Միության

կենտրոնական վարչության դեմ՝ Նիկոսիայում գտնվող Մելգոնյան կրթական հաստատությունը փակելու որոշումը բեկանելու պահանջով: Նիկոսիայից օրերս ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ գործն իր վարույթ ընդունած դատարանի *Ժամանակավոր* որոշմամբ, հունիսի 7-ից սկսած, ՀԲԸՄ Միությանը և Կիպրոսում գտնվող նրա ներկայացուցիչներին արգելվում է Լիմասոլ մայրուղու վրա գտնվող Մելգոնյան կալվածքն ամբողջությամբ կամ մասնակիորեն վաճառել և կամ շահագործման տակ դնել:

Ընթերցողներին ծանոթ է, որ ՀԲԸՄ կենտրոնական վարչական ժողովուրդը դեռևս անցյալ տարի որոշել

էր վարժարանը փակել 2005թ-ի հունիսին: Այդ որոշումը քննադատվել էր վարժարանի սաների, նրանց ծնողների և աշխարհատարած շրջանավարտների կողմից: Կիպրոսի Մելգոնյան Սանուց միությունը մեկ այլ հաղորդագրությամբ ողջունել է դատարանի որոշումը՝ «արդարությունը գտնում է իր ընթացքը»: Ըստ հաղորդագրության՝ հույսեր է արթնացնում, որ վարժարանը կարելի է փրկել և դասերը կարող են վերսկսվել առաջիկա սեպտեմբերին:

«Շատերն էին աչք դրել դպրոցի կալվածքի վրա այն առևտրային շահագործման ենթարկելու, կամ շքեղ տներ ու մարզական համալիրներ կառուցելու համար: Սակայն այժմ նրանք պետք է մոռանան իրենց ծրագրերը, շնորհիվ դատարանի կողմից հայցը վարույթ ընդունելու», - ասել է Սասունց միության ատենապետ Շ. Բոհչալյանը:

«Մենք շահագրգիռ բոլոր կողմերին ուղարկում ենք հետևյալ պատգամը՝ «Ձեռներդ հեռու՛ Մելգոնյանից», - հայտարարել է Սասունց միության փոխատենապետ Մասիս Տեր-Բարթոլդը: Նա հիշեցրել է Կիպրոսի ներքին գործերի նախարարության, խորհրդարանի ու կառավարության 2004թ-ի կայացած որոշումները՝ Մելգոնյան կրթական հաստատության փակման վերաբերյալ, որը բնութագրվել է՝ որպես «թշնամական ակտ» Կիպրոսի նկատմամբ:



ՄԵՐ ԿՅԱՆՔԻ «ԵՂԻՑԻ ԼՈՒՅՍ»-Ը



Պարույր Սևակը այն հազվագյուտներից է իր իսկ երգած «մեծերից», ովքեր «ուշ-ուշ են գալիս, բայց ոչ ուշացած, ծնվում են նրանք ճիշտ ժամանակին» և գեղարվեստական խոսքի նոր հորիզոններ բացում հայրենի մշակույթի զարգացմանը նոր ընթացք տալու համար:

Պարույր Սևակի ստեղծագործական կարճատև կյանքը հագեցած էր բանաստեղծական նոր ուղիների խիզախ որոնումներով, հայտնություններով ու հաղթանակներով: Իր ճանապարհը սկսելով համաշխարհային պոեզիայի մի շարք դասականների անմիջական ազդեցությամբ՝ նա հենց սկզբից էլ ուներ նաև իր յուրօրինակ ասելիքը, մտքերի ու ապրումների աշխարհը:

Պարույր Սևակը շատ բան տվեց հարազատ ժողովրդին, մայրենի գրականությանն ու մշակույթին և դեռ ավելին կարող էր տալ, եթե ողբերգական մահը վրա չհասներ: Սակայն իր ստեղծածով բանաստեղծն արդեն իրավունք ուներ իրեն տեսնելու այն մարդկանց շարքերում, ովքեր իրենց գործով հարստացնում ու գեղեցկացնում էին ժողովրդի հոգևոր աշխարհը:

Մանուկ հասակից սկսած՝ նա զգացել ու ապրել է կյանքի և քաղցրությունը, և՛ դժվարությունը, և իր առաջին սիրո երազանքները կապել է հենց գյուղի, գյուղական աշխատանքի ու կյանքի հետ: Անսահման սերը դեպի հողը, հողի մշակը, ծառն ու ծաղիկը, որ գալիս էին մանկությունից, Պարույրի երկրորդ էությունն էին:

Դպրոցը գյուղական երեխայի առջև բացեց ուրիշ մի աշխարհ՝ գրքերի աշխարհ. «Ձարթոնքի տարիներ էին, բայց և դժվարին տարիներ: Չկար թուղթ ու մատիտ: Չկար դասագիրք: Հաճախ ամբողջ դասարանը սովորում էր մեկ հատիկ դասագրքով: Պակասում էին ուսուցիչները: Եղածներն էլ միջնակարգ և նույնիսկ թերի միջնակարգ կրթության տեր»: Պ. Սևակը հիշում է, որ իրենց դասավանդող ֆիզկուլտուրայի դասատուին տասներորդ դասարանում ինքը ստիպված գրականություն է ուսուցանել: Նա պատմում է, թե ինչպես է գիշերը գրել հաջորդ օրվա անցնելիք գրողի «կյանքն ու գործունեությունը» և առավոտյան ուսուցիչը թելադրել է այն դասարանին, իսկ Պ. Սևակն էլ բոլորի հետ գրել է նրա թելադրածը: Կամ մի ուրիշ անգամ հիշում է, թե ինչպես են երեք-չորս հոգով կեսգիշերին, գողության բոլոր կանոններին համաձայն, «կտրել» շրջակա մի քանի գյուղերի դպրոցական գրադարանները. «Կարդում էի ամեն ինչ՝ արգելված Բաֆու բզկտված վեպը (կեսն արտագրեցի), Դարվինի «Տեսակների ծագումը» (կոնսպեկտավորեցի) և այլ գրքեր...»:

Բանաստեղծություններ սկսել է գրել տասնմեկ տարեկանից. առաջին ոտանավորը գրել է Տուրգենևի «Առաջին սեր» պատմվածքը կարդալուց հետո: Իսկ դպրոցական պատի թերթում, որի «հրատարակիչը» Պարույրն էր, հրապարակում է սեփական ոտանավորը... դպրոցական ընկերուհու ամուսնով: Այնուհետև սկսում է տպագրվել Պարույր Արեգունի կեղծանունով:

Տարիներ անց համալսարանը բացեց գյուղական պատանու աչքերը. «Համալսարանական կյանքիս առաջին իսկ ամիսը իմ համալսարանական և համոզվածության վրա ոչ միայն պաղ ջուր լցրեց, այլև մտրակեց ինձ այն խարազանով, որի շաշունի բառացի թարգմանությունն է «ուշքի գալ»-ը: Ամենից առաջ իսկույն հասկացա, որ բան չգիտեմ...»:

Յարտարակված առաջին գործերը պատանի բանաստեղծի շուրջ մեծ աղմուկ առաջացրին: Քչերը հասկացան, որ հրապարակ է մտնում ինքնատիպ, սեփական աշխարհի ու մտածողություն ունեցող բանաստեղծ:

Ցավով է բանաստեղծը վերհիշում ետպատերազմյան տարիները. «Անառողջ էր կյանքն ու իրականությունը: Եվ դա առավել սուր զգացվում էր արվեստի աշխարհում... Այդ տարիներին ես հասկացա, որ մի բան մտածել և այլ բան ասելը անբարոյականության վատթարագույն տեսակն է»: Այդ ժամանակ Պ. Սևակը գրեց. «Եղի՛ր այն, ինչ կաս, հակառակ դեպքում կլինես ոչինչ»: Կամ «Գեղեցիկը միշտ չէ, որ առողջ է, միմյուրեք առողջը միշտ գեղեցիկ է: Գեղեցիկ էր մեր երազանքը, գեղեցիկ էր մեր նպատակը, գեղեցիկ էին մեր խոսքերն ու կոչերը: Բայց անառողջ էր կյանքն ու իրականությունը»:

Բառերը, որոնց միջոցով Սևակը արտահայտում է իր հույզերը, իր խոհերը, մտածումները, մտքերը, շատ թանկ են նրա համար: Նա շատ զգուշորեն է օգտագործում այն. «Իսկ բա՛ռը: Նա մնան է նորահարս աղջկա, որ միշտ հագած-կապած է, կոճկված, ամոթխած ու զգույշ: Եվ նրան մերկ կարող է տեսնել այն տառապալը միայն, որ սիրում է նրան իր կյանքից առավել և որին՝ երջանիկին, այդ պատճառով էլ սիրում է ինքը՝ բառը, որը... ամեն բառ իր գործունեության տեղը պիտի ունենա»:

Ափի մեջ դրված մարդը մինչև վերջ անկեղծ է, թաքցնելու ոչինչ չունի և բացվելուց չի վախենում, որովհետև նրա հոգեկանը լցված է ոչ թե քաղցրեմիական անմաքուր ու հաշվենկատ նվնվոցով, այլ մարդու, երկրի, աշխարհի հանդեպ ջերմագին սիրով ու սրտացավությամբ.



Մարդկանց առաջ և քո առաջ
Ահավասիկ ինքս եմ բացում
Ինչ-որ ունեմ, ինչ-որ չունեմ...

Քնարական հերոսը, որ միաձուլված է բանաստեղծի «ես»-ին, մեր ժամանակակիցն է և նրան հարազատ է այն ամենը, ինչ մարդկային է: Իսկ մարդու մեջ ամենից ուժեղ է ապրելու ձգտումը: Բանաստեղծի քնարական հերոսն էլ է ուզում ապրել, բայց ինչպե՞ս: Եվ հենց այս՝ «ինչպես ապրելու» կերպի մեջ է ամենից առաջ երևում մարդը՝ իր հասարակական, բարոյական իդեալներով: Ապրելու, լինելիության հազար ու մեկ ձևերից ու եղանակներից նա ընտրում է այն միակը՝ մարդու իդեալը: Ահա բանաստեղծի ապրելու նշանաբանը:

Ապրե՛լ, ապրե՛լ, այնպես ապրել,

Որ սուրբ հողը երբեք չզգա քո ավելորդ ծանրությունը:

«Բանաստեղծ լինել ու չունենալ ազգային պատկանելություն՝ անհնարին է, ինչպես լինել լուսի ճառագայթ ու չանդրադառնալ ջրում»: Նա կոչ է անում, որ մեր նախնիների ժառանգությունը, մեծագույն գանձը՝ մեր լեզուն, պետք է հասկանանք և չմոռանանք:

Ինքնամոռաց ու անձնագոհության աստիճանի համարձակ էր Սևակը իր գրական որոնումների ու կյանքի ճշմարտությունների բացահայտման բնագավառում: Դա տաղանդի արտահայտության ձևերից մեկն է, որը կոչված էր անադարտորեն թարգմանելու իր ժամանակի ճշմարիտ ձայները, դրանով իսկ ավելի որոշակի դարձնելու իր ժամանակակիցների ապրումներն ու խոհերը և ավելի ընդարձակելու նրանց մտահորիզոնը: Սևակի խոսքը քաղաքացիական հզոր ներգործության հասավ, նախևառաջ, ժամանակի ճշմարտության բացահայտման շնորհիվ, նա կարողացավ ասել այն խոսքը, որն իմաստավորում է տվյալ ժամանակը, որը տվյալ պահին դառնում է մարդու հոգևոր կենսագրությունը: Ամեն ժամանակաշրջան ունի իր բանաստեղծը, որը հայտնաբերում է տվյալ ժամանակի ոգին և մարգարեական գուշակությամբ պատգամներ հղում իր ժողովրդին ու իր ժա-




մանակակիցներին: Սևակը դարձավ XX դարակեսի պատգամախոսը: Նրա պոեզիան դարձավ նվիրական ու թանկ գաղտնիքներով լեցուն մի նամակ, որը հազարավոր օրինակներով հասավ հասցեատերերին բոլորի համար վերածվելով XX դարակեսի հենքի վրա ձևավորված մի ներքին հոգևոր կապ: 1971-ի հունիսի 17-ից իր ողբերգական մահից անմիջապես հետո, Պ. Սևակը ապրում է մեծերին վիճակված մեկ ուրիշ կյանքով՝ հաստատելով հանճարի անմահության հավիտենական օրենքը: Ինքն էր ասում, որ կտրվելուց հետո է միայն երևում ծառի բնի հաստությունը:

Ամենակարևորն այն է, որ Սևակի պոեզիան ոչ թե դարձավ թանգարանային նմուշ, այլ գործող ուժ՝ ի շահ գրականության զարգացման: Ահա այս միտքն են պնդում հայ և այլազգի գրեթե բոլոր բանաստեղծներն ու քննադատները:

ՄԱՐԻՆԵ ՄԱՍՅԱՆ

«Գլածոր» համալսարանի ուսանողուհի

ԱՌԱՋԻՆ ԾԻՐԱՆԵՆԻՆ



Վերջերս միտքս կլանված է Հայաստանի ծիրանների բուրմունքով, որ թեև աշխատանոցիս մեջ չկան, բայց ես հոտոտում եմ իմ ուղեղով այնքան վստահ, որքան, երբ մազլցում եմ մեր այգու ծառերը: Հիմա նրանք ծփում են գործերիս մեջ՝ որպես նուրբ գեղեցկության համեստ ծնողներ: Նրանք հորիզոնի վրա լռությամբ պարող,

մայր մտնող բազմաթիվ արևներ են և բացվող թերթերի ծաղիկներ, որոնք պարում են տաք տերևների վրա՝ բնության մեծ հանդեսի նրա լուռ հիացմունքի ներքո... Ծիրանների բուրմունքը մեր դաշտերին... Ես հաճախ եմ նկարում մեր պարտեզները և վերստեղծում նրանց կանաչությունն ու կյանքը, կարող է արդյոք մեկը մոռանալ այն հողը, որից ծագել է... Իմ գործերում ես ուղղակի ձգտում եմ արթնացնել մեր ժողովրդի բանահյուսությունը:



Մեր հայրենիքի ֆիզիկական գեղեցկությունը... Լինում են ժամանակներ, որ մտքումս միայն հայրենիքն է: Կարող են Ռուսաստանի և Չինաստանի լայնարձակությունները հասնել Արարատի հզոր գագաթին: Արարատի ներկայությամբ կարելի է լսել չորոտացող որոտի ձայնը, զգալ երկրի շարժումը, երբ երկրաշարժ չկա: Արարատը մեր բնության ուղեղն է: Հայի հոգին նրա գագաթին է, և մենք պետք է հասկանանք այս, որպեսզի ձեռք բերենք հայ ծնված լինելու իրավունքը:

**Ոստանիկ Ադոյան
(Արշիլ Գորկի)**



ՀԱՅ ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՄՈՒԹՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐԸ

Հայկական առածանին կնոջ մասին

Հայաստանը, գտնվելով Եվրոպայի և Ասիայի խաչմերուկում, դարերի ընթացքում գրեթե հավասարապես ազդվել է այդ երկու ծայրահեղ հակառակ քաղաքակրթություններից: Հայկական մշակույթը ասվածի վառ վկայությունն է: Այդ երկու ազդեցությունների շաղախը ավելի ակնհայտ է ժողովրդական բանահյուսության մեջ: Այժմ օտարները Հայաստանը անվանում են Հարավարևմտյան Եվրոպա: Սա հաստատում է այն միտքը, որ, այնուամենայնիվ, Եվրոպական ազդեցությունը ավելի մեծ է ուժեղ է եղել այն բոլոր տեղաշարժերի վրա, որոնք կատարվել են Հայաստանում: Իսկ ինչ վերաբերում է բանահյուսությանը, ապա գալով զուտ ազգային ակունքներից՝ ժողովրդական մտածողությունը իր մեջ ներառել է, առհասարակ, ողջ մարդկության փորձն ու իմաստությունը, որի ակունքը մարդասիրությունն է ու լավատեսությունը:

Ամենադաժան ճշմարտությունների, ամենաանարդար երևույթների մատուցման կատարյալ ամբողջականության խորքից բխում է ամծայր մի հավատ բարու և լավի հանդեպ: Եվ այդ լուսավոր հավատի կնիքը դրոշմված է անգամ առածի պես ժլատ ու սակավաբար ժանրում:

Հայկական առածանին ժողովրդական կենսափիլիսոփայության մի ինքնատիպ գանձատուփ է, ճիշտ նման հեքիաթի՝ թանկարժեք քարերի կախարդական գանձատուփին, որտեղ ամենափոքր քարերը ամենաթանկարժեքն են: Առածները, հայելու պես պարզ ու վճիտ արտացոլելով կյանքը, այսօր էլ համամարդկային արժեքների կենսունակ զարկերակն են: Խոսքի մեջ տեղին և դիպուկ ասված առածը արժե մի ամբողջ պատմություն:

Ժողովուրդը ժամանակ չունի իր իմաստությունները երկար ձևակերպումներով արտահայտելու: Մտապահելու և հիշողության մեջ ավելի խորը ամրապնդելու համար

նա իր իմաստությունները վերածեց պատկերավոր բանաձևերի, որոնք էլ հենց առածներն են: Կաղապարելով մտքի անսահմանությունը՝ ժողովուրդը հասավ բացարձակ ճշմարտության սահմանին: Լեզվի դիպուկությամբ և սուր դատողությունների միջոցով նա դարերի կենսափորձը դարձրեց իր բանավոր դպրոցը, ինքը եղավ և՛ իր ուսուցիչը, և՛ իր աշակերտը: Չկա ուրիշ մի ժանր, որտեղ գործածված լինեն այդքան քիչ բառեր և այդքան շատ միտք:

«Առածները հակիրճ են, բայց դրանց մեջ գրեթե մեկ խելք ու զգացմունք է դրված», - գրում է Մաքսիմ Գորկին:

Առածանիում ժողովուրդը արտահայտել է իր վերաբերմունքը կյանքի բոլոր բնագավառների հանդեպ, դրսևորել է իր անհանդուրժողականությունն ու բողոքը սոցիալական անարդարության հանդեպ, միևնույն ժամանակ ընդգծել է իր պաշտամունքը ընտանիքի նկատմամբ: Ընտանիքի մասին հայկական առածներում առաջադեմ և ազատամիտ գաղափարները գեղեցիկ ներդաշնակվում են ավանդականի հետ: Եվ հենց այստեղ, երբ խոսքը վերաբերում է նաև կին էակին, ժողովուրդը դրսևորում է ներմուծված, մեզ ոչ հարագատ, հետամնաց ու խավարամիտ դիրքորոշում, որը կրում է ասիական ազդեցության կնիքը: Օրինակ՝ «Մարդի ծեծը կնկա դրախտն է»: Սա այնքան էլ ճիշտ չի բնորոշում հայ ընտանիքի պատկերը: Կնոջ վրա ձեռք բարձրացնելը հայ տղամարդու համար ավելի շատ թուլության ու անպատվության իմաստ ունի: Տղամարդու դրվածքը և ծանրակշիռ խոսքն է եղել հայ ընտանիքի ղեկավարման բանալին: Այդ իմաստով ունենք՝ «Տղամարդու խոսքը մի փութ մեղրով չի ուտվի» արտահայտությունը, որից դեռ սովորելու բան ունեն 21-րդ դարում կնոջ վրա ձեռք բարձրացնող տղամարդիկ:

Աստծուց անհիծված կինը կյանքում էլ ապրել է և՛ անհիծված, և՛ իրավազուրկ. նրա մասին լավ արտահայտվելու հարցում մեծ վերապահումներ է ունեցել ժողովուրդը: Ի պատիվ կնոջ՝ պետք է ասել, որ հակառակ «սատանայական» կոչված իր էությանը, հակառակ բոլոր անարդարացի հորջորջումներին, առհասարակ, կինը հաստատեց երկրի վրա իր՝ երկրորդ արարիչ լինելու համճարը: Ժողովուրդը հասկացավ դա, բայց դարեր շարունակ պահպանեց ընդունված և պարտադրված վերաբերմունքը կնոջ հանդեպ: Սակայն ուշադիր կարդալով հայկական առածանին խորաթափանց աչքը չի կարող տողատակում չնկատել այն չասվածը սերունդների կողմից, անգամ ինքն իրենից խնամքով թաքցրած մեծարանքը, որ ունեցել է հայ ժողովուրդը կնոջ նկատմամբ:

Հասարակությունը և ժողովուրդը մերժել են կնոջ և տղամարդու իրավահավասարությունը, զրկել են նրան ձայնի իրավունքից, փակել են նրա երեսը: Սակայն եղել է ու կա մի ոլորտ, որտեղ կինը փայլում է իր ողջ տաղանդով, որտեղ նա ստեղծում է եղանակ, հուսալիության և ամրության հզոր երաշխիքներ: Այդ ոլորտը ընտանիքն է, կոնկրետ այս դեպքում՝ հայկական ընտանիքը:

Ժողովրդական մտածողության համաձայն՝ գեղեցիկ հագնված կինը ընտանիքի բարեկեցության և տղամարդու պատվի չափանիշն է. «Տանը՝ հաց, կնկանը՝ շոր», «Գեշ շրջագգեստի մեջ երջանիկ կին չկա», «Տունը վառես, մշահոտ չի գա» և այլ ասացվածքներ հաստատում





են կնոջ արտաքինի, հագուկապի մասին ժողովրդի առաջադեմ պատկերացումները:

Լավ տնտեսուհին ընտանիքի հարստությունն է, տղամարդու՝ հենարանը. «Հաջողակ տղամարդու թիկունքին խելացի կին է կանգնած», «Մեռնի քո կնիկ, ավրի քո տնիկ», «Մարդը աղբյուր է՝ ծլծլալեն կբերի, կնիկը ամբար է, պիտի դեմ տա ու պահի»:

Հեթանոս հայերի ողջախոհության ու իմաստության աստվածուհի Նանեն մեր ժողովրդի՝ կնոջ նկատմամբ տածած հարգանքի վառ վկան է: Հակասելով իր իսկ ստեղծած «Կնոջ մազը երկար է, խելքը՝ կարճ» առածին՝ ժողովուրդը կնոջ խոհեմությանն է ապավինել անգամ այնպիսի ճակատագրական պահերի, ինչպիսիք են՝ պատերազմներն ու գաղթը, ընտանիքի և պետության դեկավարումը:

Կնոջը տղամարդուն ստորադասելու, նրա երկրորդական դերի, անկատարության մասին խոսում են շատ ժողովուրդների առածներ, այդ իմաստով բացառություն չէ հայկականը: Քննադատելով, երբեմն ծաղրելով կնոջ թերությունները՝ հայկական առածանին չունի թեկուզ մի առած կամ ասացվածք, որտեղ կասկածի տակ առնվի կամ քննադատվի հայ կնոջ բարոյականությունը: Դա անվիճելի, անքննելի մի իրողություն է, որի մասին վայել չէ անգամ մտածելը: Հայ կնոջ անաղարտ, բարոյական կերպարը կարմիր թելի պես անցնում է ժողովրդական բանահյուսության բոլոր ժանրերում: Կնոջ մասին ստեղծված առածներում կան գլուխգործոցներ: Գլուխգործոցը մնում է գլուխգործոց՝ անկախ այն բանից դրակա՞ն կողմով է բնութագրում կնոջը, թե՞ բացասական: Կնոջ խելամտությունը թույլ է տալիս ընդունել իր թերությունները (քանզի մարդը անսխալական չէ), մի կուշտ ծիծաղել դրանց վրա և ասել. «Գորդը տանի, ինչ վատ է, բայց ի՞նչ ճիշտ է»: «Արտառոց» ճշմարտությունները մնան են սառը և կազդուրիչ ցնցուղի, որից չի վախենում կինը:

Առածներ կնոջ մասին.

Հյուրը պատվողն էլ, անպատվողն էլ տանտիկինն է:
Հորից եթիմը եթիմ չէ, մորից եթիմն է եթիմ:
Երիկ-կնիկ կռվեցան, տխմար գիտցավ բաժանվեցան:
Մարդը՝ զանգակ, կնիկը՝ բամբակ:
Կնկա կռիվն էլ կռիվ է, կեսկռիվն էլ կռիվ է:
Ինձ մի աշե, բախտիս աշե:
Շուշանը շփոթ եփել է չգիտեր, տվին վանքի խավձարով:
Թուրը մի մարդ կսպանի, կնկա լեզուն՝ մի բանակ:
Աշխարհում ամեն բան կճարվի, բացի հերն ու մերը:
Հերը՝ հարևան, մերը՝ բարեկամ:
Անորդի կինը մի դարդ ունի, որդի ունեցողը՝ հազար:
Մերն ասաց. «Գարնան արևը՝ տղուս ու հարսիս, աշնան արևը՝ փեսիս ու աղջկաս»:
Հոր համար աղջիկը լուսին, մոր համար՝ արեգակ:
Ազռավի ճուտը մոր համար ազիզ է:
Որդին բռուն ձվածեղ էլ որ անի, մոր ամակի տակից դուրս չի գա:
Տղամարդը տան դրսի պատն է, կինը՝ ներսի:
Լավ թուխսը իր ճուտերի գլխին կպտտի:
Մորը տես՝ աղջիկն առ:
Մեր կա մերուկ է, մեր կա փտած ձմերուկ է:
Հոր անունը աղջկան կծախի:
Աղջկա օժիտը մոր լավ անունն է:
Ասլանին էգ ու որձ չկա, մոր ջիգյարին՝ տղա, աղջիկ:
Որբին ասին՝ ինչո՞ւ կուլաս, ասավ՝ ո՞ւր է իմ մերը:
Քույրը գնաց քվորանց, հենց իմացան՝ գնաց հորանց:
Մարդի շվաք, վարդի շվաք:



Աղեկ կին-չունի գին:
Աղջիկը ոսկե օրոցքով թող հոր տուն չդառնա:
Կնիկմարդ կա տուն կշինե, կնիկմարդ կա տուն կքանդե:

Հարսին հերանց տուն ասա, ոտաբոբիկ էլ կերթա:
Հարսը ասաց. «Համ կուլամ, համ կերթամ»:
Ոչ լավ սկեսուր կա, ոչ լավ հարս, կա լավ տղամարդ:
Հարևանի հարսը միշտ սիրուն է:
Անբախտ աղջկան հենց օրորոցում պիտի խեղդեն:
Սիրուն կնիկը մարդու գլխին փորձանք է:
Թե մարդ իմանար կնկա ուզածը, չէր լինի էսքան կոտորածը:

Կնկա «հան» չէ է, «չէ»-ն՝ հա:
Ամեն կին իր մարդու աղբյուրն է:
Անտեր մնաս կնկա բողազ, ինչ որ տենաս՝ կողոզաս:
Կնկա մի ձեռքը գող լինի, տունը շեն կլինի:
Առյուծն առյուծ է, էգ թե արու:
Կնոջդ լսիր, բայց հակառակն արա:
Ուշքը հերանց կինը տանուտեղի տեր չի դառնա:
Կնոջ կարծիքը հաշվի առնելը ոչ թե թուլության, այլ հեռատեսության նշան է:

Մոր գովածը թող ու փախի, հարևանի գովածը՝ առ ու փախի:
Սկեսրոջ մեկ ականջը խուլ, մեկ աչքը բոռ պիտի լինի:
Սկեսրոջ ուժը հարսին հերիք է:
Ջոքանջը, որ լավ բան լիներ, Աստված էլ կունենար:
Հարսի անուշությունը խոնարհության մեջ է:
Աղջիկն օրեկան, բաժինքը՝ տարեկան:
Կնոջ օժիտը դռնից կախված զանգ է, ոնց անցնես կզնգա:

Մի եկեղեցի քանդելը կամ մի աղջկա անուն հանելը մի հաշիվ է:
Շոր տուր շնորիք տամ, հաց տուր ռանգ տամ:
Մի կին կա հազար արժե, հազար կա՝ մեկ չարժե:
Ածան հավը կզկչան կլինի:
Կնկա լեզուն խելքից առաջ է ընկնում:
Կտավ գործող կինը՝ ապրեշուն գործողին չի հավանի:

ԿԱՐՄԵՆ ԱՅԱՐՈՆՅԱՆ



ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՅԻ

Հայ մեծ գիտնական, փիլիսոփա, աստվածաբան, մանկավարժ և ազգային գործիչ Անանիա Շիրակացին (610/615-685/690) միջնադարյան հայ մատենագրության փայլուն դեմքերից մեկն է: Հեղինակ է մի շարք տիեզերագիտական (Կենդանատեսակների մասին, Աստղաբաշխության մասին, Երկնային երևույթների մասին, Արեգակի ընթացքը համաստեղություններով) աշխարհագրական և քարտեզագրական (Աշխարհացույց), թվաբանական, կրոնաբարոյախոսական (Ձղջման ճառ, Հանելուկ-դիմակք, Խոնարհության մասին, Խրատ քահանաներին), տոմարական և այլ աշխատությունների (Տոմարի պատճենը, Յաղագս ՇԼԲ-ի): 5-րդ դարի հայ մատենագիրներից հետո ամենախոշոր հեղինակը կարելի է համարել նրան: Եթե Մովսես Խորենացին հայ պատմագրության հայրն է, ապա Անանիա Շիրակացին՝ հայ ճշգրիտ գիտությունների:

Հետաքրքրական են Շիրակացու աստվածաբանական մտակառուցումները, ի դեպ, պետք է նշել, որ Թովմա Մեծովփեցին նրան հիշում է *աստվածաբան* տիտղոսով: Շիրակացին տեսականորեն հիմնավորում է Աստծո գոյությունը՝ որպես անսկիզբ, անարար, անմարմին, տարածությունից և ժամանակից դուրս գտնվող գերագույն գոյ, որը բոլոր գոյացությունների սկզբնապատճառն ու ստեղծողն է: Իսկ արարված աշխարհն ունի սկիզբ, գտնվում է տարածության և ժամանակի մեջ, նյութական է, այսինքն՝ ենթակա է քայքայման ու ոչնչացման: Արարված ամեն ինչ գտնվում է շարժման մեջ: Այստեղ, անդրադառնալով սկզբնատարրերին, Շիրակացին փորձում է նրանց շարժման աղբյուրի մասին դատողություններով հանգել հետևյալ եզրակացությանը (օգտագործելով Արիստոտելի հարցադրումները)՝ շարժման սկզբնապատճառը՝ սկզբնաղբյուրը, անհարժեշտաբար պետք է անշարժ լինի, որովհետև հարցի միայն այդպիսի լուծումով է վերանում շարժման աղբյուրի անվերջ ծագող խնդիրը: Հետևաբար, ամբողջ գոյի անսկիզբ և անմարմին սկզբնավորողը, և աշխարհի անշարժ, անփոփոխ շարժիչը նույնական են: Իսկ այդպիսին է Աստված՝ «Ամեն ինչի արարիչն ու շարժիչը»:

Աստծո գոյությունը նա հիմնավորում է նաև միջնադարում տարածված նպատակաուղղվածության (նպատակահարմարության) սկզբունքով:

«Բնության մեջ առկա է ներքին՝ ի վերուստ տրված նպատակաուղղվածություն, որի աղբյուրը և շարժիչն է»: Սկզբնատարրերի՝ հողի, օդի, ջրի, կրակի մասին գիտնականը գրում է, որ Աստված նախ՝ ոչնչից ստեղծել է այդ չորս սկզբնաղբյուրները՝ դրանց հաղորդելով զույգ հակադիր որակներ և շարժման ունակություն: Աշխարհի առաջացման կամ ստեղծման, սկզբնանյութերի կամ սկզբնապատճառների հարցը փիլիսոփայական և առհասարակ հավերժական խնդիրներից է: Նա պաշտպանում է այն տեսակետը, որի համաձայն՝ այն ամենն ինչ գոյություն ունի, լինում է երկու տեսակի՝ անմարմին (ոչ նյութական) և մարմնական (նյութական): Ըստ նրա, քանի որ նյութը «սկզբնավորված է», հետևաբար այն չի կա-

րող ամբողջ գոյի սկիզբը լինել, որովհետև՝ իբրև այդպիսին, այն պետք է իր գոյացման համար պատճառ և սկիզբ ունենա: Հակառակ պարագայում (այսինքն՝ նյութական սկիզբը նյութական համարելու դեպքում) սկզբի հարցը չի վերանում, քանի որ մենք ընկնում ենք անվերջության մեջ: Աշխարհի ստեղծումը, տիեզերքի առաջացման ընթացքը Շիրակացին փիլիսոփայական հարթության վրա դիտում է՝ իբրև հարաբերականորեն ինքնուրույն և «բնական» գործողություն: Արարչագործությունից հետո նյութական աշխարհում տեղի է ունենում իրերի և երևույթների անվերջ գոյացում և ոչնչացում: Դա բնական համակարգի գոյության և պահպանման հիմնարար օրենքի նշանակություն է ձեռք բերում, տիեզերական ընթացքի դրսևորման կարևորագույն ձևերից է, որի բնական պատճառները և աղբյուրը հակադրամիասնության սկզբունքն է, որն իշխում է զգայական-նյութական աշխարհում:

Նա բարձր է գնահատել մաթեմատիկայի գիտական-ճանաչողական դերը՝ այն համարելով բոլոր գիտությունների մայրը: «Բոլոր գիտություններ» ասելով՝ Շիրակացին նկատի ունի բնական համակարգն ուսումնասիրող գիտությունները, ուստի՝ մաթեմատիկայի հիշյալ բնութագրումը չի տարածվում աստվածաբանության վրա: Նրա աշխատությունների վերնագրերի և բովանդակությունների հարաբերակցումը Արիստոտելի և Դավիթ Անհաղթի դասակարգման հետ հնարավորություն են տալիս ուրվագծել բնագիտական առարկաների համակարգը: Դրանք են՝ տիեզերագիտություն, աշխարհագրություն (տեսական և նկարագրական), օդերևութաբանություն (գիտական և ժողովրդական), տարրաբանություն (տարրական, ֆիզիկական և տիեզերաբանական առումներով):

Ամբողջ աշխարհը ստեղծվել է մարդու համար, ուստի, և մարդկային բանականության արդյունք հանդիսացող գիտությունը և կրթությունը պետք է ծառայեն մարդուն: Դրանք երկակի դեր են կատարում տեսական, ճանաչողական և կենսագործնական: Առաջին գործոնը նպաստում է արարված աշխարհի իմացությունը, և այդ ճանապարհով Աստծո գոյության ապացուցմանը, իսկ երկրորդը օգնում է մարդուն կենսագործունեության մեջ:

Կարևորելով կրթությունը և դաստիարակությունը՝ չպետք է անտեսել նաև բնատուր ունակությունը: Բնատուր կարողությունները սոսկ նախադրյալներ են, որոնք բացահայտման, զարգացման կարիք ունեն: Դասավանդման ընթացքում Շիրակացին կարևորում է նյութի մատուցման ձևի, դասագրքերի կառուցվածքի մեթոդական ցուցումների պարզությունն ու հստակությունը, որոնք ապահովում են նյութի առավել խորը և դյուրին յուրացումը (մատչելիության մեթոդ):



Անանիա Շիրակացու կազմած բոլորակներից

ԱՇԽԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի
ասպիրանտ



ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Մայրավանք լինելով՝ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի սրբատեղին ավելի ծանրակշիռ հանգամանք է ունեցել, որովհետև այնտեղ պսակի կամ թաղման արարողություն չի թույլատրվել: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսը (1773-80թթ.) Մայր Աթոռից 200-250մ հեռավորության վրա կառուցել տվեց փայտաշեն մի եկեղեցի՝ մկրտության, պսակի և թաղման արարողություններ կատարելու համար: Սբ. Աստվածածին եկեղեցու հիմքը դրվեց 1767-ին: Այն այսօր էլ ժողովրդի լեզվով կոչվում է «գյուղի եկեղեցի»:

Սիմեոն Ա-ն իր «Ջամբը» աշխատության մեջ գրում է. «Նույնիսկ Էջմիածին կամ Վահագնապատ գյուղում էլ, որ կից եւ անմիջոց վայրօք եւ խառնիխուռն շինուածով շրջափակեալ էր վանքը,



տուները քակելով հեռացավ ի պարիսպէն, եւ նոր տուներ եւ գիւղի եկեղեցին շինեց իւր եւ արդեամբն»:

Շուրջ մեկ դար հետո փայտաշեն եկեղեցին փոխարինվել է քարակերտ մի կառույցով: Այդ մասին գրում է Ղևոնդ Ալիշանը. «Յետ դարու միոյ առ միօք քակեալ գեկեղեցին շինեցին քարակերտ և ընդարձակագոյն եւս ի վերայ վեցից սեանց»:

Հայ ճարտարապետության գլուխգործոցների հարևանությամբ (Մայր Աթոռ, Գայանե, Հռիփսիմե) այս քարաշեն եկեղեցին զիջել է իր ճարտարապետությամբ: Եկեղեցին ունի բազիլիկ ձև, որն ընդունված է եղել միջնադարյան եկեղեցական հայկական ճարտարապետության մեջ, բայց չի ունեցել սովորական զանգակատուն: Չանգերը ժամերգության և պատարագի ժամանակ ղողանջել են հատուկ պատրաստված գմբեթաձև մի երկաթյա սարքից, որից կախված են եղել: Այն տեղադրված է եղել տանիքի վրա և եկեղեցու վերանորոգման ժամանակ հեռացվել է: Եկեղեցու արտաքին պատերի մեջ տեղադրված են մի քանի խաչքարեր, որոնք նույն ժամանակաշրջանի գործեր են: Խաչքարերը հիմնականում փորագրված են տուֆ քարի վրա: Եկեղեցու խաչքարերից միայն մեկի վրա կա արձանագրություն, բայց այն ընթերցելի չէ: Խաչքարեր կան նաև եկեղեցու ներսում, մեկը՝ մկրտության ավազանի պատի մեջ, մյուսը՝ Սուրբ Սեղանի առջևի մասում: Երկու խաչքարերի հեղինակն էլ Էդիկ Հակոբջանյանն է:

Շուրջ յոթ տասնամյակ եկեղեցու շենքը մնացել է առանց խնամքի: Այդ պատճառով 20-րդ դարի երկրորդ կեսից սկսած խիստ կարիք կար եկեղեցու հիմնական վերանորոգման: Սբ. Աստվածածին եկեղեցին իր ծաղ-

կուն շրջանն է ապրել Ամենայն Հայոց Ս. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի գահակալության շրջանում: Մայր Աթոռի ճարտարապետական հանձնաժողովը 1981-ի փետրվարին ծանոթացել է եկեղեցու տեխնիկական վիճակին, որից հետո կազմել է եկեղեցու վերանորոգման նախագիծը (հեղինակ-ճարտարապետ Ա. Գալիկյան, մասնակցությամբ՝ ճարտարապետ Հ. Բաբախյանի): Սկզբից հեռացրել են եկեղեցու փայտաշեն վերնահարկը, պատերը մաքրել են ծեփից և պատել են տուֆե սալիկներով: Սալարկվել է բեմի հատակը, նորոգվել՝ բեմապատը, վերաշարվել է աղոթասրահի հատակը, սարքավորվել է նոր մկրտարան-ավազանը, Ավագ խորանում տեղադրվել է նոր բեմասեղան: Բակի հյուսիսարևմտյան անկյունում կառուցվել է երեցտուն, ցանկապատվել է բակը: Քանի որ եկեղեցին զանգակատուն չի ունեցել, ձեռնարկվել է նաև զանգակատան շինությունը (նախագծի հեղինակ-ճարտարապետ Թ. Գևորգյան): ճարտարապետական մշակումների արդյունքում ստացվել է եռաստիճան զանգ-աշտարակ, որն իր հորինվածքով ներդաշնակվել է ուշ միջնադարյան եկեղեցու ճարտարապետությանը (բարձ. 22.5մ):

Չանգակատան հանդիսավոր բացումը կատարվել է 1987-ի սեպտեմբերի 29-ին՝ Վեհափառ Հայրապետի ձեռամբ և տիկին Տորիս Չննոգյանի բարերարությամբ: Եկեղեցու հարավարևելյան պատին պահպանվել է հայերեն՝ գրաբար և աշխարհաբար մեկական արձանագրություն.



«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԱՌՈՒՑՎԵԼ Է 1767 ԹՎԱԿԱՆԻՆ՝ ՍԻՄԵՈՆ ԵՐԵՎԱՆՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՈՔ,

ՉԱՆԳԱԿԱՏՈՒՆԸ ԿԱՌՈՒՑՎԵԼ Է, ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԵԼ Է 1988 ԹՈՒԿԱՆԻՆ՝ Ս. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՈՔ»:

Եկեղեցու բերեկարգման աշխատանքների ծախսը հոգացել են Մայր Աթոռի արգենտինահայ բարերարներ՝ Վահե և Տորիս Չննոգյանները: Այդ մասին եկեղեցու արևմտյան դռան շենագլխին՝ ներսի կողմից, փորագրված է.

«Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆՈՐՈԳԵՑԱԻ ԵՒ ԲԱՐԵԶԱՐԴԵՑԻ ԵԿԵՂԵՑԻՍ ՅԱՆՈՒՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԱՅ ԱՐԴԱՐԵԱՍԲ ՎԱՅԵ ԵՒ ՏՈՐԻՍ ՉՆՆՈԳԵԱՆ. ՊՈՒՆՈՍ ԱՅՐԵՍ Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑ. ՌՁՁԵ» (1985թ.):

Եկեղեցու բակում կա մի աղբյուր-հուշարձան, որը մվիրված է բարերար Վահե Չննոգյանի հիշատակին:

ԳԱՅԱՆԵ ՀՈՎՍԵԹՅԱՆ



ԿԻՆՈԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԺԱՆՐ

**«Մեծ մարդկանց կյանքը սկսվում է նրանց մահվան պահից»:
ԺԱՆ ԼՅՈՒՍԵՆ ԱՐԻԵՆ**

Անհիշելի ժամանակներից ժողովուրդը սիրում էր նրանց, ովքեր ծիծաղեցնում էին: Նախապատմական տոնահանդեսներում դափնեպսակով զարդարում էին այն անծանց ճակատները, ովքեր ավելի լավ էին պարում ու երգում, նմանակում էին կենդանիների, ծաղրում էին բարեկամներին ու թշնամիներին: Հին Հունաստանում՝ Դիոնիսյան խաղերի ժամանակ էլ ծնունդ առան թատերական կատակերգական հանդեսները, որտեղ ծաղրվում էին ոչ միայն կառավարիչները, այլև բանը հասնում էր ամենագոր աստվածներին:

Միջնադարում խեղկատակները, ծաղրածուները, կենդանիներ վարժեցնողները, աճաբարներն ու երգիչները չէին խնայում իշխանավորներին իրենց զավեշտական խաղերով ու երգերով:

20-րդ դարի սահմանագծում մարդկությունը խնդիր ուներ կերպարայնորեն և գեղարվեստորեն իմաստավորել իրականությունը: Հենց սա էլ ծնունդ տվեց մի նոր ու զորեղ մասսայական արվեստի՝ կինոյին: Եվ ամենևին զարմանալի չէ, որ առաջին խաղարկային կինոնկարը՝ Լյումիեր եղբայրների «Ձրողողված ջրողը» փողոցային զավեշտական մի պատկեր էր հիշեցնում՝ կինոանեկդոտ:

Եվ ամենևին էլ պատահական չէ, որ «կոմիկական» կոչվող կատակերգական համր կինոյի առաջին ժապավենները կառուցված էին էքսցենտրիկ տրյուկների, կրկեսային, մյուզիք-հոլլային ներկայացումների տարրերով: Այս ժամանակաշրջանի համր ժապավենների ստեղծմանը մասնակցում էին այնպիսի վարպետ կատակերգու-դերասաններ, ինչպիսիք էին՝ Մակ Սեննեթը, Անդրե Դիդը, Մաքս Լինդերը, Չարլի Չապլինը, Հարոլդ Լլոյդը, Բեստեր Կիտոնը:

Ծիծաղ առաջացնելու գլխավոր պատճառը հաճախ ձևի և բովանդակության անհամապատասխանությունն է հերոսների արտաքին տեսքում, կամ ընդունված կանոններին ու սովորույթներին չհամապատասխանող երևույթներն ու դեպքերը:

Կատակերգությունը՝ դրամատիկական ստեղծագործության տեսակ է, որի հիմնական առանձնահատկությունը իրականության կատակերգական վերարտադրությունն է:



Ծիծաղը այն հիմնական միջոցն է, որով կատակերգությունը ներգործում է հանդիսատեսի վրա:

Ո՞վ կինոկատակերգություններ չի սիրում, երբ կինոդահլիճում կամ հեռուստատեսության հնչում է ծիծաղը և բարձրացնում՝ մարդկանց տրամադրությունը: Կինոկատակերգության այս հզոր ժանրն էլ 20-րդ դարասկզբից

ծնեց իր հսկաներին: Այդ հսկաների փաղանգի առաջին և խոշոր ներկայացուցիչը Անդրե Դիդն էր: 1905-27թթ. նա նախանձելի աշխատասիրություն ուներ (նկարահանվել է մոտ քսան փոքրիկ ֆիլմերում և անընդհատ հղանում էր նորանոր սյուժեներ): Դրանցից երկուսը նրա սիրած հնարքները դարձան՝ գլխապտույտ թռիչք ամպերի տակ և սրընթաց անցում պատի միջով: Չնայած իր հռչակին՝ նրան շուտ մոռացան և թռուցիկ հիշատակումներ մնացին կինոյի պատմության մեջ:

Իսկ Մաքս Լինդերը ավելի «երկարակյաց» եղավ: Նա էլ Դիդի պես 1905-ին սկսեց նկարահանվել, բայց նրա դերասանական կենսագրությունը ավելի բախտավոր եղավ: 1908-ին մեկնեց Իտալիա՝ նկարահանվելու, 1912-ին Բեռլինում նկարահանվեց չորս ֆիլմում, իսկ 1919-ին մեկնեց Հոլլիվուդ, ուր և հանդիպեց Չապլինին: Այս հանդիպումը անմահացել է մի լուսանկարում, ուր երկու մեծերը՝ ֆրանսիացին և ամերիկացին, կանգնած են կողք-կողքի: Երկուսն էլ ձեռնափայտերով, կոտելուկներով, ոտքը ոտքին զցած, երկուսն էլ ժպտում են: Եթե Լինդերը ֆրանսիացի կատակերգու էր, Չապլինը՝ համամարդկային: 1925-ի հոկտեմբերի 31-ին Լինդեր ամուսիններից զտան կտրված երակներով: Կատակերգուի հիշատակը մոռացությունից փորձեց փրկել դուստրը: Նա փնտրեց ու գտավ հոր հին կարճամետրաժները և 1963-ին էկրանին հանձնեց «Մաքս Լինդերի հետ» նկարը:



Աշխարհի էկրաններով արշավում էին Կիտոնի, Լլոյդի, Պատի և Պատաշոնի նկարները: Բայց շուտով նրանց էլ մոռացան: Հնչունային կինոյի և Դիսնեյի գունավոր մուլտիպլիկացիայի ստեղծման հետ կատակերգական համր ժապավենը պարտվեց: Դիմացավ միայն Չապլինը՝ մեծ ու հանճարեղ կատակերգու:

Չապլինի գլխավոր հերոսը դարձավ հենց ինքը՝ Չարլին՝ իր դերասանական «դիմակով»: Տարիների ընթացքում այդ «դիմակը» ապրեց որակական առաջընթաց՝ հարստանալով և՛ գաղափարական, և՛ հոգեբանական հատկանիշներով: Չապլինի հեզմանքը, ծիծաղը, սրամտությունը մեծ մասամբ ուղղված են այդ փոքրամարմին մարդուն՝ իր հերոսին: Թեև մեծ դերասանի արվեստում կատակերգականն ու դրամատիկականը փոխկապակցված են հանդես գալիս, բայց հանդիսատեսը նրա ֆիլմերում նախևառաջ կատակերգական տարրերն է ընկալում: Այդ է պատճառը, որ հանդիսատեսների համար Չապլինը մեծ կատակերգու է:

Իր առաջին համր կոմիկական ժապավեններից մինչև վերջին «Հոնկոնգոյի կոմսուհին» կատակերգությունը, Չապլինը աշխարհի ժողովուրդների համար մնաց՝ որպես ծիծաղի արքա:

Եթե անցյալ դարասկզբին ֆրանսիացի Ժ. Մելիեսի կինոժապավենների միջոցով, որոնք ստեղծվել էին



իտալական «դիմակների կոմեդիայի» սկզբունքներով, համր կինոյի կատակերգական դպրոցը սկզբնավորվեց, ապա տարիների ընթացքում կոմիկական ժանրը առաջընթաց ապրեց աշխարհի մյուս ժողովուրդների կինոկատակերգուների արվեստի շնորհիվ:

Այդ ժանրի լավագույն ներկայացուցիչները դարձան (արդեն հնչուն կինոյում) Իգոր Իլյինսկին, Էրաստ Գարինը, Մարքս եղբայրները, Ֆերնանդոլե, Տոտոն, Յան Վերիլը, Լուի Դը Ֆյունեսը, Բուրվիլը, Ալբերտո Սորդին, Նորման Ուիզգոմը, Պիեռ Էտեքսը, Յուրի Նիկուլինը:

Կոմիկականը և կատակերգականը, որպես ժանրի զարգացում, ապրեցին նաև խորհրդային տարիներին, երբ ռուսական կինոարտադրության ժապավենների կողքին ավելացան նաև ազգային հանրապետությունների կինեմատոգրաֆի կատակերգական ստեղծագործությունները: Միխայիլ ժարովի, Սերգեյ Մարտինսոնի, Լյուբով Օռլովայի անունների կողքին դասվեցին նաև ազգային կինոյի հիանալի վարպետներ՝ վրացի Սերգեյ ժորժուլիանի և հայ Յամբարձում Խաչանյանի անունները: Վերջինս կատակերգական ժանրում ստեղծեց այնպիսի կերպարներ, որոնք հայ կինոյի պատմության մեջ մնացին որպես գլուխգործոցներ՝ Շորը («Շոր և Շորշոր»), Դարչո («Պեպո»), Նազար («Քաջ Նազար»): Խորհրդային ռուս կինոբեմադրիչներ Լեոնիդ Գայդարն ու Էլդար Ռյազանովը իրենց ստեղծագործություններով զարկ տվեցին կինոկատակերգական ժանրին, որն էլ իր հերթին ծնեց դերասանների, որոնք թվում Յուրի Նիկուլինին, Եվգենի Մորգունովին, Գեորգի Վիցինին: Այս երեք դերասանները տարիներ շարունակ կինոֆիլմերում կոմկերտ ու կայուն կերպարների անձնավորման անուններ ունեցան:

3. Նիկուլին (Բալբես-դմբո), Ե. Մորգունով (Բիվալի-ընկած-ելած մարդ), Գ. Վիցին (Տրուս-վախկոտ). նշանակում է խորհրդային կինոկատակերգության ժանրում հայտնվեցին երեք մշտական գործող կերպարներ: Թեև «Բարբոս շունը և անսովոր վագրը», «Օղի թորոզները», «Օպերացիա Ի» կարճամետրաժներում և «Տվեք բողոքի գիրքը» լիամետրաժ կինոնկարում նրանց զբաղմունքի տեսակը կարող էր փոխվել, բայց կերպարների անունները, ինչպես և բնավորությունները մնում էին անփոփոխ: Տրուս-վախկոտը, երբեք քաջ չէր դառնում, ոչ էլ Բալբես-դմբոն՝ խելացի, կամ էլ Բիվալի-ընկած-ելածը՝ լուրջ մարդ: Կարևորն այն է, որ անձնավորելով նույն հերոսներին, դերասանները երբեք չէին կրկնում իրենց: Մի դեպքում՝ որսագողեր, որոնք զանազան պատահարների հետևանքով քիչ էր մնում զրկվեին կյանքից, բայց պատառոտված շորերով, ոտքից գլուխ կեղտոտված, պայթյունից շճած ողջ են մնում: Մի ուրիշ դեպքում՝ Տրուսը, Բալբեսն ու Բիվալին հանդես են գալիս որպես վաճառողներ, մի այլ դեպքում էլ՝ պորտաբույծներ:

Ինչպես արդեն ասացինք, կատակերգական ժանրը կինոյում հարյուր տարուց ավելի ծիծաղ ու քրքիչ էր քանում հանդիսատեսներից: Ժանրը ունեցավ հետնորդներ՝ մեծեր: Դրանց թվում կառանձնացնեինք երեքին. Չապլին-ծիծաղի արքա, դը Ֆյունես, Նիկուլին, որոնց մասին կփորձենք երկու խոսք ասել:

...Ֆրանսիացի Լուի դը Ֆյունեսը առաջին մեծությամբ ասող է: Դիմա ոչ ոք չի հիշում, թե սկզբնական շրջանում, ե՞րբ սկսեց նկարահանվել և ինչո՞ւ չընդունվեց: Դժվարությամբ հասավ փառքի: Դեռ հայտնվում էր Էլրանին, պայթում էր քրքիչը: Ինչքան տարբեր կերպարներ պետք է անձնավորեր արտիստը, որպեսզի կարողանար սովորական իրավիճակներում իսկ ծիծաղ առաջացնել: Յուրաքանչյուր ծաղրածու իր համար դիմակ է

գտնում: Ժամանակին Ֆյունեսն էլ էր գրիմավորվում, բեղեր կպցնում, կեղծամ դնում: Բայց հետո հրաժարվեց: Այդ ամենը խանգարում էին իրեն, ծածկում սեփական դեմքը, որ արտակարգ շարժում է ու արտահայտիչ: Նա խելամիտ արվեստագետ էր և լավ գիտեր իր հնարավորությունները: Նրան հաջողություն բերեցին ամենից առաջ արագ շարժումներն ու չափազանցված դիմախաղը: Ֆյունեսի անձնավորած կերպարները կինոյում հասնում են 80-ի: Ինչքան ուժ ու կորով է պետք այսքան ստեղծագործելու համար: Մեծ կատակերգուի հաջողությունն այնքան մեծ էր, որ նրա մասնակցությամբ ֆիլմերը հաճախ շարունակվում էին հանդիսատեսի պահանջով: Այդքան ծիծաղ ու քրքիչ պատճառելով հաղիսատեսին՝ հետաքրքիր է, թե ինչպիսի՞ն էր եղել նա կյանքում: Կարծում ենք, շատ կատակերգակ դերասանների պես, նա էլ չէր կարող ուրախ մարդ համարվել...



...Ռուս Յուրի Նիկուլին: Նա կինո եկավ կրկեսից և նկարահանվելու տարիներին անգամ չլքեց կրկեսը: Մոտ 50 տարի նա նկարահանվեց կինոյում: Ահա մեր առջև են Վարպետի անձնավորած կերպարները՝ հարբեցողներ, տխուր աչքերով թափառաշրջիկներ, տարօրինակ մարդիկ: Բայց երբ նա հայտնվում է էկրանին, մենք ծիծաղում ենք: Դրա պատճառը այն մեծ անկեղծությունն է, որ ունի արտիստը և այն ներարկում է իր հերոսի յուրաքանչյուր խոսքին, շարժմանն ու արարքին: Ավելին՝ այդքան լուրջ մնալով հանդերձ, անընդհատ ծիծաղեցնում է: Ծիծաղեցնում է նույնիսկ այն ժամանակ, երբ պարզապես լուռ է, պարզապես քայլում է, պարզապես երևում է էկրանին: Այդ առավելությունը նա ձեռք է բերել կրկեսում: Նիկուլինը գիտի դադարի, հնչեբանգի, ժեստի արժեքը: Եվ այդ վարպետության հետ մեկտեղ, արտիստը հատուկ նիկուլինյան հմայք ունի, որով և անմիջապես նվաճում է հանդիսատեսին: «Կիթառով աղջիկը» ֆիլմից մինչև «Ծերունի ավազակները» նրա խաղացած դերերը ռուսական կինոժապավեններում տարբեր են: Միայն թափառաշրջիկների, խաբեբանների, գողերի չի անձնավորել դերասանը: Բայց ինչ էլ որ խաղացել է, նրա անձնավորած բոլոր կերպարները կարելի է տիպական համարել: Ինչպես է Նիկուլինը հասել այս հաջողությանը՝ միայն ճշգրիտ հնչեբանագետությամբ, խոսուն դադարներով, հատուկ շարժումներով, թե՛ յուրաքանչյուր խոսքի մշակվածությամբ: Բայց վարպետության օրենքներից բացի կան նաև ուրիշ բաներ՝ կյանք, մարդկային կենսագրություն, աշխատասիրություն, անցած ճանապարհներ և սուր դիտողականություն...

ՀՐԱՉՅԱ ԶԱՆԻՎՅԱՆ
Թատրոնի և կինոյի պետական
ինստիտուտի ուսանող

Գրականություն.

1. Кинословарь, Москва, 1983.
2. Советская кинокомедия, Москва, 1962.
3. Համաշխարհային էկրանի կատակերգուները, Երևան, 1989:



ՀԱՅ ՄԱՍՈՆ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ

Պետք է խոստովանել, որ իրականում դժվար թե գտնվի մեկը, ով լավատեղյակ է մասոնության բուն գործունեությանը: Տարբեր լեզուներով հրատարակվել են տասնյակ գրքեր, սակայն դրանցից ոչ մեկը չի կարող հավակնել ամբողջականության: Ավելին՝ կարծում ենք, որ նույնիսկ շարքային մասոններն իրենք չգիտեն իրենց կազմակերպության լիակատար համապատկերը, և պատճառը հույժ գաղտնիությունն է: Բնական է ենթադրել, որ մենք էլ ենք սխալվում, բայց մեր գործը հեշտ է, մենք կշարադրենք այն, ինչ հաջողվել է պարզել:

Մասոնությունը կամ ֆրանկմասոնությունը (ֆրանսերեն՝ franc maçon-ազատ որմնադիր) մի ուղղություն է, որ սկիզբ է առել Անգլիայում և իր գոյության մասին առաջին անգամ հայտարարել է 1717-ին: Այդ շարժման կազմակերպչական կառուցվածքը, որքան խորհրդավոր, նույնքան էլ պատմագիտական բացատրություն ունի: Միջին դարերում առանձնացված դաս՝ եղբայրություն էին կազմում որմնադիրները, որոնք կրում էին իրենց արհեստավորական պիտույքները՝ մուրճ, կարկին, կապարալար, գոգնոց և այլն: Նրանք ունեին ներքին բաժանում. առաջին խմբի մեջ մտնում էին ճարտարապետները, երկրորդի մեջ՝ ճարտարապետներին օգնող շինարար-վարպետները, երրորդի մեջ՝ աշակերտները կամ սկսնակները:

Այս աստիճանակարգը պահպանվել է դարեր շարունակ: Աշխատանոց կոչվող միավորումներն ունեին հետևյալ բաժանումները. առաջին՝ 1-18-րդ աստիճաններում ընդգրկում են սկսնակները, երկրորդ՝ 19-29-րդ աստիճաններում ներգրավված են օգնականները, որոնք ձևավորում են ժողովներ, իսկ բարձրագույն՝ 30-33-րդ աստիճանների մասոնները կազմում են փիլիսոփայական խորհուրդները: Այստեղ է գտնվում մասոնության վերնախավը՝ ղեկավարությունը, նրանք են՝ Կադոշ-ասպետը, Մեծ տեսուչը, Արքունական գաղտնիքների գերագույն իշխանը և Գերագույն ընդհանուր Մեծ տեսուչը:

Միմյանց ճանաչելու համար մասոնները գործածում են հատուկ արտաքին նշաններ՝ ձեռքսեղմման, դիմախաչի, բառային ակնարկների, առարկաների հետ վարվելու կերպեր, որոնք միայն իրենց է հայտնի: Միմյանց գաղտնաբար աջակցելով՝ մասոնները ձեռք են բերում բարձր դիրք, համբավ, պատիվ, ճանաչում, ֆինանսական գրեթե անսահմանափակ հնարավորություններ: Սակայն պահանջվում է երկու բան՝ խիստ գաղտնապահություն, որը խախտելու համար հաճախ հատուցում են սեփական կյանքով, և բացարձակ հնազանդություն:

Սա մասոնության արտաքին կազմակերպչական կողմն է: Իսկ ո՞րն է գաղափարական էությունը:

1723-ին անգլիացի բողոքական Անդերսոնը գրեց մասոնության առաջին կանոնադրությունը՝ Կանոնագիրքը կամ Սահմանադրությունը, որտեղ շարադրված է իմաստային հենքը:

Հռչակված է երեք սկզբունք՝ Ազատություն, Հավասարություն, Եղբայրություն, այսինքն՝ մասոնությունը փո-

խօգնություն, սոցիալական համերաշխության ընկերակցություն պիտի լիներ և իր սկզբունքների կենսագործմանը հասներ կրթության, գիտության, արվեստների և, առհասարակ, մարդկային զարգացման առաջընթացի շնորհիվ: Սակայն ինչպիսի՞ և ի՞նչ տարբերություն կա մյուս, ասենք՝ կրոնական կամ աշխարհական այլ մարդասիրական գաղափարախոսությունների միջև: Տարբերությունը վիթխարի է, էական և հիմնված է **ժխտողականության, մերժողականության** վրա:

Առաջին ժխտվում է քրիստոնեությունը, մարդն է հռչակվում Աստված, Աստված փոխարինվում է մարդով, իսկ «Ազատ որմնադիր» բառակապակցության առաջին բառով ազատությունն ու անկախությունը վեր է շեշտվում ամեն ինչից, այդ թվում նաև քրիստոնեությունից: Պաշտպանվում է սատանան, որը դատապարտվել և «բռնաճնշվել» էր Աստծո կողմից: Պատահական չէ, որ մասոնության առաջնային թշնամին կաթոլիկ եկեղեցին է:

Երկրորդ՝ հիմնովին **մերժվում է ազգային պատկանելության գաղափարը**. քանի որ մարդն Աստված է, ապա պետք է լինեն մարդկային հանրակեցություններ, այլ ոչ՝ ազգեր: Եվ զուր չէ, որ «Մարդկային իրավունքների ընկերակցություն» (La Ligue des Droits de l'Homme) ստեղծումը նախաձեռնեց Ֆրանսիայի մասոն Լյուդովիկ Թրարիոն:

Երրորդ՝ լիովին **բացառվում է հայրենիք հասկացությունը** և ուղղակիորեն հայտարարվում **«Մասնուկների հոգիներից պետք է ջնջել հայրենիքի գաղափարը»**:

Չխորանալով մյուս հարակից, հարաբուխ դրույթների մեջ՝ մենք ներկայացրեցինք գաղափարական մի քանի հիմնասյուն: Սակայն, դժվար չէ կռահել, որ այս ամենն ուղղակիորեն քաղաքական նպատակներ է հետապնդում, և այդ մասին 1926-ի հոկտեմբերին պարզորոշ գրել է «Վիեննայի մասոնական թերթը»՝ **«Մասոնությունը՝ իբրև համաշխարհային միացյալ մասոնություն, պատմություն կերտող մի հսկայական ազդակ է: Մասոնությունը մի աշխարհակերտ գաղափար է, իսկ աշխարհակերտ ամեն մի գաղափար ինքնին քաղաքականություն է»**: Ակնհայտ է նպատակը՝ ստեղծել հայրենիքից ու խղճից զուրկ անհատներից բաղկացած միջազգային մի կազմակերպություն, որը գաղտնաբար կծգտի համաշխարհային տիրապետության: Եվ հարկ է խոստովանել, որ մասոնությունը վիթխարի հաջողություններ է արձանագրել. մասոններ են եղել (և են) համաշխարհային քաղաքականության, գիտության, մշակույթի, արվեստի, գրականության և այլ ոլորտների հարյուրավոր ականավոր գործիչներ: Նրանցից մեկն էր Հայոց ցեղասպանությունն իրականացրած երիտթուրքերի գաղափարախոս, ծագումով հրեա Նազըմը:

Մենք քանիցս ասել և շարունակելու ենք կրկնել, որ հայերս առանձնահատուկ ենք, և դա ոչ թե ազգային եզակիության գաղափարի տարփողում է, այլ՝ պատմական իրողություն: Ստորև, առանց մեկնաբանությունների, կթվարկենք հայ մասոններին, և կհամոզվեք, որ



նրանք խախտել են մասոնության բոլոր վերոհիշյալ հիմնադրույթները: Նրանք ունեցել են ազգային պատկանելություն, հայրենիքի զգացողություն և խիղճ: Մեր համոզմամբ՝ մասոնությանն անդամագրվելը կատարվել է հատուկ դրոշմամբ՝ թուրքական հալածանքներից ու կոտորածներից փրկվելու համար:

Հայերի մեջ մասոնությունը սերմանեցին ակնեցիները: Ակնը գտնվում էր Եփրատի աջ ափին՝ Խարբեղարի ու Երիզայի միջև: Հարուստ, բերրի ու վաճառաշահ քաղաք էր, որտեղից արտահանվում էր մորթի, կաշի, կտորեղենի զանազան տեսակներ և այլ ապրանքներ: Մինչև ցեղասպանությունը Ակնը ուներ շուրջ 20 հազար բնակիչ, որից 10 հազարը՝ հայ: Եղեռնից հետո այնտեղ ոչ մի հայ չմնաց:

Պոլսոս ամիրաների զգալի մասը ակնեցիներ էին, օրինակ՝ Տատյանները, ճեզայիրյանները, Միսաքյանները, Արքիստյանները, Չեբազյանները, Սեջբասյանները և այլք:

Ակնեցի էր նաև **Հարություն Հակոբիկի Նորատունկյանը (1845-99թթ.)**, որը 1857-60 թվականներին մասնակցեց արևմտահայոց Ազգային սահմանադրության ստեղծման աշխատանքներին: Ահա այս մարդն է հանդիսանում մասոնականության հայ առաջնեկը: Նա Պոլսում հիմնեց «Սեր» անվամբ ազատ որմնադիրների օթյակ, որի անդամները դարձան Տիգրան Յուսուֆյանը, Հարություն Մերեմզուլիս, Միքայել Խորասանճյանը, Հովհաննես Խորասանճյանը, Սիմոն և Միքայել Մաքսուդները, Կարապետ Շահնազարյանը, Տիգրան Բաբաղանյանը, Անտոն Հաճյանը, բժիշկ Քյուտիպյանը, Ասլանյան փաշան և այլք:

Հ. Նորատունկյանի կրտսեր որդին էր **Միքայելը**, որը հետագայում դարձավ տնտեսական գիտությունների դոկտոր և Ռուսիայի ազատ որմնադիրների միության նախագահ: Իսկ ավագ որդին՝ նշանավոր **Գաբրիել Նորատունկյանն էր**, որն, իբրև թե 1912-13թթ. եղել էր Թուրքիայի արտոգործնախարար, իսկ Պողոս Նուբարի հրաժարականից հետո՝ Լոզանի կոնֆերանսում գլխավորել է ազգային պատվիրակությունը:

Հովհաննես Գամպերյանը ծնվել է 1970-ին՝ Սիվրի-Հիսարում, իսկ նախնական կրթությունը ստացել է Մարզվանում: 1980-ին ավարտել է «Անատոլիա» քոլեջը, ապա Սամսունում հիմնել՝ այլուրի արտադրության ընկերություն: Հետագայում արտագաղթել է Մանչեստր և զբաղվել է առևտրով: Հինգ տարի եղել է տեղի Ընդհանուր ժողովի ատենադպիրը, հանդիսացել է ՀԲԸՄ Մանչեստրի մասնաճյուղի հիմնադիրներից: 1907-ին Հովհաննես Գամպերյանն անդամագրվել է մասոնությանը, իսկ 1914-ին ձեռնադրվել՝ Ազատ որմնադիրների օթյակի լիազոր: 1915-ից անգլիական կառավարությունում ներկայացրել է անգլիափայլ համայնքի շահերը, եռանդուն մասնակցություն է ունեցել Հայ դատը պաշտպանելու և Հայոց ցեղասպանությունը դատապարտելու գործում:

1880-ականներին՝ Բաթալիայում (Ջակարտա) վաճառականությամբ զբաղվող **Ծատուր Ա. Թովմասյանը**

ոչ միայն մասոն էր, այլև՝ ազատ որմնադիրների օթյակի Մեծ վարպետ:

Գրիգոր Թոփագյանը ծնվել է 1892-ին՝ Կոնիայում: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի ազգային վարժարանում, ապա ընտանյոք տեղափոխվել է Պոլիս, հաճախել՝ Բագրատունու առևտրական վարժարան և Օսմանյան առևտրական բարձրագույն վարժարան: Աշխատել է «Աստարճյան» հայտնի վաճառատանը, իսկ 1921-ին գաղթել է ԱՄՆ: Հաճախել է Նյու Յորքի «Վաշինգտոն իվինգ» բարձրագույն դպրոց, որից հետո զբաղվել է արևելյան գորգերի առևտրով: Գ. Թոփագյանը Կեսարիայի վերաշինված միության վարչության և ամերիկյան ազատ օթյակի անդամ էր:

Արթուր (Անդրանիկ) Մեսրոպի Աղաջանյանը ծնվել է 1907-ին՝ Կարսի Օրթա Քիլիսե գյուղում: 1917թ. ընտանիքը գաղթում է Ռուսահայաստան, և Անդրանիկը սպասավորություն ու խաշնարածություն է անում: 1922-ին ընտանյոք տարագրվում են ԱՄՆ, և Լոս Անջելեսում Արթուրը զբաղվում է ինչով պատահի: 1936-ին նա Արտեզիայում գնում է մի կալվածք, հիմնում խոզաբուծական ֆերմա, որը 1960-ականներին Կալիֆոռնիայում ամենաշահութաբերն ու խոշորագույնն էր: Ապա իր ազգակիցներ Ջեյ Առաքելյանի և Ջանի Գաբրիելյանի հետ Մոնտեբելլոյում հիմնում է «Գերֆիլդ» բանկը: Ա. Աղաջանյանն էլ էր մասոն:

1920-ին Կիլիկիայում կար 275.000 քրիստոնյա, որից 150.000-ը՝ հայ: 1920-ի մայիսի 15-ին նրանց ներկայացուցիչները կոչ են հղում դաշնակից պետություններին, ինչպես նաև Հռոմի Պապին, և ամբողջ քաղաքակիրթ աշխարհին, որպեսզի Կիլիկիան չհանձնեն թուրքերին: Այդ կոչը ստորագրել էին Աղանայի հայոց հոգևոր առաջնորդ վարդապետ Ասլանյանը, Ամբողջական Հայաստանի պատվիրակու-

թյան ներկայացուցիչ Ս. Տամատյանը, Աղանայի բողոքական հայոց երեց Կ. Հարությունյանը, կաթոլիկ հայոց առաջնորդ Պ. Քեքիլյանը, Աղանայի ազգային միության նախագահ բժիշկ Մնացականյանը, Աղանայի քաղաքական ժողովի ատենապետ Կ. Քեշիշյանը, Աղանայի հույն օրթոդոքս հասարակության ներկայացուցիչ Ս. Կարա-Յուսուֆ-օղլին, Ա. Կ. Սիմեոն-օղլին, դոկտոր Ժ. Ռանիելիդեսը և Գ. Գրիգորիսդեսը, Կաթոլիկ սիրիացիների պատրիարքարանի փոխանորդ Էլ- Խուրի Փիլիպպոսը, Կիլիկիայի քաղղեացիների ընդհանուր հովիվ հայր Ժոզեֆ Թյֆենկճին, Աղանայի ասորիների պատրիարքարանի փոխանորդ հայր Ժանը, Աղանայի Սիրիական ազգային միության փոխնախագահ Ժանը, **Աղանայի մասոնական օթյակի համաժողովի կողմից՝ Ավետիս Ավետիսյանը:**

Շարադրելով այս տեղեկությունները՝ մենք կցանկանայինք ուշադրություն հրավիրել ևս մի հանգամանքի. հայ մասոնները խախտել են ազատ որմնադիրների հիմնադրույթներից ևս մեկը՝ զաղտնապահությունը: Այլապես՝ որտեղի՞ց պիտի իմանայինք նրանց գոյության մասին:

ԽԱՉԱՏՈՒՐ ԴԱԴԱՅԱՆ



Ազատ որմնադիրների օթյակի անդամ Հովի. Գամպերյանը:



ԿԱՐԳՈՒԿԱՆՈՆ-ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾՈՒԹՅՈՒՆ

(Արդյունաբերականացումը ազգային և հասարակական կյանքի զարգացման իղեալ. XIX դարի 70-90- ական թվականներին)

Շիրվանզադեն, ինչպես ասվեց, իր ստեղծագործությամբ ոչ միայն հետազոտում է հասարակագիտական, տնտեսագիտական և բարոյագիտական ըմբռումներ և կարգեր, այլև հակված է դրանով նպաստելու ներկա պատմական իրականությունը քառսից կազմակերպված ու զարգացող հասարակության վերածելու բնականոն ընթացքին՝ դրապաշտ փիլիսոփաների հետևողությամբ առաջնային կարևորություն տալով տնտեսության արդյունաբերականացմանը: «Թե տնտեսական միջոցները կազմում են մարդկային կյանքի ընդհանուր բարելավվածության գլխավոր հիմունքը, այդ այնքան պարզ և անհերքելի մի միտք է, որ կարող է մանրամասն բացատրության: Եվ այդ միտքը որքան իրավացի է անհատական կյանքի վերաբերմամբ, նույնքան նորան պիտի իրավացի համարել և ամենայն մի ժողովրդի կամ հասարակության վերաբերմամբ: ...Սակայն գլխավոր և մեզ հետաքրքրող խնդիրը նորանում է, որ «լավ կամ վատ գոյություն» ասելով, մենք աչքի առաջ ունենք ոչ միայն այդ գոյության նյութական կողմը, այլև նորա մտավոր և բարոյական կողմերը: Աղքատ և հարուստ և սոցալից ամենայն մեկը առանձնապես ապրում է յուր տնտեսական դրության հատուկ ավանդույթներով (տրադիցիա) և շատ ժամանակ այդ դրության փոփոխությունը մարդու բարոյական կյանքը ենթարկում է արմատական փոփոխությունների:



Բայց այսպես թե այնպես մարդը, իբրև կենսական պայմանների մի խաղալիք, ամենից ավելի հպատակված է տնտեսական պայմաններին, վասն որո նշանավոր է սոցա կատարած դերը մարդու բարոյական կյանքի վերաբերությամբ: Այս տեսակետից նայելով՝ մենք կարող ենք տեսնել, որ այն ժողովուրդը, որի տնտեսական կյանքը չունի մի որևէ սիստեմատիկական ուղղություն, նորա բարոյական կյանքը և չի կարող ունենալ որոշ ուղղություն: Կանոնավոր տնտեսական կյանք ասելով՝ մենք հասկանում ենք այն կյանքը, երբ ժողովրդի նյութական միջոցները, բխելով մի հայտնի աղբյուրից, բաժանվում են այդ ժողովրդի անդամների կամ դասակարգերի մեջ պարզ և որոշյալ քանակությամբ, երբ աղքատությունից դեպի միջակ կարողություն և, վերջապես, դեպի հարստություն կամ հայտնի աստիճաններ, որոնցով մարդիկ կամ բարձրանում են հետզհետե, կամ ցած իջնում: Այդպիսի կյանքում աղքատությունը և հարստությունը՝ իբրև իրար հակասող տարրեր, դրված լինելով հայտնի շրջանների մեջ, ամենայն մեկը

դոցանից բարոյական մարդկանց կրթում է յուր սեփական ավանդությունների համաձայն: Այդ մենք տեսնում ենք այն ազգերի շրջանում, որոնց մեջ հասունացած է կամ գործարանական արդյունաբերությունը, կամ երկրագործական արդյունաբերությունը, նամանավանդ այնտեղ, ուր առաջինը հասել է վերին աստիճանի զարգացման, ինչպես, օրինակ՝ Անգլիայում» (9, 419):

Այստեղ արդեն արդյունագործը արդյունագործ է, բանվորը՝ բանվոր, արհեստավորը՝ արհեստավոր, և ամեն ոք ունի յուր բարոյական օրենքների հայտնի կոդեքսը: Թեև մարդկության բախտավորության համար մտածող իմաստասերների կարծիքով այդպիսի տնտեսական կյանքը չէր կարելի երջանիկ համարել մի ժողովրդի համար, ըստ որում, նա ունի յուր հայտնի չարիքները ևս, բայց մյուս կողմից նա անկանոն տնտեսական կյանքի դեմ ունի այն առավելությունը, որ մարդկանց տալիս է հայտնի, որոշ բարոյական և մտավոր գույն» (9, 419):

Ըստ դրապաշտ հասարակագիտության կատարելության ուղին ապագայում հասցնում է ներդաշնակ հասարակական հանրակեցության, ինչը նվաճվելու է հասարակության արդյունաբերականացմամբ: «Իսկ **ապագան** այն ժամանակ միայն կարող է ապահոված համարել, երբ արդյունաբերությունը դուրս բերելով նահապետական դրությունից կորվի գիտական անհրաժեշտ հիմունքների վրա» (9, 416): Այս իրողությունը բարեշրջելու է նաև հանրության բարոյական և հոգեբանական կացությունը: «Ես պնդում եմ, որ ներդաշնակ հասարակական կոոպերացիան ենթադրում է այլոց ազատության մասին հոգածությունից բխող ինդիվիդուալ ազատության սահմանափակում, և որ հասարակության բոլոր անդամների համար հավասար ազատության օրենքը հենց այն օրենքն է, որին ենթակա է արդար անհատական արարքը և արդար հասարակական կարգը» (Г. Спенсер, Основания этики, т. 5, с. 4):

«Չարստությունը տրված է մարդուն երջանիկ ապրելու համար,-գրում է Շիրվանզադեն,- մարդիկ աշխատում են նյութական միջոցներ ձեռք բերել իրանց կյանքը բախտավորեցնելու նպատակով, և դա ամենքի համար պարզ մի միտք է, որին ոչ ոք չի կարող հակառակել: Սակայն այստեղ կա մի նշանավոր կետ, այն է, թե ինչպե՞ս են հասկանում մարդիկ երջանիկ ապրուստը: Երջանիկ կյանք ասված բանը մի պայմանավոր խնդիր է, որի այս կամ այն տեսակ հասկանալը կախված է անհատի կամ հասարակության կրթությունից, մտավոր հասկացողությունից և, վերջապես, բնական առանձնահատկություններից: Մեկի բախտավորությունը մյուսի համար կարող է դժբախտություն համարվել, մեկի վնասը կարող է մյուսին օգուտ բերել և ամենայն ոք



երջանիկ գոյությունը բացատրում է յուր հասկացողության համաձայն:

Բայց կա կյանքի մի եղանակ, որը անպայման վնասակար է համարվում: Ահա այդ եղանակով է վարում յուր կյանքը Բաքվի տեղացիների այն ահազին մեծամասնությունը, որը երեկ մի կտոր հացի կարոտ էր, իսկ այժմ նշանավոր հարստության տերն է, նամանավանդ՝ երիտասարդությունը: Վերջինը ներկայացնում է բարոյապես ընկած և ֆիզիկապես քայքայված մի դասակարգ, որը նշանավոր չարիքներ է սպառնում մեր ապագա սերնդին: ...Որքան վաճառականը անկիրթ է, անփորձ է, նույնքան նա հակված է դեպի օտար կյանքի վնասակար կողմերը, քան թե լավը: Վերաբերելով այդ միտքը Բաքվի տեղացի վաճառականներին և նավթարդյունաբերողներին, որոնց տնտեսական դրությունը, նավթային արագ զարգացման շնորհիվ փոխվել է հանկարծակի, մենք գտնում ենք մի ահազին տարբերություն սոցա և ուրիշ քաղաքների վաճառականության մեջ» (9, 419, 420):

Շիրվանգաղեի պատկերացմամբ՝ մարդու **բնական նախադրյալների, բարոյական կամքի և իմացականության** շնորհիվ է անհատի էությունը և գործունեությունը օրգանապես կապվում ազգի, հասարակության գոյաբանությանը և համամարդկային կատարելության առաջընթացին: Նման գիտակցությունն է լոկ սերում պատմական անհատի ինքնահաստատման և կեցության բարոյական անկյունաքարերը: Բարոյականությունը դրապաշտները ձևակերպում էին՝ որպես «**արդար անձի**» վարքի օրենք: Նրանց հիմնավորումով «բարոյա-

կան զգացում» ձևավորող սիմպատիայի մտավոր արգասիքը՝ արդյունքները, ստացվում են մարդկանց մոտ այն ժամանակ, երբ դրանք կարգավարժվում են, կանոնակարգվում են **հասարակական կյանքով**, և որ բարոյական զգացումի հետ մեկտեղ, նրանցում ծագում է վերացարկված պատկերացում **արդար մարդկային հարաբերությունների** մասին, ինչը գնալով ավելի է հստակվում հասարակության կատարելագործման հետ մեկտեղ: «Մարդու բարոյական բնության փոփոխությունը, ինչը ծագում է սոցիալական կյանքում կարգապահության աստիճանական անդադար ներգործությամբ, հասարակարգի առաջընթացի գլխավոր անմիջական պատճառն է» (Г. Спенсер, О причинах моего разногласия с О. Конттом, с. 235):

Հասարակական կյանքի փոխներգործությամբ մարդու էության մեջ կատարվում է անհատական առանձնահատկությունների հաշտեցում հասարակական պահանջների հետ ու այդ կերպով վերջնականապես ձեռք է բերվում առավելագույն անհատական ազատության և հասարակական գործառական դերի այնպիսի հավասարակշռություն, որի դեպքում յուրաքանչյուրը բավարարելով իր անձնական կյանքի կարիքները, միաժամանակ ինքնական աջակցում է հասարակության մյուս անդամների կարիքների բավարարմանը: Այս իրողությամբ են մարդկային հարաբերությունները կազմակերպվում՝ որպես «արդար մարդու» հասարակական վարք:

ԱՐԱՍ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀԱՆԳՐՎԱՆԻՑ ՀԵՌՈՒ



Ես վկա եմ, իսկ դու դատավոր...
Գրել եմ, ինչ պատմել է Վարդանը,
Գրել եմ, ինչ պատմել է Գրիգորը,
Բայց չեմ կարող գրել այն, ինչ պատմել է Հովիկը,
որովհետև նա է տաղանդավորը:

Մեկնեցի Իտալիա, այցելեցի Ֆլորենցիա, մտա մի փոքրիկ խանութ՝ թանկարժեք նվեր գնելու: Պատահաբար հայացքս ընկավ թղթերի կույտի տակից դուրս ելած այն մեկին, որի վրա Արարատի պատկերն էր:

Երբեք չէի տեսել Արարատը, բայց գիտեի նրա մասին

ծնվածս օրվանից: Նայեցի նրա տանջահար պատկերին մեծ ցանկությամբ ու հարցրի.

- Ի՞նչ ես անում այստեղ, հեռու այսպես քո հանգրվանից: Լսեցի նրա տխուր փափագող ձայնը, որը տարակուսանքի մեջ էր:

- Ես չեմ կարող պատասխանել քեզ և չեմ կարող վերադառնալ քեզ մոտ:

Վերցրեցի այն, դրեցի բարձր տեղ: Գիտակցությանս ու քնիս մեջ անընդհատ մտածում էի այն անհայտ և երջանիկ ճամփորդի մասին, ով անցել է բազում դարեր առաջ ու տեսել է Արարատը, հիացել ու պատկերել մի փոքրիկ կտորի վրա:

Յուրաքանչյուր առավոտ հարցնում եմ իմ Արարատին.

- Մինչև ե՞րբ ես մնալու հեռու այսպես քո հանգրվանից:

Յուրաքանչյուր երեկո էլ Արարատն է ինձ հարցնում.

- Մինչև ե՞րբ ես մնալու հեռու այսպես քո հանգրվանից:

ԱՐՄԵՆ ԹԱՐՅԱՆ (Լիբանան)
Եգիպտական «Արև» ամսագիր,
մայիս, 2005թ.
Արաբերենից թարգմանեց
ԱՐՇԱԿ ԳԱՐՐԻԵԼՅԱՆԸ



ՀԱՅ ՈԳԻՆ ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐՈՒՄ



**Հայերը հայու-
թյունը դեռ ուսում-
նասիրած չեն...
Կոստան Ջարյան**

Հայ իրականու-
թյան և ընդհանրա-
պես մշակույթի
պատմության մեջ
Կոստան Ջարյանի
դերի արժևորումը այ-
սօր ավելի քան ժա-
մանակի պահանջն է:
Քանզի տասնամյակ-

ներ շարունակ անտեսվելով՝ նրա գրական-մտածողա-
կան վաստակը, ըստ էության, չի մասնահատկվել հայու-
թյան ոգեկրողի կազմավորման և զարգացման մի ողջ
ժամանակաշրջան: Այն, ինչ գրականության, պատմա-
գետների խնդիրն է: Բայց մինչ այդ, հանուրի ուշադրու-
թյունը պետք է բևեռել նրա ստեղծագործության այն
շերտերի վրա, որոնց ամպայությամբ Կոստան Ջարյան
գրողը, գրագետը, իմացաբանը հայ ոգու և համաշխար-
հի իմացականության զուգակշռումներում հայտնաբե-
րում է մինչ այդ մեր իմացության մեջ չգրանցված,
չփաստված իրողություններ: Ըստ այդմ՝ **«Մեր ժողովր-
դի փրկությունը նրա հոգեկան զարգացման մեջ է,
նրա մտավոր վեհության և մեծության մեջ, ինչ-որ
առաջ կարելի էր ձեռք բերել շատ դժվարին աշխա-
տանքով: Այն բոլոր ազգերը միայն պիտի կարողա-
նան ապրել, գալիք սարսափելի դեպքերի միջոցին,
որոնք ինքնուրույն և ուժեղ մշակույթ ունեն, որոնք
մարդկության համար անհրաժեշտ տարր են կազ-
մում, որոնք կարող են իշխել ուրիշների վրա իրենց
մտքի հոգու զորությամբ... Հայ ազգը պետք ունի թե՛
զենքով կռվող հերոսների և թե՛ մտավոր ազնվական
դասի: Այն, որ ես անվանում եմ Արարատյան մար-
դը»:**

Արդ, Կոստան Ջարյանի քննարժան ժողովածուները
(«Նավատոմար», 1999թ., «Դեպի Արարատ», 2001թ.,
«Միացյալ Նահանգներ», 2002թ.) մեծապես գալիս են
լրացնելու այն բացը, այն վերապահ վերաբերումն ու
չհասկացված լռությունը, որ ցարդ կար մեծագույն գրո-
ղի, մտածողի նկատմամբ: Քիչ է ասել, թե արժանին պի-
տի հատուցել հիշյալ բոլոր ստվարածավալ ժողովա-
ծուների աշխատասիրողին Յուրի Խաչատրյանին, ով
կազմել, համահավաքել, առաջաբանել, ծանոթագրել է
գեղագիտորեն և տեսաբանորեն օժտել, ամբողջացրել և
չափազանց ներկայանալի է դարձրել (գիտականորեն)
զարյանական մտածումն ու միտքը, մի հանգամանք, որ,
ինչու՞ չէ, որոշակի օրինակելիություն է «հուշում» ընդ-
հանրապես անցյալի արժեքների վերահրատարակու-
թյան ժամանակ, հոգածության ճիգ ու ջանքի «մղում»
ամեն մի աշխատասիրողի: Նույն գնահատալից վերա-
բերումնքի է արժանի «Սարգիս Խաչենց» հրատարակ-
չությունը՝ ժողովածուների հրատարակման, ինչպես

մաս տեխնիկական խնամյալ, բարձրորակ հրատարակ-
չական աշխատանքի համար (միջանկյալ նշենք, որ Կ.
Ջարյանի «Երկրներ և աստվածներ» նոթագրաշարի
առաջին մասը՝ «Սպանիան», տպագրվել է 2002-ին Յու.

Խաչատրյանի աշխատասիրությամբ, «Նաիրի»
հրատ.): Այս ամենով ակներև է դառնում, որ իրականաց-
վել է չափազանց արժեքավոր մի հրատարակություն,
այն, ինչ գրողի կողմից ժամանակին փայլալավել-մտաի-
ղացվել է՝ կյանքի կոչելու: Եվ, ի բարեբախտություն մեզ,
այսօր այն իրագործված և հրամցված է, մնում է զարյա-
նական «իրականությունների և տեսիլների» համընթա-
ցությամբ ոգեկոչել մեր անցյալի և ապագայի մշտար-
թուն, առաջնորդ ոգուն՝ մինչ այդ ապրելով Ջարյանի
հողվածների, փորձագրությունների, օրագրերի, ճամ-
փորդական նոթագրությունների ողջ վայելքն ու իմա-
ցականությունը:

«Նավատոմար»-ում գետեղված («Ծառը իր արմատն
է փնտրում» (1910-22թթ.), «Արարատյան դաշտում»
(1922-24թթ.), «Մտքի հավիտենական ճամփորդը»
(1924-61թթ.), «Վերջին նավակայան» (1961-69թթ.)) բա-
ժիններում ամփոփված մտածումները, խոհերը, մեմա-
խոսությունները, որոնք ժամանակին տպագրվել են
արևմտահայ, սփյուռքյան և հայաստանյան մամուլում,
արժարժուն են տարբեր խնդիրներ: Երբեմն մեզ քաջա-
ծանոթ երևույթների զարյանական մեկնաբանություննե-
րը, առավելս են պարզորոշում, առարկայացնում գրողի
գեղագիտատեսաբանական վերաբերմունքը այս կամ
այն իրադարձության, երևույթի նկատմամբ: Պատմա-
քաղաքական իրադարձությունների կիզակետում նույն-
պես Ջարյանը «արդարությունը տարփողելու և ճշմար-
տությունը հաստատելու համար» բարձրաձայնում էր
«իր լեռներուն կատարեն և իր դաշտերուն խորերեն»,
քանզի ոգու կենսունակության խնդիրն առաջնային հա-
մարելով, գրողը, և մանավանդ Ջարյանը, որ հայ անց-
յալի և իր ժամանակի խորագիտակ ուսումնասիրողն ու
ոգեկիրն էր, չէր կարող չարձանագրել, չարժևորել. **«Որ-
պեսզի ժողովուրդները նորոգվեն, որպեսզի նրանք ի
վիճակի լինեն շարունակել բովանդակությունով
լեցված մի կյանք և բեռ չլինեն ուրիշների վրա,
նրանք պետք է անդադրում ներշնչվեն անցյալով: Ի
վերջո, «Հայ ոգին և Հայաստանը ներկա են այնտեղ,
ուր ներկա է հայ հավաքական գիտակցության փր-
կարար հրամայականը»:**

«Հայության կոչումը»՝ խոհ՝ գրված դեռևս 1950-ա-
կան թվականներին, քննարժանվում է հատկապես այն
առումով, որ զարյանական ՄԻՏՔԸ թափանցում է «եր-
կու հսկա աշխարհների՝ մշակութային արևելքի և քա-
ղաքակրթական արևմուտքի» հոգեբանական ներշը-
տերում, հայտնաբերում հայության դիմադրողունակ
ինքնությանն առընչակից և դրանից ուղղակիաբար
բխող ճշմարտություններ կամ գոնե հետագա ընթացքի
որոնումներում չխարխալիլու ազգային գիտակցում.
**«Պիտի կառչե՞նք եվրոպական քաղաքակրթության,
թե՞ առաջին պլանի վրա կանգնած՝ արևելյան մտքի
նոր ճառագայթումի և նոր ստեղծագործական թա-**



փին հետ պիտի հանդիսանանք ներուժ՝ մշակութային կենտրոն:

Պիտի կրկնե՞նք մեր նախնիների սխալը, թե՞ գիտակցորեն, հերոսաբար պիտի կարողանանք՝ հակառակ մեզ շրջապատող անողորմ պայմաններին՝ դրսևորել մեր ազգային ԵՍ-ը (ընդգծումը Ջարյանին է - Ա. Ա.), ընդունել պատմությունից մեզ վիճակված խորհրդավոր, հակատրամաբանական ճակատագրական դերը»:

Ընդհանրապես «Նավատոմար» ժողովածուի գերակշիռ մաս կազմող օրագրություններում և ճամփորդական նոթերում՝ Ջարյանի գրողական-ինաստասիրական-ինացաբանական դրսևորումներում, հնագույն աշխարհի արվեստն ու մշակույթը մշտաբար զուգահեռվում են իրենց արտահայտչական կարելիություններով: Ասել է, թե Ջարյանը կարևորելով ավանդույթի, ժառանգորդության դերը, երբեք չի սահմանափակվում հնի, անցյալի արժեքների սուկական ջատագովմամբ, այն, ինչ չափազանց ուսուցողական լինելով ենթադրում է նոր ժամանակների մշակույթների ստեղծման, արժևորման պահանջներ: Այնուհանդերձ, «Ավանդույթը պահել, չի նշանակում հինը պահել կամ ընդօրինակել: Իսկական արվեստի մեջ անցյալը երբեք չի կրկնվում, Միքելանջելոն կամ Կորաջիոն չեն կրկնվում, Մոցարտը չի կրկնվում: Ավանդույթ՝ նշանակում է կենտրոնացում և ինքնամփոփում, հանգստություն, լրջություն և ազնվություն: Ավանդույթ՝ նշանակում է

Ավանդույթը պահել, չի նշանակում հինը պահել կամ ընդօրինակել: Ավանդույթ՝ նշանակում է կենտրոնացում և ինքնամփոփում, հանգստություն, լրջություն և ազնվություն:

պահել այն արժեքները, որոնք դարաշրջաններից ու դարոցներից դուրս հավիտենական բնույթ են կրում: Ավանդույթ՝ նշանակում է նաև խուսափել ժամանակի տենդազին սատանայական պահանջներից, որոնք արվեստագետին պարտադրում են խեղկատակի, մարզական մրցումներ շահողի դիրք բռնել, գլխի վրա ման գալ և տիրող իշխանությունների կամ կուսակցությունների թևերի մեջ ոստոստել:

Ավանդույթի «փոխներթափանցում ոգին» և կարողությունը նաև «մարդկայինն մարդկայինը վերադարձնող հոգեկանություն է ու նրա արդարացված դրսևորում»: Հայության պարագայում, նախ և առաջ. «Մեր պատմության, մեր տառապանքների, մեր ցավերի իմաստը կարելի է հասկանալ առանց այդ լուսաբանության (հայի գոյակերպը զարյանական բնորոշմամբ մի տեսակ համարժեք է «իրականությունը այլափոխության ենթարկող ուժի» կենսամղիչի - Ա. Ա.): Հայը կոչված է պահելու մարդկային գերագույն արժեքները և ընդհանուր անկման շրջանին, կյանքը վերալուսավորելու և արդարացնելու այդ արժեքներով: Արդ, ո՞րն է, ի վերջո, այդ «ճակատագրական նպատակը», երբ «մարդկային անհատը, որ կորցնում է իր կապը հոգեկան աշխարհի հետ և նաև օրգանական աշխարհի, դառնում է զոհը իր սեփական տեխնիկայի: Մեքենան և զենքերը սպանում են իրենց ստեղծողներին: Ապրելու համար մարդ պետք է գտնի իր հարաբերությունները Աստծո հետ, ուրիշ մարդկանց հոգեկան կյանքի հետ և երկրի հետ: Ինչը նշանակում է, որ նա պետք է վերագտ-

նի ինքն իրեն, իր խորությունը, իր արմատները վերի և վարի աշխարհների հետ»: Խնդրահարույց է դառնում «հոգևոր ազատության» իրագործումը:

Այս ամենով, Ջարյանը՝ «ստեղծագործության կարողության և մտքի հարստացման, ընդլայնման» ջատագովությամբ ապրողն ու իմաստասիրողը, մշտաբար իր փոթորկալից կյանքի ողջ ընթացքում չափազանց կարևորել և հետևողական է եղել ամենայն ԱԶԱՏՈՒԹՅԱՆ նկատմամբ, այն, ինչ կատարելապես և ըստ ամենայնի էր ներշնչում գրողին. **«Միջերկրական քաղաքակրթությունը մեծ էր, որովհետև նա հիմնվել էր և զարգացել ազատության հիմքերի վրա, երբ ավելի ուշ նա այդ ազատությունը կորցրել էր, առաջ էր եկել մշակույթի հսկա անկում»:** Ջարյանը դեմ էր մշակութամտածողական ամեն անկման և տարտղումի: Նրա համար կարևորը, արժեքավորը առաջընթացն ու շարժումն էր՝ հայի բանականության անկորուստ ու նաև ազնվաշունչ արտացոլանքը: Այդ իսկ պատճառով նաև չափազանց անհրճաբավ որոնումի, հայտնաբերումի պատրաստ և պարտ. **«Մենք մինչև այսօր դեռ լրջորեն ուսումնասիրած չենք մեր ժողովրդի տոնախմբությունները, ծեսերը, կրոնական և այլ սովորությունները: Բեմ հանենք այդ ամենը, միամտորեն, առանց իմաստակության, առանց անմիտ ու օտար ձևակերպումներ մտցնելու: Ու ականջ դնենք, պարզ սրտով, պարզ երգերին՝ ըմբռնելու համար մեր օրերի գերագույն իմաստը»:**

Այդ իմաստի ըմբռնումն ու վերարտահայտումը հոգևոր ճամփորդության ընթացք և շարժումակություն էր ենթադրում: Այն, ինչ զարյանական բնորոշմամբ՝ «Դեպի Արարատ» խորքային բովանդակավորումով էր առարկայական: Ընդհանրապես «Դեպի Արարատ» ժողովածուում, ուր ի մի են բերված գրողի Բեյրութի Ամերիկյան համալսարանում կարդացած, ցարդ անտիպ «Արվեստի դասընթացը», նաև մտածումներ, նավատոմարներ, հարցազրույցներ, որոշապես և առարկայորեն ընդլայնում են Ջարյանի՝ իբրև համաշխարհային արվեստի խորագիտակ տեսաբանի և ուսումնասիրողի իմացականության ոլորտները: Հատկապես ճարտարապետությանը վերաբերող մտածումներում, հնագույն աշխարհի «քարեդեն տեսիլքներ» ու ժամանակներն իմաստավորող մարդկային մտքի հոգևոր պոռթկումներ: Սրանք խնդիրներ են, որոնց Ջարյանը չէր կարող չանդրադառնալ, ավելին՝ «ճարտարապետության, իբրև հավաքական գործակցության» արդյունքը չդիտել արվեստի համաժամանակայնության մտաըմբռնումներով: Այս առումով, հատկապես հիշարժան են Ջարյանի դիտարկումները հայկական ճարտարապետության նախաքրիստոնեական և հետագա շրջանների վերաբերյալ: Ընդհանրացնելով ճարտարապետության ոգեկանության և գեղագիտական ճանաչողության ինքնագոհության բնույթն ու բնութենականությունը՝ իբրև «համառոտված տիեզերք», Ջարյանն արձանագրում է. **«Արվեստը ճակատագիր է: Սա այն մեծ կենսական ուժն**



է, որ անգոյութեանը հակադրում է գոյութեան կատարյալ, անմիջական, անկեղծ արտահայտութեանը: Բնագանցական անորոշութեան, հաճախ քառսի դեմ նա պայքարում է կառուցանելով: Նա ազատագրում է անհատներին և ժողովուրդներին՝ պարտադրելով նրանց այն ղեկավար արժեքները, որոնցից նրանք զրկված էին: Արվեստի միջոցով է, որ մարդկային անհատը՝ չնայած նրան սպասող անխուսափելի մահին, ճիգ է անում, միացնել աստղերը շարժման բերող կշռույթին և այդ կշռույթը վերածել հավիտենության մոտեցող ներդաշնակ ձևերի: ...Հայ ժողովուրդը այն հազվագյուտ ժողովուրդներից է, որոնք կարողացել են իրենց մտքի և հոգու բարձրագույն արտահայտությունները ճարտարապետել կատարյալ կերպով և այդ ճարտարապետությունը մտցնել ընդհանուր մարդկության այն շտեմարանի մեջ, որով հայությունը պահպանել է իր դիմագիծը»:

Ընդհանրապես հայ ճարտարապետության միջազգային համբավով է պայմանավորված հայի «ներքին հոգեկան կառույցը»: Հայ ճարտարապետության կրոնական լինելու զարյանական ընկալումը, ինչ-ինչ առումներով, «գերազանցապես երկրաչափական» լինելու հանգամանքով է մեկնաբանվում: «Երկրաչափական բոլոր ձևերը շարժական են և խորհրդանշուն են շարժում և կենդանություն»: Իսկ շարժունության, կյանքի շարունակումի խնդիրն ուղղակիաբար առնչվում է հայ մտքի հետ, ըստ այդմ. «Հայ կրոնական մտքի համար եկեղեցին հավաքատեղի չէ, այլ այն վայրը, ուր աստվածայինը միանում է մարդկայինին, Աստված մարդկայնանում է, մարդը՝ աստվածանում»:

Ընդհանրապես Կոստան Զարյանի գրական, մտածողական ժառանգության մեջ Հայի (հաճախաբար հավաքականության խորքային առումներով) գոյակերպի և ինքնության խնդիրները չափազանց հետևողականորեն են քննարծանվում: Նույնիսկ, եթե ոչ ուղղակիաբար, ապա կրողի ընդհանրացումներում հողի զարկերակի տրոփն ու «զգայարանների առկայությունը» չեն կարող չհիշեցնել, որ պատումի կենսունակությունը բոլորովին այլ է, մի տեսակ բորբոք-տաքարյուն, դրանով իսկ

Հայ կրոնական մտքի համար եկեղեցին հավաքատեղի չէ, այլ այն վայրը, ուր աստվածայինը միանում է մարդկայինին, Աստված մարդկայնանում է, մարդը՝ աստվածանում:

նպաստելով տեղանքի աշխարհագրական և հոգեբանական-ճանաչողական պատկերման իսկությանը: Այս նկատառումը վերաբերում է «Երկրներ ու աստվածներ» շարքին՝ ընդհանրապես: Հիշյալ շարքի երկրորդ մասը կազմող «Միացյալ Նահանգներ»-ը (1930-ական թվականներին շարունակաբար տպագրված «Հայրենիք» ամսագրում), գրողի «թափառումների ու մտածումների արգասիք լինելով՝ ունի պատմաճանաչողական, մշակութափնտախնայողական անժխտելի նշանակություն: Այստեղ քաղաքակրթության բազմակողմ ու բյուրաշերտ խնդիրները չեն կարող վրիպել «Արարատյան ցեղի վերածնվող» նկարագրի տեր գրողի կողմից: Եվ ինքնախոսության զարյանական այս ընթացքը «բացարձակ համար ներկա է միանգամից».

«Իմաստնացած կյանքի անբավականությունը ապրողի համար, արարումը ստեղծագործումը, արդեն ԵՍ-ի սահմաններ չճանաչող ինքնաճանաչումը միայն կարող է վերահաստատել աստվածային գոյության ըմբռնողության և անըմբռնողության, հասանելիության և անհասանելիության բազմիմաստությունը: Այլ խոսքերով. «Մեր կյանքի բոլոր վայրիվերումներում մենք ուրիշ բան չենք, եթե ոչ բացարձակ կյանքի մի փայլակ».

մի կամք-զաղափար, որ որոնում է իր լրացուցիչը, իր բովանդակությունը և լիությունը, իր պատճառաբանությունը, և որ միայն կարող է գտնել կատարելապես անհատականացած և միացած կյանքում: Այդ անհատականացած կյանքը՝ «կյանքի ամբողջականությունը, որ դուք այս վայրկյանին հաստատում եք մասնակի կերպով, Աստված է:

Միայն Աստծո միջոցով, ես կարող եմ հասնել ինձ»:

Այսպիսին է «իր տեսակի մեջ անհավասար» Կոստան Զարյանը: Իր ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ մշտաբար մեզ ազդարարող. «Ես հայությունը չեմ կարող երևակայել առանց Հայաստանի: Պատմական ճշմարտություն է, երբ հայը կորցնում է իր հողը, տարրալուծվում է, փոշիանում: Տոկում է մի սերունդ, երկու, ապա չքանում է և անհայտանում»:

ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ

ԱՄՆ ԿԱՐՈՂ Է ԱՊԱՇՐՋԱՓԱԿԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Թուրքիայի վարչապետ Ռ. Էրդողանի և Հայաստանի արտգործնախարար Վ. Օսկանյանի վաշինգտոնյան հանդիպումները վերջնականապես հստակեցրին հայ-թուրքական հարաբերություններում առկա փակուղային կացության հաղթահարման հնարավոր ուղիներ:

Ինչպես Հայաստանը, այնպես էլ Թուրքիան երկկողմ հարաբերությունների կարգավորման խնդիրը տեղից շարժելու համար դիմեցին Վաշինգտոնի աջակցությանը, իսկ Եվրոմիությունը իր հերթին ընդգծված ձևով կոշտացրեց

մեր հարևանի հանդեպ իր որդեգրած դիրքորոշումները. պարզ դարձավ, որ հայ-թուրքական փակուղին հաղթահարելու խնդիրը ներկայումս ունի ընդամենը մեկ լուծում, որը և ամբողջովին Վաշինգտոնի ձեռքում է:

Ռ. Էրդողանի հայտարարությունը թե, իբր, հայ-թուրքական սահմանի բացումը կապված է հայկական զորքերը Ղարաբաղից դուրս բերելու խնդրի հետ, իրականում քարոզչական նպատակով ձեռնարկված ինքնարդարացման պարզ փորձ էր:



ՀԱՅՈՑ ԲԵՐՂԵՐԸ... ԿԱՔԱՎԱՔԵՐՂ

**«Եթե դուք այս վանքերի տեղը, որոնցով լիքն է մեր երկիրը, բերդեր շինեի՞ք...»:
Րաֆֆի**

Հավիտենության խորհուրդով լեցուն իրենց անդորրությամբ հանկարծ վեր են ցցվում առջևդ ու անշարժանում մտատանջ: Իմաստալից մի լռություն կա թառած նրանց բարձունքներում, որ ակնապիշ նայում է անհարցախույզ հորիզոնին: Թվում է՝ հսկա մի քարե դյուցազներգություն է մագլցում երկինք, ալիքվում ու քարանում...

Ասում են, որ ոգեղենացած այս տեսարաններն իրենց մեջ տևականության անսահման ուժն ունեն ամբարած, և խորհրդավոր ծալքերի մեջ ճակատագրի գերագույն գաղտնիքն ունեն ծածկագրած:

Հայոց բերդերը նաև կանչ են, մարմնացած կանչ՝ ուղղված ողջ հայությանը: Այն հնչում է դարերի խորքից և արձագանքվում՝ մեր գոյության ողջ ընթացքում, դժբախտաբար՝ լսելի լինելով միայն քչերին...

Հայոց բերդերի վրա ճակատագրի դրոշմից գատ կա և Հայ ոգու արարող դրոշմը, որը համրացած քարերին լեզու է տալիս ու դարձնում՝ ոգեղեն պատգամ...

Ազատ գետի ձախակողմյան վտակին՝ Գեղամա լեռնաշղթայի հարավային փեշերից սկիզբ առնող Միլլի գետակի Ուղտուակունք և Քաջառու վտակների միջև, մի լեռնագոտի է ձևավորվում, որն աստիճանաբար այս վտակների միախառնման տեղից բարդբարդվելով լայնանում և ձգվում է դեպի արևելք՝ Գեղամա լեռներ: Լեռնագոտին, չնայած ձորերի վրա ուղղահայաց կախված ժայռերի սարսուզազրու տեսարանին, նմանապես գեղատեսիլ է ու մի տեսակ վեհություն ներշնչող: Ուղտուակունք գետի աջ ափին երբեմնի Աստղածորի բարձունք կոչվող (որի ձորակի գլխին կանգնած է Գրիգոր Խաչբալյանի հուշարձանը, տես 2, էջ 64) բարձրադիր վայրում, գտնվում է Իմիրգիկ հնավայրը՝ հին ու համեմատաբար նոր ժամանակների հուշարձանների համալիրը (մոտակայքում գտնվում են Գեղայր բերդ - Կաքավաքերդի ավերակները, XIII դ. Սբ. Աստվածածին եկեղեցին, հինգ հնագույն վիշապակոթող, գերեզմաններ, խաչքարեր և այլն), որը թուվա Մեծօփեցու կողմից հիշատակվում է Վանստան: Ահա այս հրաշալիքներով լեցուն վայրում էլ գտնվում է Կաքավաքերդը (Գեղայր - Քեղայր բերդ), որն իր տեղակայմամբ, մի հսկա արժվաբույն է հիշեցնում:



Դեպի բերդ գնացող միակ ուղին մեղ, երկինք խոյացող ուղղահայաց ժայռերի տակով է անցնում: Ուվատովայի բնութագրմամբ. «Նույնիսկ տեղական ձիերը, որ բոլորովին վարժ էին լեռնային ճանապարհներին, մեղ արահետի շատ տեղերում դժվարությամբ էին վեր բարձրանում» (3, էջ 66): Բերդ տանող ուղու մասին ճշգրիտ և պատկերավոր նկարագրություն է թողել Գարեգին Հովսեփյանը. «Ճանապարհը խիստ զառիվեր է և անցնում է մեղ կիրճով, բարձրաբերձ ժայռերի տակով, որտեղից բխում են նոր աղբյուրներ և սարից եկած առվակի հետ խառնվում: Բերդի պարիսպներն ընկած են հյուսիսարևելյան կողմում, որտեղ գտնվում է և դարպասը: Պարսպի հաստությունն է 2.20մ, իսկ դարպասի մոտ ավելի հաստ՝ 2.60մ, բարձրությունը այժմ՝ 8.15մ, բայց կարող էր և ավելի բարձր լինել: Հյուսիսային բուրգերը ութն են, նրանց բարձրությունը՝ տասը մետրից ավելի. բուրգերից ոմանք մերթնում նախասեն-

յակներ ունեն (դարան), (հավանաբար զինյալների համար), մեջը բոլորակ սենյակ՝ Անիի նման, և փոքր լուսամուտներ: Բերդի հյուսիսային անկյունում՝ դարպասի մոտ, մի վիմափոր եկեղեցի կա՝ վեմ քարով, դռան ճակատին՝ խաչ: Բերդի արևմտյան կողմում է միջնաբերդը, որի երեք սենյակները նկատելի են, իսկ չորրորդի մեջ հոր կա՝ քար ու կրով շինած և երեսը ծեփած: Նկատելի են և ուրիշ շինությունների հետքեր: Պարիսպը շինված է սրբատաշ, գորշ և կարմրավուն քարերով, հիշեցնում է Անիի պարիսպները և Հավուց Թառի Ամենափրկիչ վանքը» (2, էջ 65):

Գ.Հովսեփյանի հիշատակած «վիմափոր եկեղեցին» ավելի շուտ մի փոքրիկ մատուռ է, որի մեջ ազատորեն կարող են կանգնել և մոմ վառել միայն երկու հոգի: Ավելացնենք, որ բերդը, երեք կողմից շրջապատված լինելով բնական խորխորատներով ու հսկայական ժայռերով, մնում է անմատչելի: Միայն չորրորդ կողմից է, որ հնարավոր է մոտենալ բերդին, որն էլ հենց պարսպապատված է: Ամենաբարձր աշտարակը գտնվում է դարպասի մոտ, ուր և պատը ամենահաստն է:

Բերդն իր կառույցով այնքան մերդաշնակ է տեղանքին, նրա ձևերին և նույնիսկ գույնին, որ թվում է, թե այն բնական շարունակությունն է ժայռակոփ լեռան և նրա միջից է դուրս եկել: Բերդի հյուսիսային պարսպի անմիջապես դիմաց՝ անդնդախոր կիրճի վրա, բացվում են քարանձավները (որոնց մասին չկարողացանք որևէ տեղեկություն գտնել և անկարող եղանք բարձրանալ այնտեղ):

Մինչ օրս ընդունված է, որ մեր մատենագիրներից Հովհ. Դրասխանակետցու և Ստ. Օրբելյանի կողմից հիշատակված Գեղայր բերդը կամ Կաքավաքերդն է (այդպես են այժմ կոչում բերդը տեղացիները՝ տարածքում շատ կաքավներ լինելու պատճառով) կամ Դարադալան: Սակայն, իրականում, Հովհ. Դրասխանակետցու և Ստ. Օրբելյանի հիշատակած Գեղայր բերդը՝ տարբեր բերդեր են և չեն կարող վերաբերվել միևնույն բերդին: Պատճառներից մեկն այն է, որ Դրասխանա-



կերտուցու հիշատակած բերդը գտնվում է Մազազ գավառում, որը իր մեջ չի ընդգրկել Գառնո տարածքը, ինչպես նշել է Ղ. Ալիշանը (1. էջ 333-391):

Գառնո տարածքը (ներառյալ՝ Կաքավաբերդը) ընդգրկվել է Կոտայքի գավառում. Ղուկաս Ինժինյանի տված տեղորոշումն ավելի ճիշտ է: Իմ հետազոտությունների արդյունքում պարզեցի, որ Դրասխանակերտուցու հիշատակած Գեղայո բերդը, իրոք, Ղարաղալան է (ոչ պատահաբար բերդի տեղանքից 8-10 կմ վրա գտնվում է Գեղամա բարձունքը, որից էլ ծագել է բերդի անվանումը): Ստ. Օրբելյանի հիշատակած Գեղայո բերդը Կաքավաբերդն է, որը Գառնի ավանից գտնվում է 12 կմ հեռավորության վրա: Օրբելյանը՝ նկարագրելով Գառնու մոտ Իվանե Աթաբեկի առաջնորդությամբ հայ-վրացական միացյալ զորքերի և Ատրպատականից Հայաստան անցած Խորեզմի Մուհամմեդ շահի որդու՝ Ջալալեդդինի (1220-31թթ.) զորքերի միջև տեղի ունեցած ճա-

կատամարտը, և Իվանեի զորքերի պարտությունը, նշում է, որ Իվանեն կարողացել է նահանջել և ապաստանել Գեղե անրոցում, որն էլ, ամենայն հավանականությամբ, այսօրվա Կաքավաբերդն է:

Կաքավաբերդի հիմնադրման, ինչպես և ավերման մասին ոչ մի տեղեկություն չունենք: Բերդի քարերի և Հավուց Թառի վանքի քարերի նմանությունից կարելի է ենթադրել, որ այն ևս նորոգվել է Գրիգոր Մագիստրոս Պահլավունու կողմից 1020-ականներին: Կարելի է ենթադրել, որ այն կործանվել է 1679 թվականի երկրաշարժից, որից հետո չվերականգնվելով՝ մնացել է այնպիսին, ինչպիսին է այժմ:

**ՍՄԲԱՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԵՊՂ պատմության ֆակուլտետի ուսանող**

3. Գ. - Փոշու մեջ թաղված մեր բոլոր ճանապարհների վրա խորհրդավոր ու հողաշեն քանի բերդեր կան մոռացված: Անհրաժեշտ է, որ հաղորդակցության եզրեր փնտրենք և նրանց հետ կառուցենք մեր Նոր բերդը՝ բացված աշխարհին իր ինքնահատուկ ու տևական կշռությով...

Գրականություն.

1. Ղևոնդ Ալիշան, Այրարատ բնաշխարհի Հայաստանեաց, Վենետիկ, 1890թ.,
2. Գարեգին Հովսեփյան, Խաղբանյանք կան Պռոշյանք Հայոց պատմության մեջ, մասն Ա, Վաղ., 1972թ.,
3. Материалы по археологии Кавказа, т. XIII, М., 1916г.

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԵՐԻ ԳՊՐՈՑ
ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍՈՒՄ**



Պատմական ուրեմ ձևավորված սփյուռքում հայապահպանության և հայ մշակույթի տարածմանը նվիրված գործի ցայտուն օրինակը՝ Վարդան և Սիրանուշ Գևորգյանների Լոս Անջելեսում հիմնադրած «Միջազգային պարերի դպրոցի» գոյությունն է, որի 10-ամյա հոբելյանը լրանում է այս օրերին:

Այսօր արդեն ակնհայտ է, որ հայ ժողովրդի ավելի քան երկհազարամյա մշակութային ժառանգության պահպանման, զարգացման և տարածման գործում նշանակալից դեր է խաղացել Վարդան և Սիրանուշ Գևորգյանների «Միջազգային պարերի դպրոցը», որի հիմնադրման 10-ամյակը հայ պարավեստի իսկական

նվիրյալների ճշմարիտ գործունեության ամենավառ ապացույցն է և գրավականը:

Իր հարցազրույցներից մեկի ժամանակ Վարդան Գևորգյանն ասել է. «Իբրև արուեստագետ ես ուզում եմ ծառայել բոլոր հայերին, առանց խտրության: Ծնունդն եմ արուեստագետ, այդպես էլ կը մնամ...»:

Համաշխարհային լայն ճանաչում ձեռք բերած մեր հայրենակիցների պարի դպրոցը մշտապես սերտ առնչությունների և մշակութային կապերի մեջ է եղել Հայրենիքի հետ, նպաստել մշակութային կապերի ամրապնդմանն ու զարգացմանը: Հայաստանի Ազգային պարավեստի միությունը իր հազարավոր անդամների անունից սրտանց շնորհավորում է Վարդան և Սիրանուշ Գևորգյաններին դպրոցի հիմնադրման հիշարժան տարեկիցի կապակցությամբ և մաղթում նրանց նորանոր հաջողություններ՝ ի փառս հայրենիքի և հայ մշակույթի:

Հայաստանի Ազգային օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում հուլիսի 13-ին, 14-ին և 20-ին տեղի կունենան պարախմբի հոբելյանական տոնական ելույթները:

ՈՒ ՆԱԻՐՅԱՆ ԱՂՋԻԿՆԵՐԻ
ՀԵՋԱՃԿՈՒՆ
ՊԱՐՆ ԵՄ ՍԻՐՈՒՄ...



ՊԱՐՆ Է ՈՐՈՇՈՒՄ
ԱԶԳԻ ԶԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ
ԱՍՏԻՃԱՆԸ





საგაქონიძორო